

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/
ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

Արմեն Ասատրյան

«Քաղաքացիական հասարակություն» կատեգորիայի իմաստավորումն
իրավունքի գերակայության լույսի ներքո..... 3

Ռաֆայել Վարդանյան, Արմեն Շուքրյան

Ռոմանագերմանական (մայրցամաքային) իրավական ընտանիքի ընդհանուր
բնութագիրը և առանձնահատկությունները 11

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО**

Տիրուհի Ասլանյան

Մոր և մանկան շահերի պաշտպանության միջազգային և ներպետական իրավական
նորմերի վերլուծություն 17

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/ADMINISTRATIVE LAW/
АДМИНИСТРАТИВНОЕ ПРАВО**

Նորայր Ավագյան

Առանձին տեսակի վարչական վարույթների իրավականության ընդհանուր
չափորոշիչները..... 23

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

Մանե Կարապետյան

Աշխատանքային պայմանագրի լուծումը՝ աշխատողի կողմից զբաղեցրած
պաշտոնին մասնագիտական ունակությունների անբավարարության պատճառով
չհամապատասխանելու հիմքով..... 34

Лусине Тадевосян

Проблемы обращения взыскания на заложенные исключительные права должника
при процедуре банкротства в РА и РФ 42

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/
ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС**

Արա Ջոհրաբյան

Դատական քննության ժամկետները պատվի, արժանապատվության և գործարար
համբավի պաշտպանության գործերով 53

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

Կարապետ Սմբարյան

Մի քանի նկատառումներ՝ ՀՀ իրավական համակարգ ներդրված իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ 60

Մարթա Մելիքսեթյան

Բռնության ենթարկված երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների և խնամակալության և հոգաբարձության մարմինների համագործակցության կատարելագործման ուղիները..... 68

Ադելինա Սարգսյան

Ժամանակակից կենսաբժշկական տեխնոլոգիաների քրեաիրավական կարգավորման անհրաժեշտության որոշ հիմնահարցեր..... 75

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/ УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

Ազատ Բագրատյան

Արտավարության փաստաթղթերի վերաձևելու օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների հեռանկարները 85

Նաիրա Շահինյան

Բացառման կանոնի բացառությունները ոչ իրավաչափ ձերբակալման համատեքստում 92

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/ МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

Արմեն Հայկյանց

Դատարանների կողմից օտարերկրյա օրենքի բովանդակության պարզաբանման մի քանի գործնական հարցեր.....100

Գոռ Հովհաննիսյան

Եվրոպական իրավունք (մաս II) – իրավունքի աղբյուրներն ու իրավաստեղծումը միութենական իրավունքում.....108

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներ 118

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/ТЕОРИЯ
ГОСУДАРСТВА И ПРАВА**

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-3>

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի առաջին տեղակալ,
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության
ու պատմության ամբիոնի դասախոս,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

ARMEN ASATRYAN
*First Deputy President of the RA Chamber of Advocates,
Lecturer at YSU Chair of State and Law Theory and History,
Candidate of Law, Associate Professor*

АРМЕН АСАТРЯН
*Первый заместитель председателя Палаты адвокатов РА,
Преподаватель кафедры теории государства и права и истории,
К.ю.н., доцент*

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ
ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ
ՆԵՐՔՈ**

**UNDERSTANDING THE CATEGORY «CIVIL SOCIETY» UNDER THE LIGHT
OF THE RULE OF LAW**

**ОСОЗНАНИЕ КАТЕГОРИИ «ГРАЖДАНСКОЕ ОБЩЕСТВО» В СВЕТЕ
ВЕРХОВЕНСТВА ПРАВА**

Իրավունքի գերակայությունն որպես հիմնարար սկզբունք էական ներգործություն է թողնում հասարակության, նրա կազմակերպական և գործառույթային կողմերի վրա: Այդ ներգործությունն այնքան հեղափոխական էր ու ազդեցիկ, որ ուշ միջնադարից սկսած փիլիսոփայական իրավական մտքի լավագույն ներկայացուցիչներն առաջ քաշեցին հասարակության նոր տիպի՝ քաղաքացիական հասարակության գաղափարը և զարգացրին այն: Այդ պահից սկսած առաջացավ մի հիմնահարց, որը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. «*Եթե իրավունք*

քի գերակայության սկզբունքի կայացումը և իրական հաստատումը հասարակական հարաբերություններում հասարակության պետական կառավարման համակարգը փոխակերպեց իրավական պետության, ապա ինչ էր այդ սկզբունքի ազդեցությունը հասարակության և դրա էությունն արտահայտող հայեցակարգի վրա»:

Առաջին հայացքից պատասխանը կարծես թե միանշանակ է՝ քաղաքացիական հասարակությունը, որը համարվում է իրավունքի գերակայության սկզբունքի գործողության հետևանքը, սակայն այս պարզ պատասխանը միանշանակ չէ, որովհետև հասարակություն և քաղաքացիական հասարակություն հարաբերակցության մեջ, քաղաքացիական հասարակության հայեցակարգում առկա են բազմաթիվ հարցեր, որոնք, հանգում են լրացուցիչ հարցադրումների, և ի վերջո, կասկածի տակ են դնում «քաղաքացիական հասարակություն» եզրույթը:

Այս գիտատեսական հիմնահարցի որոշ դրսևորումներ արտացոլված են գիտական գրականության մեջ, սակայն ընդամենը որպես բարձրացված հարցեր, առանց դրանց լուծումների: Փորձենք ամփոփել այդ հարցերը և առաջ քաշել դրանց լուծման մեթոդաբանությունը ոչ թե տնտեսական-սեփականատիրական, քաղաքագիտական և այլ դիրքերից, այլ իրավունքի գերակայության սկզբունքի լույսի ներքո: Այդ նպատակով, նախ անհրաժեշտ է վերլուծության ենթարկել.

ա) ի՞նչ է հասարակությունը,

բ) ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը,

գ) կա արդյո՞ք կապ այդ հիմնահարցերի և իրավունքի գերակայության սկզբունքի միջև:

Հասարակությունը տեսական գրականության մեջ բնորոշվում է տարբեր կերպ: Օրինակ՝ «հասարակությունը ոչ թե մարդկանց բազմություն է, այլ հասարակական հարաբերությունների ամբողջություն»¹: Մեկ այլ բնորոշման համաձայն՝ «հասարակությունը հասարակական հարաբերությունների ամբողջություն է, որի մեջ մտնում են մարդիկ իրենց կյանքի և գործունեության ընթացքում»²: Հեղինակների մեկ այլ խումբ հասարակությունը բնութագրում է որպես «մարդկանց փոխգործողության արդյունք, նրանց կյանքի որոշակի կազմակերպություն, ներքուստ հակասական օրգանիզմ, որի էությունը մարդկանց, նրանց միավորումների ու ընդհանրությունների բազմապիսի կապերն ու հարաբերություններն են»³:

Վ. Ն. Խրոպանյուկի բնորոշմամբ՝ հասարակությունը մարդկանց այնպիսի համակցություն է, որում անհատները կապված են միմյանց միջև մշտական և օբյեկտիվ բնույթ ունեցող շահերով⁴: Գրականության մեջ այդ բնորոշումներին համապատասխան առաջ են քաշվում նաև հասարակության հատկանիշները և գործառույթները: Մոտեցումներից մեկի համաձայն՝ հասարակությանը բնորոշ են հետևյալ հատկանիշները՝ ա) հասարակությունը բանական էականների՝ գիտակցությամբ և կամքով օժտված անհատների համակցություն է, բ) հասարակությունը միմյանց հետ համագործակցող մարդկանց միավորում է՝ իրենց պահանջմունքների բավարարման համար, գ) հասարակությունը մարդկանց կայուն և մշտական համագործակցություն է, դ) հասարակությանը բնորոշ է սոցիալական իշխանություն և հասարակական նորմերի համակարգ, ե) հասարակությունը սոցիոմշակութային համակարգ է:

Ընդունված է հասարակության կարևոր գործառույթները համարել. ա) մարդու վերարտադրությունը, բ) սեփական՝ հասարակական պահանջմունքների բավարարումը, գ) կյանքի ապահովման համար անհրաժեշտ միջոցների արտադրությունը, դ) սոցիալական կարգավի-

¹ Տե՛ս *Спиридонов Л. И.*, Теория государства и права. М., 1996, էջ 25:

² Տե՛ս *Сырых В. М.*, Логические основания общей теории права, т. 1, Элементный состав, М., 2004, էջ 486:

³ Տե՛ս Теория государства и права, Екатеринбург, 1996, էջ 27:

⁴ Տե՛ս *Хропанюк В. Н.*, Теория государства и права. / Под ред. В. Г. Стрекозова, М., 1999, էջ 33:

րումը⁵, ե) սոցիալական նորմերի ձևավորումը, դրանց ներմուծումը կյանք և պահպանությունը⁶:

Հետևաբար, հասարակության իմաստավորման բոլոր տեսական վարկածներում մնացած համակարգերի հետ միասին կարևոր տեղ է գրավում նրա սոցիալական կարգավորման համակարգը և ինչպես հասարակության արտադրական համակարգում տեղի ունեցած փոփոխությունները կարող են հանգեցնել հասարակության տիպի փոփոխության, այնպես էլ սոցիալական կարգավորիչների ներհամակարգային վերաձևումները կարող են հանգեցնել հասարակության մեկ տիպից մյուսին անցնելուն: Անշուշտ, հասարակության բոլոր ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունները փոխապայմանավորված են ու փոխկապված, ինչպես նաև միմյանց վրա փոխազդող:

Եվրոպայում XVII-XVIII դդ. ձևավորվեց հասարակության կարգավորման համակարգի աշխարհիկ հայացքը, որում առաջնային նշանակություն ձեռք բերեց իրավունքը: Այդ շրջանում կրոնը դադարեց լինել աշխարհայացքի համընդհանուր ձև, ինչպես նաև համընդհանուր կարգավորիչ և վերաձվեց մի կողմից սովորական գաղափարախոսության, իսկ մյուս կողմից՝ անձնական, մասնավոր հավատքի: «Աստծո ամենակարողության հավատը փոխարինվեց իրավունքի ուժի և հզորության, ցանկացած հասարակական բախում լուծելու նրա ընդունակության նկատմամբ հավատքի»⁷: Եվրոպայում տեղի ունեցող այս գործընթացները հետաքրքիր է մեկնաբանում եվրոպական իրավունքի պատմության հետազոտողներից մեկը՝ Է. Աններսը. «Նոր աշխարհայացքն իրավունքի նկատմամբ դրսևորվեց XVII դարի ազգայնական բնական իրավունքի ձևով, ինչը միաժամանակ և բնական իրավունքի ավանդույթների աշխուժացում էր, քանի որ եվրոպական ժողովուրդները այն ստացել էին որպես հեղինակության մշակութային ժառանգության մաս, և նաև ռացիոնալիզմի շրջանակներում նոր գաղափարախոսական ուղղության արտահայտություն էր: Բնական իրավունքը և նրա գաղափարախոսական հիմքերը դարձան այն ելակետը, որ արմատապես վերափոխեցին արևմտաեվրոպական հասարակական և իրավական կարգերն՝ օրենսդրության՝ որպես հիմնական մեթոդի օգնությամբ: Ռացիոնալիստական բնական իրավական մտածողությունը հակադրեց jus naturale humanorum (մարդկանց բնական իրավունքը) փաստորեն գործող իրավունքին, և կարողացավ դրանով տեսականորեն նպաստել բարեփոխիչների նորարարությանը: Ռացիոնալիստական բնական իրավունքն առաջ քաշեց ոչ միայն տեսական ելակետային սկզբունքներ, այլև կոնկրետ առաջարկություններ տարբեր ոլորտների բարեփոխման համար՝ սկսած միջազգայնից և պետական իրավունքից, մինչև քրեական և քրեադատավարական իրավունքը: Որպեսզի կարողանա դա իրականացնել, բնական իրավունքի դոկտրինը ստեղծեց հիմնարար օժանդակ մտահայեցողական կառույց նախասկզբնական հասարակական պայմանագրի մասին, որից դուրս էին բերվում ինչպես ընդհանուր սկզբունքային դրույթները, այնպես էլ կոնկրետ հարցերով գործնական եզրակացությունները»⁸:

Այսպիսով, նոր ժամանակաշրջանում հաստատված և կայացած հասարակություններն իրենց տիպով և էությամբ դարձան իրավական հասարակություններ՝ որպես իրավունքի գե-

⁵ Այս հատկանիշի տակ սովյալ մոտեցման կողմնակիցները հասկանում են հասարակական հարաբերությունների կարգավորում, որն անհրաժեշտ է մարդկանց կամքերը, արտադրության կառավարման, բարիքների բաշխման, անհատների ազատության չափի որոշման գործընթացում համաձայնեցնելու համար (տես Проблемы теории государства и права / Под. ред. Сырых В. М., М., 2008, էջ 123):

⁶ Տես Проблемы теории государства и права / Под. Ред. Сырых В. М., М., 2008, էջ 123:

⁷ Տես Абдулаев М. И., Права человека и закон. Историко-теоретические аспекты, СПб., 2004, էջ 41:

⁸ Տես Аннерс Э., История европейского права, М., 1996, էջ 216-219:

րակայության սկզբունքի գործողության հետևանք: Սկզբունք, որը սկզբնապես ձևավորվեց և իմաստավորվեց ռացիոնալիստական հասարակական-քաղաքական մտքի կողմից, իսկ, այնուհետև, կենսագործվեց կյանքում՝ դառնալով նոր հասարակության աշխարհակարգի հիմնասյուն, միջուկ: Այս ամենը բերում է եզրակացության, որ նոր ձևավորված հասարակությունն իր տիպով ու էությամբ իրավական հասարակություն էր, սակայն հասարակական-քաղաքական և փիլիսոփայական գրականության մեջ այն ստացավ «քաղաքացիական հասարակություն» անվանումը:

Որքանով էր ճիշտ և հիմնավոր նման հասարակությունը անվանակոչել «քաղաքացիական», փորձենք պարզել՝ վերլուծության ենթարկելով քաղաքացիական հասարակության հայեցակարգը:

Գիտության մեջ գոյություն չունի միասնական մոտեցում քաղաքացիական հասարակության հասկացության վերաբերյալ, ինչը հաստատում է դրա մասին բազմաթիվ բնորոշումների և հայեցակարգերի գոյությունը⁹: Բացի հայեցակարգային բազմանշանակությունից՝ այսօր արդեն բանավիճային է դարձել նույնիսկ «քաղաքացիական հասարակություն» եզրույթը, որն արդեն համարժեք կերպով չի արտացոլում իրական կապերն ու իրողությունները:

Այսպես, Ա. Ն. Գոլովիստիկովն արդարացիորեն նշում է, որ «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը, ներառելով իրենում զանազան համամարդկային արժեքներ, ձեռք է բերում ավելի ու ավելի իմաստային բազմազանություն: Դրանից ելնելով՝ Ա. Ն. Գոլովիստիկովը փորձում է քաղաքացիական հասարակություն հասկացությունն արտաբերել «հասարակություն» հասկացությունից և «քաղաքացիական» եզրույթից¹⁰: Այնուհետև, այս հեղինակը տալիս է «քաղաքացիական» (гражданский) եզրույթի ծագումնաբանությունը, որը գալիս է լատինական «civilis» բառից: «Civilis» եզրույթն իր տարածումը ստացել է հռոմեական իրավունքում, որից և տարածվել է բազմաթիվ իրավաբանական արտահայտություններում ու հասկացություններում: Ըստ Ա. Ն. Գոլովիստիկովի՝ «քաղաքացիական» եզրույթն ունի մի քանի հիմնական նշանակություններ, որոնցից են.

ա) քաղաքացիական եզրույթի իրավաբանական իմաստը, որը նշանակում է քաղաքացիների միջնագույքային հարաբերությունները և դրանց կարգավորումը քաղաքացիական իրավունքով: Այս դեպքում «քաղաքացիական» եզրույթն օգտագործվում է որպես ածական իրավաբանական հասկացությունների հետ՝ «օրենսգիրք», «դատավարություն», «հայց» և այլն: Ստացվում է, որ քաղաքացիական հասարակությունն այս իմաստով նշանակում է հարաբերությունների ամբողջություն, որը ներառում է մասնավոր սեփականությանը, գույքային և ժառանգական, ընտանեկան հարաբերությունները,

բ) «քաղաքացիական» եզրույթն ընդգծում է ռազմական-զինվորական և հասարակական կյանքի, ինչպես նաև քաղաքացիական և կրոնական կյանքի միջև տարբերությունները: Այստեղից էլ առաջացել են «քաղաքացիական ծառայություն», «քաղաքացիական իշխանություն», «քաղաքացիական ամուսնություն» (ի տարբերություն կրոնականի) հասկացությունները: Եթե առաջին իմաստը ինչ-որ կապ ունի քաղաքացիական հասարակության հայեցակարգի հետ, ապա այս իմաստներում չի նկատվում որևէ կապ այդ հայեցակարգի հետ,

գ) հիշյալ եզրույթը նշանակում է քաղաքացու բարոյաէթիկական նկարագիր, «իսկական» քաղաքացու բնութագրեր և դրանից բխող հետևյալ հասկացությունները. «քաղաքացիական դիրքորոշում», «քաղաքացիական ակտիվություն», «քաղաքացիական պարտք», «քաղաքա-

⁹ См Гражданское общество, правовое государство и право. / Государство и право, – 2002, N 1:

¹⁰ См Головистиков А. Н., Дмитриев Ю. А., Проблемы теории государства и права. М., 2005, էջ 693-694:

ցի»: Այս շատ տարածված արտահայտություններում որոշ չափով իրավաբանական անճշտություն կա: Բոլորի հիմքում ընկած է «քաղաքացի» հասկացությունը, սակայն որակական նկարագիրը վերաբերում է բոլոր անհատներին: Հետևում է, որ, ըստ էության, «քաղաքացիություն» կոչված հատկությամբ պետք է օժտված լինեն հասարակության բոլոր անդամները, այլ ոչ թե միայն քաղաքացիները: Մյուս կողմից արդի պետությունների բնակչությունը կազմված է միայն քաղաքացիներից: Նշանակում է, այս տեսանկյունից ևս «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը դառնում է խոցելի,

դ) «քաղաքացիական» եզրույթն որոշ դեպքերում կապված է քաղաքացիների բնակավայրերի հետ և հիմք է քաղաքային (քաղաքացիական) համայնք հասկացության ձևավորման համար,

ե) «քաղաքացիական» եզրույթն օգտագործվում է նաև մի շարք կոնֆլիկտային հասարակական իրավիճակներ նշելու համար, օրինակ՝ «քաղաքացիական պատերազմ», «քաղաքացիական անհնազանդություն», «քաղաքացիական հաշտություն», «քաղաքացիական համաձայնություն»: Կարծում ենք, որ այս դեպքում տեղին կլինեն «հասարակական» եզրույթի օգտագործումը, որն առավել ճիշտ կբնութագրեր ամեն մի երևույթ առանձին վերցրած: Օրինակ՝ «հասարակական դիմադրություն», այսինքն՝ հասարակության կողմից պետական իշխանությանը ցույց տրվող դիմադրություն,

զ) քաղաքացիական եզրույթն օգտագործում են նաև հասարակական ինքնագործունեության և ինքնակառավարման որոշակի ձևեր նշելու համար, օրինակ՝ «քաղաքացիական շարժում», «քաղաքացիական ֆորում», «քաղաքացիական նախաձեռնություն»: Ինչպես և վերևում, այստեղ քաղաքացիական եզրույթը հոմանիշ է «հասարակական» եզրույթի հետ:

Քաղաքացիական հասարակություն եզրույթը քննադատում է Վ. Ս. Ներսեսյանը: «Պատմականորեն ձևավորված բառակապակցությունը՝ «քաղաքացիական հասարակություն», որ նշանակում է հասարակություն պետության հետ տարբերությունով (մարդկանց ոչ քաղաքական հասարակություն) և հարաբերակցության մեջ, բացահայտորեն չի համապատասխանում իր արտահայտած իմաստին: Չէ որ քաղաքացիական հասարակությունը դա քաղաքացիների հասարակությունը չէ (քաղաքական սուբյեկտներ), այլ ընդհակառակը՝ մասնավոր անձանց (ոչ քաղաքական) ընդհանրություն, որոնք կրում են մասնավոր նպատակներ և շահեր: Քաղաքացիների համակցությունը քաղաքական համակցություն է, այսինքն (քաղաքական պետություն)՝ հասարակությունից տարբերակված պետություն: Տեղին է ասել, որ «քաղաքացիական իրավունքը» (որպես իրավունքի ճյուղ) դա ոչ թե քաղաքացիների, այլ մասնավոր անձանց իրավունք է»¹¹:

«Քաղաքացիական» եզրույթի թվարկված բնութագրերը ցույց են տալիս, որ «քաղաքացիական հասարակություն» ձևակերպումն արդեն հնացած, իմաստային տեսանկյունից խոցելի հասկացություն է և անհրաժեշտ է այն փոխարինել «իրավական հասարակություն» հասկացությունով, որն առավել համարժեք է արտացոլում նոր և նորագույն ժամանակաշրջանների հասարակությունների տեսական բնութագիրը, հատկապես որ XVII դարից սկսած մինչ օրս «քաղաքացիական» կոչված հասարակության սեփականատիրական կամիեզեյան իմաստը քայլ առ քայլ իր տեղը զիջել է հասարակության ավելի լայն հայեցակարգերին¹²:

¹¹ Տե՛ս Нерсесյан В. С., Общая теория права и государства, М., 1999, էջ 278:

¹² Արդի հասարակությունը, ի տարբերություն 17-18-19-րդ դարերի հասարակության, կրել է էական փոփոխություններ և այդ փոփոխություններն արդեն հիմք են տալիս կասկածելու դրա «քաղաքացիական» անվանմանը կամ էլ բուրժուական աճականը, հատկապես որ քաղաքացիական բառի հիմքում ընկած է գերմաներեն «burgerliche» բառը: Այս կապակցությամբ որոշ հեղինակներ առաջարկում են արդի հասարակությունն անվանել

Կատարված վերլուծությունը բերում է այն եզրակացության, որ արդի հասարակության տիպը ճիշտ է անվանել իրավական՝ պայմանավորված իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքով: Իրավունքի գերակայության հաստատմամբ հասարակությունը վերածվում է իրավական, ազատ, ինքնակառավարվող հասարակության, նրա ենթահամակարգերից մեկը՝ պետությունը, վերածվում է իրավական պետության, իսկ քաղաքական հարաբերությունները ենթարկվում են իրավունքի գերիշխանությանը: Իրավական հասարակության բջիջը՝ անհատը, ձեռք է բերում իրավական հավասարության վրա կառուցված իրավական էակի կարգավիճակ:

Իրավունքի գերակայության սկզբունքի ազդեցության ու գործողության արդյունքում ձևավորված արդի հասարակությունը քաղաքացիականի փոխարեն «իրավական հասարակություն» վերանվանելու օգտին են խոսում նաև քաղաքացիական հասարակության պատմականորեն գոյություն ունեցած և գոյություն ունեցող հայեցակարգերը: Քաղաքացիական կոչված հասարակության տիպն իրավական անվանակոչելու ամենահիմնավոր կոմպոնենտներից է, օրինակ՝ Է. Կանտի հայեցակարգը: Քննարկելով մարդկային բնույթի հակասական որակները՝ փառասիրությունը, անհաշտությունը (կռվարարությունը), միավորման ցանկությունը, ինչպես նաև համաձայնության գալու ձգտումը, Է. Կանտը գալիս է եզրակացության, որ գլխավոր ճանապարհը, որով հնարավոր է համակցել լուրջ քաղաքացիության ազատությունն այլոց ազատությունների հետ՝ քաղաքացիական հասարակությունն է՝¹³: Ըստ Կանտի՝ քաղաքացիական հասարակությունը կառուցված է հետևյալ ապրիորի սկզբունքների վրա.

- 1) հասարակության անդամի որպես մարդու ազատությունը,
- 2) անհատի հավասարությունն այլոց հետ՝ որպես հպատակ,
- 3) հասարակության անդամի որպես քաղաքացու ինքնուրույնությունը¹⁴:

Վերլուծության դեպքում տեսնում ենք, որ քաղաքացիական կոչվող հասարակության այս սկզբունքները հենց իրավական սկզբունքներ են, որոնք իրավունքի գերակայության գործողության հետևանքն են: Այս ամենը գալիս է հաստատելու, որ «քաղաքացիական հասարակություն» հասկացությունն ավանդաբար օգտագործվող հասկացություն է և լեզվական ու տեսական ճշգրտության տեսանկյունից անհրաժեշտ է օգտագործել «իրավական հասարակություն» բանաձևը, որն ավելի ճիշտ է արտացոլում իրերի դրությունը:

Արդի հեղինակները, որոնք փորձում են իմաստավորել «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը, իրենց մոտեցումներում մեծամասամբ օգտագործում են իրավաբանականացված չափանիշներ: Հեղինակների մի մասն քաղաքացիական հասարակության գլխավոր հատկանիշներից են համարում «իրավական, ժողովրդավարական հասարակություն» լինելը¹⁵: Այդ մոտեցումներից մեկի համաձայն՝ քաղաքացիական հասարակությունը բնութագրվում է որպես ազատ, ժողովրդավարական, իրավական հասարակություն, որ կողմնորոշված է դեպի մարդը, ստեղծում է իրավական ավանդույթների ու օրենքների համամարդասիրական իդեալների նկատմամբ հարգանքի մթնոլորտ, ապահովում է ստեղծագործական և ձեռնարկատիրական գործունեության ազատություն, ստեղծում է բարեկեցություն, մարդու ու քաղաքացու իրավունքների հաստատման հնարավորություն, օրգանապես մշակում է պե-

«սոցիալականացված» կապիտալիզմ, ընդգծելով պետության լայն զարգացած սոցիալական գործառնությունները և նմանաբնույթ հասարակական ինստիտուտները (տես *Государство и право*. 1996, N 6, թիվ 154):

¹³ Տես *Головистиков А. Н., Дмитриев Ю. А.*, Проблемы теории государства и права. М., 2005, էջ 698:

¹⁴ Տես *Кант И.*, Собр. сочин. В 6 т. / Под ред. В. И. Асмуса, А. В. Гулыги, Т. Н. Ойзермана. Т. 4, ч. 2, М., 1965, էջ 79:

¹⁵ Տես *Морозов Л. А.*, Теория государства и права, М., 2000, էջ 440, Теория государства и права, Под ред. В. М. Корельского и В. Д. Перевалова, М., 1997, էջ 92 и др:

տության նկատմամբ վերահսկողություն ու սահմանափակման կառուցակարգեր¹⁶: Այսպիսի նկարագրություն ունեցող հասարակության իսկական բնութագիրը և անվանումը իրավական հասարակությունն է, այլ ոչ թե «քաղաքացիական» ածականը: Այս հարցում հետաքրքիր դատողություններ ունի Վ. Ս. Ներսեսյանցը. «Սոցիալական ֆենոմենների քաղաքական և ոչ քաղաքական տարբերակման դիրքերից, երևույթների, որ համապատասխանում են հասարակության և պետության զարգացած պատկերացումներին, ակնհայտ է, որ անտիկ «հասարակությունները» (civitas-ը Հռոմում և նման քաղաքացիական համայնքները հին հունական պոլիսներում) իրենց բնույթով և բնութագրով քաղաքական հասարակություններ էին, այսինքն՝ արդի լեզվով ասած՝ դրանք պետություններ էին, այլ ոչ թե հասարակություններ: Քաղաքական բնույթ ունեին նաև միջնադարյան «հասարակությունները», որոնց դասային բաժանումը նշանակում էր տարբեր դասերի և դրանց անդամների պետաիրավական կարգավիճակների ուղղակի տարբերակում»¹⁷: Ընդունելով «քաղաքացիական» տերմինի խոցելիությունը և համարելով, որ մինչև նոր ժամանակաշրջանը հասարակությունները պետություն-հասարակություն էին՝ Վ. Ս. Ներսեսյանցը, սակայն, նոր տիպի տարբերակված հասարակական ձևն անվանում է քաղաքացիական: Այնինչ իր իսկ տված բնորոշումից հենց ակնհայտ է, որ այդ «ոչ պետություն» հասարակությունը հենց իրավական հասարակություն է. «Արդի քաղաքացիական հասարակությունը իրավական, ազատական, ժողովրդավարական, պլյուրալիստական, բաց հասարակություն է, որի հիմնական սուբյեկտներ են համարվում ազատ անհատները, ովքեր իրենց շահերը իրացնում են բոլորի համար՝ միասնական օրենքի և ընդհանուր իրավակարգի շրջանակներում»¹⁸:

Այսպիսով, իրավունքի գերակայության սկզբունքը սկզբնապես ձևավորվեց և իմաստավորեց ռացիոնալիստական հասարակական-քաղաքական մտքի կողմից, իսկ այնուհետև կենսագործվեց՝ դառնալով աշխարհակարգի հիմնասյուն: Իրավունքի գերակայությունը և դրանից բխող իրավական օրենքի գերակայությունը հասարակության մեջ կենսագործեցին «ամբողջ իշխանությունը իրավունքին և օրենքին» հիմնական, բացարձակ և կապեզորիկ-իմպերատիվ սկզբունքը: Դրանով հասարակական ենթահամակարգերը ձեռք բերեցին իրավական դեպերմինավորվածություն, փոփոխվեց մարդ-հասարակություն-պետություն եռամիասնության հարաբերակցությունը, և հանգեցրեց մարդու՝ որպես բարձրագույն արժեքի (մարդու իրավունքներ), պետության՝ որպես իրավական պետության հայեցակարգերի ձևավորմանը, որոնց հիմնական բնութագրիչն իրավականն է: Նույն ազդեցությունն այն թողեց նաև հասարակության վրա՝ դարձնելով ազատ ու իրավահավասար անհատների իրավական միություն: Նոր ձևավորված հասարակությունն իր տիպով ու էությամբ իրավական հասարակություն էր, սակայն հասարակական-քաղաքական և փիլիսոփայական գրականության մեջ այն ստացավ «քաղաքացիական հասարակություն» անվանումը, որը արդեն հնացած, իմաստային տեսանկյունից խոցելի հասկացություն է և անհրաժեշտ է այն փոխարինել «իրավական հասարակություն» հասկացությունով: Նման վերանվանումը կլուծի մի շարք մեթոդաբանական շփոթներ, ինչպես, օրինակ, որ քաղաքացիական հասարակությունը միայն գույքային հասարակություն չէ, քաղաքացիական հասարակության անդամները միայն քաղաքացիները չեն և այլ: Այդպիսով, իրավունքի գերակայության սկզբունքի հաստատմամբ իրողություն է դառնում իրավական հասարակությունը: Իրավական հասարակությունն իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի գործողության հետևանքով ձևավորված ազատական, ժողովրդավար-

¹⁶ Տե՛ս Теория государства и права, Под ред. В. М. Корельского и В.Д. Первалова, М., 1997, էջ 93:

¹⁷ Տե՛ս Нерсисянц В. С., Общая теория права и государства, М., 1999, էջ 279:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 284:

րական, պլյուրալիստիկական, բաց հասարակություն է, որի հիմնական սուբյեկտներն են համարվում իրենց շահերը բոլորի համար միասնական իրավական օրենքի և ընդհանուր իրավակարգի շրջանակներում կենսագործող ազատ, իրավական էական հասարակությունը:

Annotation. Within the framework of the article, the essential impact of the supremacy of law as a fundamental principle on society, its organizational and functional aspects was discussed and analyzed. As a result of the analyzes carried out within the framework of the article, the substantive aspect of the legal society was presented, according to which it is a liberal, democratic, pluralistic, open society formed as a result of the operation of the fundamental principle of the supremacy of law, the main subjects of which are considered to be free people living within the framework of a common legal law and a common legal system, legal entities-individuals.

Аннотация. В рамках статьи рассмотрено и проанализировано существенное влияние верховенства права как первоосновы на общество, его организационные и функциональные аспекты. В результате проведенных в рамках статьи анализов представлен содержательный аспект правового общества, согласно которому это либеральное, демократическое, плюралистическое, открытое общество, сформированное в результате действия первоосновы верховенства права, основными субъектами которого считаются свободные люди, живущие в рамках общей правовой системы и общего правового строя, юридические лица-физические лица.

Բանալի բառեր – քաղաքացիական հասարակություն, իրավունքի գերակայություն, իրավական հասարակություն, իրավական օրենք, աշխարհակարգ, քաղաքացիական ակտիվություն:

Keywords: *civil society, rule of law, legal society, legal law, world order, civil activism.*

Ключевые слова: *гражданское общество, верховенство права, правовое общество, правовое право, миропорядок, гражданский активизм.*

Ասատրյան Ա. - ՀՀ փաստաբանների պալատինստիտուտի առաջին տեղակալ, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դասախոս, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ, էլ. հասցե՝ asatryan.armen@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 13.02.2023 թ., տրվել է գրախոսության 13.02.2023 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. թեկնածու Հայկ Արթուրի Ծատուրյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.:

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-11>

ՌԱՖԱՅԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ
*Իրավաբանական գիտությունների
թեկնածու*
ԱՐՄԵՆ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ
*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

RAFAEL VARDANYAN
Candidate of Law
ARMEN SHUKURYAN
*Senior researcher at the Institute of Philosophy, Sociology and
Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia,
Candidate of Law*

РАФАЭЛЬ ВАРДАНИЯН
Кандидат юридических наук
АРМЕН ШУКУРЯН
*старший научный сотрудник Института философии,
социологии и права НАН РА,
Кандидат юридических наук*

**ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ (ՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ) ԻՐԱՎԱԿԱՆ
ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**GENERAL CHARACTERISTICS AND FEATURES OF THE ROMANCE
AND GERMANIC (CONTINENTAL) LEGAL FAMILY**

**ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА И ОСОБЕННОСТИ РОМАНО-
ГЕРМАНСКОЙ (КОНТИНЕНТАЛЬНОЙ) ПРАВОВОЙ СЕМЬИ**

Ռոմանագերմանական իրավական ընտանիքի մեջ մտնող ազգային իրավունքի ձևերին ներհատուկ միասնական պատմական արմատները և հիմնադիր ընդհանուր իրավական սկզբունքները կանխորոշեցին նաև դրանց նույնությունն ու ընդհանրության մի ամբողջ շարք

այլ կարևոր հայեցակարգեր¹:

Այսպես, ռոմանագերմանական իրավաքաղաքական ուսմունքի համաձայն՝ այդ իրավական ընտանիքի մեջ մտնող իրավունքի ազգային համակարգերն ունեն նմանօրինակ կառուցվածք: Իրավունքը բաժանվում է մասնավորի և հանրայինի: Իրավունքի տարբեր ազգային համակարգերն ներառում են իրավունքի նմանվող ճյուղեր, որոնք իրենց բովանդակությամբ բաժանվում են իրավունքի իրենց բովանդակությամբ միասեռ նորմերիխմբեր միավորող իրավական ինստիտուտների:

1) Ռոմանագերմանական իրավական ընտանիքի առանձնահատկություններից է միասեռ հարաբերությունների հանրագումարը կարգավորող իրավունքի վարքագծի վերացական-համընդհանուր կանոնի բնույթի, իմաստի և նշանակության միատեսակ հասկացությունը: Ռոմանագերմանական իրավունքի նորմն իր այդ վերացական համընդհանրությամբ տարբերվում է նախադեպային իրավունքի համակարգում (ընդհանուր իրավունքի իրավական ընտանիքում) կոնկրետ գործով դատական վճռով սահմանվող կազուիստական կանոնից (տվյալ կազուի, առանձին դեպքերի համար կանոնից):

Իրավունքի նորմի էության և բնույթի այսպիսի հասկացողությունն ընկած է նաև նորմատիվ-իրավական ակտի ռոմանագերմանական հայեցակարգի, պետության նորմատիվ-իրավական գործունեության և գործող իրավունքի համապատասխան (կոդիֆիկացիայի) հիմքում: Ռոմանագերմանական օրենսգրքերը, այլ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը՝ որոշակի ձևով համակարգված (այս կամ այն աստիճանի) վերացական ընդհանուր իրավական նորմերի համալիրներ են, ոչ թե ընդհանուր իրավունքի կազուիստական կանոններ, դատական կամ վարչական նախադեպերի ժողովածուներ:

2) Ռոմանագերմանական ընտանիքի երկրների գործող իրավունքն իր վերացական-նորմատիվ բովանդակության շնորհիվ աչքի է ընկնում առավել հստակությամբ, որոշակիությամբ, պարզությամբ, տեսանելիությամբ և մատչելիությամբ: Այն հեշտությամբ կարելի է բարեփոխել և փոփոխելանհրաժեշտ ուղղությամբ: Սակայն դա ունի նաև թերություններ, որոնք պայմանավորված են համապատասխան նորմի գործողության տակ ընկնող առանձին դեպքերի կիրառմամբ, իրավունքի նորմի իմաստի վերացական-ընդհանուր պատշաճ կոնկրետացման դժվարություններով: Դրանով է պայմանավորված այն մեծ ուշադրությունը, որ իրավունքի ռոմանագերմանական համակարգի տեսությունում և պրակտիկայում անդրադարձ է կատարվում գործող իրավունքի մեկնաբանման հիմնահարցին:

Ռոմանագերմանական իրավունքի վերացական նորմատիվ բնույթը հստակորեն ներկայացվում է նաև դրա աղբյուրների համակարգում: Ռոմանագերմանական իրավունքը գրավոր իրավունք է՝ հիմնականում կազմված գրավոր ձևակերպված նորմատիվ իրավական ակտերից (օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից):

Ռոմանագերմանական իրավական ընտանիքի բոլոր ազգային համակարգերում իրավունքի հիմնական աղբյուրն օրենքն է: Օրենքներն ընդունվում են բարձրագույն ներկայացուցչական մարմնի կողմից կամ հանրաքվեի միջոցով:

Նորմատիվ իրավական ակտերի համակարգում բարձրագույն իրավաբանական ուժով օժտված է գրավոր սահմանադրությունը (պետության հիմնական օրենքը), որն իրավական հիմք է մնացած բոլոր (սահմանադրական և սովորական) օրենքների և ենթաօրենսդրական ակտերի համար: Սովորական օրենքների և ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հատուկ սահմանադրական

¹ Տե՛ս *Марченко М.Н.*, Сравнительное правоведение. Общая часть М., 2001.

դատարանները (դաշնային սահմանադրական դատարանը՝ ԳԴՀ-ում, սահմանադրական դատարանը՝ Իտալիայում) կամ բարձրագույն ընդհանուր դատական և այլ պետական ինստիտուտները:

Ռոմանագերմանական իրավական ընտանիքի աղբյուրների համակարգում ավանդաբար կարևոր դեր են խաղում օրենսգրքերը՝ ճյուղային բնույթի (կոդիֆակացված) նորմատիվ իրավական ակտերը: Չնայած որ դրանք օժտված են սովորական օրենքի իրավաբանական ուժով, սակայն, ըստ էության, կենտրոնական տեղ են զբաղեցնում և առաջատար դեր են խաղում օրենսդրության համապատասխան ճյուղում:

Ռոմանագերմանական իրավունքի երկրներում հետագա ամբողջ օրինակարգային (կոդիֆիկացիոն) գործունեության վրա մեծ ազդեցություն թողեցին նապոլեոնյան օրենսգրքերը (1804 թվականի Քաղաքացիական օրենսգիրքը, 1807 թվականի Առևտրային օրենսգիրքը, 1808 թվականի Քրեական դատավարական օրենսգիրքը, 1810 թվականի Քրեական օրենսգիրքը): Ավելիուշ ընդունված Բելգիայի և Լյուքսեմբուրգի քաղաքացիական օրենսգրքերը շատ կողմերով համապատասխանում են ֆրանսիական նմուշին: Նշանակալից օրինակությամբ աչքի են ընկնում Գերմանական քաղաքացիական օրենսգիրքը (1896 թվական) և Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգիրքը (1881-1907 թվականներ)²:

3) Ռոմանագերմանական իրավական ընտանիքում՝ որպես իրավունքի աղբյուր, նշանակալից դեր են խաղում գործադիր իշխանության տարբեր մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտերը (դեկրետները, որոշումները, շրջաբերականները, հրահանգները, կանոնակարգերը և այլն): Այդ նորմատիվ ակտերը, որպես կանոն, ընդունվում են «ի կատարումն օրենքի» և ունեն ենթաօրենսդրական բնույթ: Ընդ որում, օրենքին այսպիսի ենթաօրենսդրական ակտերի համապատասխանությունն ապահովելու համար իրականացվում է դատական վերահսկողություն (ԳԴՀ-ում բոլոր ընդհանուր դատարանների, Ֆրանսիայում հատուկ վարչական դատարանների կողմից):

Գործադիր իշխանության նորմատիվության հատուկ տեսակ է պատվիրակված օրենսդրությունը, երբ գործադիր իշխանության այսպիսի այնպիսի մարմինն օժտվում է հարաբերությունների որոշակի ոլորտի ինքնուրույն նորմատիվ իրավական կարգավորման լիազորություններով: Այսպես, 1958 թվականի ֆրանսիական Սահմանադրության համաձայն՝ խորհրդարանի օրինաստեղծ լիազորությունները սահմանափակված են՝ ընդհանուր սկզբունքներ և իրավական կարգավորման նորմեր սահմանող օրենքներ ընդունելու իրավունքով: Դրա հետ միասին ճանաչվում է գործադիր իշխանության մարմինների՝ ինքնավար և խորհրդարանի օրենսդրական իշխանությանը չենթարկվող, նորմաստեղծ, լիազորությունների ոլորտը (այսպես կոչված՝ կանոնակարգող իշխանությունը): Նման ակտերի սահմանադրական սկզբունքներին համապատասխանության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ֆրանսիայի պետական խորհուրդը:

4) ԳԴՀ-ում և բազմաթիվ այլ երկրներում գործադիր իշխանության մարմիններն օժտված չեն նման ինքնավար (օրենսդրությանը չենթարկվող) նորմաստեղծության իրավունքով:

Ռոմանագերմանական իրավական աղբյուրների համակարգում սովորույթը հիմնականում ունի օժանդակ դեր՝ անհրաժեշտ դեպքերում լրացնելով գործող օրենսդրությունը:

Պոզիտիվիստները, ընդհանրապես չեն ընդունում սովորույթը, որպես գործող իրավունքի աղբյուր, իսկ դրան հակառակ՝ իրավունքի սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչները գերազանցապես են սովորույթի դերն ազգային իրավական համակարգում:

² Տե՛ս Koschaker P. Europa und des Römische Recht. Berlin. 1953, էջ 132-133:

5) Ռոմանագերմանականիրավական ընտանիքի երկրներում դատարանըգործում է օրենքի հիման վրա և օրենքի շրջանակում: Այստեղ չկա ընդհանուր իրավունքին ներհատուկ նախադեպի կանոն, ուստի, այստեղ դատարանն օժտված չէ իրավաստեղծ լիազորություններով և իրավունք չունի ստեղծել իրավունքի նոր նորմեր: Սակայն դատարանն ըստ ֆրանսիացի մեծանուն գիտնական Ռենե Դավիթի «դատական նախադեպը» (պրակտիկան) համարվում է իրավունքի աղբյուր ռոմանագերմանական իրավական համակարգում:

Դատական պրակտիկան ստեղծագործական դեր է խաղում իրավական համակարգում՝ լրացնելով իրավունքի բացերը կամ հարթելով իրավական հակասությունները: Իհարկե, ռոմանագերմանական իրավական համակարգում դատական պրակտիկան այն հեղինակությունը չունի, ինչն ունի նորմատիվ իրավական ակտը, հատկապես՝ օրենքը:

1) Ռոմանագերմանական իրավական ընտանիքում երկար ժամանակ դոկտրինան եղել է իրավունքի հիմնական աղբյուր: Այն, որպես իրավունքի հիմնական սկզբունքներ, մշակվել է XII-XIV դարերում եվրոպական համալսարաններում (այստեղից էլ՝ «համալսարանական իրավունք»):

Եվ միայն պոզիտիվ օրենսդրության համակարգման հետևանքով դոկտրինան իր տեղը գիջեց օրենքի գերակայությանը (XVII-XIXդդ.)³:

Դոկտրինան միշտ էլ մայրցամաքային իրավական համակարգում կարևոր դեր է խաղացել (ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության մեջ):

2) Մայրցամաքային իրավական համակարգում էական դեր են խաղում «իրավունքի ընդհանուր սկզբունքները», որոնք տարալուծված են գործող օրենսդրության մեջ:

Ընդ որում, մեծ ուշադրություն է դարձվում դատական պրակտիկայի միատեսակությանը: Այդ առումով զգալի դեր ունեն բարձրագույն դատական մարմինների որոշումները և պարզաբանումները: Առանձին երկրներում (օրինակ՝ Պորտուգալիայում) գերագույն դատարանի պլենումի սահմանած դրույթներն ունեն նորմատիվ իրավական բնույթ:

3) Եվ վերջապես, նշենք, որ ռոմանագերմանական իրավական համակարգի կարևոր առանձնահատկություններից հետևյալը. այս համակարգում պարտավորական իրավունքը, որը դասական իմաստով հայտնի չէ ընդհանուր իրավական համակարգին, գրեթե նույն նշանակությունն ունի, ինչը՝ թրաստը՝ ընդհանուր իրավունքում:

Ռոմանագերմանական իրավական ընտանիքում էական նշանակություն ունի իրավաբանականդոկտրինան(իրավունքի տեսությունը, իրավաստեղծության ու իրավակիրառմանընդհանուր և կոնկրետ հարցերով գիտական աշխատությունները):Դա ունի հին պատմական արմատներ, քանի որ հենց XIII - XIX դարերի համալսարանական իրավաբանական գիտությունն է մշակել ռոմանագերմանական իրավունքի հիմնական գաղափարները, սկզբունքները և կառույցները, ու իրավունքի գիտական դոկտրինը(այսպես կոչված՝ «իրավաբանների իրավունքը»), որը հարյուրամյակների ընթացքում մայրցամաքային իրավունքի համակարգերում խաղացել է իրավունքի հիմնական աղբյուրի դերը, մինչև որ այդ դերը (սկսած XIX դարից) անցել է օրենքին:

Արդի պայմաններում դոկտրինան զգալի ազդեցություն է թողնում գործող իրավունքի իրավահասկացողության և պարզաբանման ամբողջ գործընթացի, իրավունքի սկզբունքների և նպատակների մեկնաբանման, իրավունքի նորմի իմաստի բացահայտման հնարքների ու մեթոդների, դրանց կիրառման և այլնի վրա: Դա ունի գործնական մեծ նշանակություն, քանի

³ Տե՛ս История государства и права зарубежных стран, Часть 1, Отв. ред. О. А. Жидков и Н. А. Крашенинникова, М., 1996:

որ ռոմանագերմանական իրավական ընտանիքի մի շարք երկրներում իրավունքի ընդհանուր սկզբունքները (վերպոզիտիվ իրավունքի գաղափարները և արժեքները) ունեն գործող իրավունքի նորմերի ուժ և վերջիններիս հետ հակասության դեպքում օժտված գերապատվությամբ: Համաիրավական սկզբունքների այսպիսի դերը հիմնված է ոչ միայն ռոմանագերմանական իրավունքի ավանդույթների, այլ նաև մի շարք մայրցամաքային երկրների ժամանակակից սահմանադրություններում ամրագրված՝ մարդու ի ծնե և անօտարելի իրավունքների մասին բնական-իրավական սկզբունքների ու նորմերի, իրավական արժեքների և այլնի վրա:

Ըստ էության, խոսքն այն մասին է, որ սահմանադրականորեն ճանաչված և ամրագրված բնական իրավունքը (բնական իրավունքի սկզբունքների, մարդու բնական իրավունքների և ազատությունների և այլնի տեսքով) գործում է որպես պոզիտիվ իրավունքի գերապատիվ աղբյուր:

Այսպես, ԳԴՀ-ի սահմանադրական դատարանը պաշտպանում է այն դիրքորոշումը, որի համաձայն՝ ԳԴՀ-ի Սահմանադրությունը ներառում է ոչ միայն իր տեսքում շարադրված պոզիտիվ իրավունքի նորմերը, այլ նաև մի շարք «ընդհանուր սկզբունքներ», որոնք Սահմանադրության հեղինակը չի կոնկրետացրել պոզիտիվ նորմերի տեսքով: Բացի դրանից, ԳԴՀ-ի սահմանադրական դատարանը ճանաչում է այն «վերպոզիտիվ իրավունքի» առկայությունը և գործողությունը, որը սահմանափակում է երկրի սահմանադրությունն ընդունող բուն օրենսդրի, սահմանադրի իշխանությունը: Այսպիսով, օրենսդիրը (Սահմանադրության հեղինակը) չպետք է և իրավունք չունի ամեն ինչ կարգավորել իր հայեցողությամբ՝ խախտելով վերպոզիտիվ իրավունքի («իրավունքի գաղափարի») պահանջները: Պոզիտիվ սահմանադրական իրավունքի (սահմանադրության պոզիտիվ նորմերի) «վերպոզիտիվ իրավունքի» պահանջներին չհամապատասխանելու դեպքում գերապատվությունը տրվում է «վերպոզիտիվ իրավունքին» («իրավունքի գաղափարին») և սահմանադրական դատարանը պարտավոր է այդ դիրքերից գնահատել Սահմանադրության համապատասխան պոզիտիվ նորմի ոչ իրավական բնույթը:

Ռոմանագերմանական իրավական ընտանիքի իրավունքի յուրաքանչյուր ազգային համակարգին ներհատուկ է իր առանձնահատուկ գծերը:

Հատկապես ուշագրավ են ֆրանսիական և գերմանական իրավական համակարգերը, ինչպես նաև՝ սկանդինավյան երկրների, Լատինական Ամերիկայի և Ճապոնիայի իրավական համակարգերը:

Հանրային և մասնավոր իրավունքի բաժանման ելակետային, հիմնական չափանիշներն են հանդիսանում.

Առաջին, հանրային իրավունքին բնորոշ է «իշխանություն-ենթակայություն» հարաբերությունը, իսկ մասնավոր իրավունքին՝ «սուբյեկտների իրավահավասարությունը»:

Երկրորդ, հանրային իրավունքը կառուցված է (վերադասության) սուբորդինացիայի սկզբունքի վրա, իսկ մասնավոր իրավունքը՝ իրավահարաբերության սուբյեկտներինը կամքի կոորդինացիայի (համադասության) սկզբունքի վրա:

Annotation. The article thoroughly discusses and focuses on the general characteristic features of the Romance and Germanic (continental) legal family, in particular, the concept of law, its sources, codification problems and other related issues.

Аннотация. В данной статье детально рассматриваются и анализируются общие характерные черты романо-германской (континентальной) правовой семьи, в частности, изучается понятие «право», его источники, затрагиваются проблемы кодификации и другие вопросы, касающиеся темы.

Բանալի բառեր - ռոմանագերմանական (մայրցամաքային), իրավունքի աղբյուրներ, օրինակարգում (կողմ-
ֆիկացիա), օրենք, դատական նախադեպ, սովորույթ:

Keywords: Romance and Germanic (continental), sources of law, codification, law, judicial precedent, custom.

Ключевые слова: романо-германская (континентальная), источники права, кодификация, право, судебный прецедент, обычай.

Վարդանյան Ռ. - իրավաբանական գիտությունների թեկնածու, էլ. հասցե՝ rafayelvardanyan@icloud.com:

Շուքրյան Ա. - ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլ. հասցե՝ shuqur@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 14.04.2023 թ., տրվել է գրախոսության 14.04.2023 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО**

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-17>

ՏԻՐՈՒՀԻ ԱՍԼԱՆՅԱՆ
*ԵՀ, Իրավագիտության ամբիոն, հայցորդ
ՀԵՀ/ԳՄ Իրավագիտության ամբիոնի դասախոս*

TIRUHI ASLANYAN
*EU, Department of Law, researcher,
Gyumri Branch of the European University,
Lecturer at the Department of Law*

ТИРУИ АСЛАНЯН
*ЕУ, кафедра юриспруденции, соискатель,
Гюмрийский филиал Европейского университета,
преподаватель кафедры права*

**ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ
ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ANALYSIS OF THE INTERNATIONAL AND DOMESTIC LEGAL NORMS
ON THE PROTECTION OF THE INTERESTS OF MOTHER AND CHILD**

**АНАЛИЗ МЕЖДУНАРОДНЫХ И ОТЕЧЕСТВЕННЫХ ПРАВОВЫХ НОРМ
О ЗАЩИТЕ ИНТЕРЕСОВ МАТЕРИ И РЕБЕНКА**

Հոդվածում քննարկվում է մոր և մանկան շահերի ու իրավունքների պաշտպանության միջազգային և ներպետական իրավական նորմերը: Ընտանիքի, մոր և մանկան շահերի պաշտպանությունը սահմանադրական սկզբունքներից է¹: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածը սահմանում է՝ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:

Սա նշանակում է, որ պետության կողմից պետք է իրականացվեն տարբեր բնույթի սո-

¹ Ղարախանյան Գ. Հ., Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք, Երևան, 2005, էջ 33:

ցիալ-տնտեսական միջոցառումներ մայրության խթանման, մայրերի և երեխաների շահերը պաշտպանելու, ընտանիքի ամրապնդման և ընտանեկան իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար: Տվյալ միջոցառումները պետք է կիրառվեն ներպետական և միջազգային իրավական նորմերի համադրմամբ և կիրառմամբ, ինչպես նաև ցանկալի արդյունքի հասնելուն ուղղված պետության կողմից մշակված համապատասխան ծրագրերի միջոցով: «Մայրություն» հասկացությունն ունի մեկնաբանությունների չափազանց լայն շրջանակ: Առաջին հերթին մայրությունը կնոջ հիմնական կենսաբանական գործառույթն է, որն ուղղված է մարդկային ցեղի շարունակությանը. երեխային կրելը, ծնելը և կերակրելը²: Սոցիալական իմաստով մայրությունը մայրերի և երեխաների ազգակցությունն է, ինչպես նաև նրանց հոգեհուզական կապն ու փոխհարաբերությունները³:

Ինչպես գիտենք, 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ երեխա է համարվում, հետևաբար մանկություն և երեխա հասկացություններն անմիջականորեն փոխկապակցված հասկացություններ են: Հայաստանի Հանրապետությունում մայրության և մանկության իրավունքները սահմանվում են Սահմանադրությամբ, ընտանեկան, աշխատանքային, քրեական օրենսդրությամբ, մի շարք իրավական նորմերի միջոցով, որոնք կապված են իրավունքների տարբեր ճյուղերի հետ: Տվյալ դեպքում խոսքը ներպետական համապատասխան իրավական ակտերի, ինչպես նաև միջազգային պայմանագրերի դրույթների մասին է, որոնց համընդհանուր ճանաչված սկզբունքներն ու նորմերը ևս ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում:

Երեխաների իրավունքների պաշտպանության գաղափարախոսության և պրակտիկայի ձևավորման համար կարևոր ռազմավարական նշանակություն ունի «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը (1996): Մանկության և մայրության պաշտպանության համար լրացուցիչ երաշխիքներ սահմանելու նպատակով ընդունվել է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը (2002), որը սահմանում է հղի կանանց համար անվտանգ մայրությունն ապահովող լայն իրավունքներ: Մասնավորապես՝ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է անվտանգ հղիության իրավական կարգավորումը, ըստ որի՝ մայրությունը և մանկությունը գտնվում են պետության և հասարակության հովանավորության ու պաշտպանության ներքո ու աջակցություն ստանալու իրավունք ունեն: Ինչպես նաև կինն ունի անվտանգ մայրության, այն է՝ հղիության ընթացքում առողջության պահպանման, ծննդաբերության և հետծննդյան ժամանակաշրջանում իր, պտղի առողջությանը և նորածնին նվազագույն ռիսկ պատճառող մեթոդների կիրառմամբ օգնություն ստանալու իրավունք⁴:

Այդ խնդիրների իրականացումը երաշխավորելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991 թ. ընդունել է Կանանց, մայրության, մանկության պաշտպանության և ընտանիքի ամրապնդման առաջնահերթ միջոցառումների մասին որոշումը, որը նախատեսում է մանկահասակ երեխաներ ունեցող կանանց համար աշխատանքային իրավունքների լրացուցիչ երաշխիքներ: 20-րդ դարի սկզբից ի վեր մշակվել ու ընդունվել են մայրության և մանկության պաշտպանության վերաբերյալ ավելի քան երեսուն միջազգային իրավական ակտեր (կոնվենցիաներ, միջազգային կազմակերպությունների առաջարկու-

² *Снежко О.А.*, Проблемы государственной зашиты материнства в РФ // Государство и Право, 2010, №10 с 58:

³ *Ушаков Д.Н.*, Большой толковый словарь современного русского языка: 180 000 слов и словосочетаний. М.: Альта-Принт, 2007, с. 540.

⁴ Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին ՀՀ օրենք, ընդունվել է 11.12.2002 թ., ուժի մեջ է մտել՝ 07.07.2003:

թյուններ, երկկողմ միջպետական համաձայնագրեր): Դրանց թվում են, օրինակ, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան (1989), «Երեխայի իրավունքների և սոցիալական պաշտպանության մասին» աֆրիկյան կոնվենցիան (1990), «Երեխաների իրավունքների իրականացման մասին» եվրոպական կոնվենցիան (1996)⁵: Հետաքրքիր փաստ է այն, որ 19-20-րդ դարերի վերջում Եվրոպական մի շարք երկրներում արդեն իսկ գոյություն ունեին մայրերի և երեխաների պաշտպանության պետական ծրագրեր, օրինակ՝ մայրության ապահովագրությունը, որը նպատակ ուներ ապահովել հղիների և նորածին երեխայի գոյության պայմանները: 1952 թ. Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունվել է «Մայրության պաշտպանության մասին» կոնվենցիան: Կազմակերպության գլխավոր խորհրդաժողովի 88-րդ նստաշրջանը՝ զարգացնելով կոնվենցիայի դրույթները, ընդունել է հանձնարարականներ, որոնք հղիության պաշտպանությունը հռչակում են պետության և հասարակության համատեղ պարտականություն: Կոնվենցիան պարտավորեցնում է պետություններին ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի հղի և կրծքով կերակրող կանայք չկատարեն այնպիսի աշխատանք, որը կարող է վնաս պատճառել մոր և մանկան առողջությանը:

Քանի որ երեխաները բնակչության ամենախոցելի խումբն են, նրանց իրավունքներն ապահովելու համար պահանջվում են լրացուցիչ ինքնուրույն մեխանիզմներ: Տվյալ պարագայում պետք է քննարկել երեխաների իրավունքների պաշտպանության հատուկ պետական հիմնարկի ներդրման անհրաժեշտությունը: Ասվածը հիմնավորելու համար մեջբերենք հետևյալ օրինակը. Ռուսաստանի Դաշնությունը սատարել է Դաշնային ժողովի Պետական դումայի մի շարք պատգամավորների և իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների առաջարկությանը, այն է՝ հիմնել Ռուսաստանում երեխայի իրավունքների հանձնակատարի ինստիտուտը: Ինչպես ցույց են տալիս Ֆեդերացիայի մի քանի բաղադրիչ սուբյեկտների միջազգային փորձը և պրակտիկան, երեխայի իրավունքների հանձնակատարը կարևոր և հեռանկարային դեր է խաղում անչափահասների իրավունքների պաշտպանության գործում⁶: Տվյալ դեպքում երեխայի իրավունքների հանձնակատարի գործունեության շրջանակները պետք է ներառեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ մարմինների համագործակցությունը, որոնք ուղղված են երեխայի անձնական իրավունքների պաշտպանությանը, խախտված իրավունքի վերականգնմանը, ու դրանց խախտման համար պատասխանատվությանը, ներառյալ երեխաների զբաղվածության, նրանց բժշկական խնամքի, կրթության, անօթևանության, հաշմանդամության և մի շարք այլ խնդիրների լուծմանը: Կատարված առաջարկությունները հիմնավորում են, որ հանձնակատարի գործունեությունը պետք է հստակ կարգավորվի կոնկրետ օրենքով, որը հստակորեն կսահմանի նրա լիազորությունները մայրերի, երեխաների և ընտանիքի իրավունքների համապարփակ պաշտպանության գործում: Այսինքն՝ անհրաժեշտ է մշակել մայրության, մանկության և ընտանիքի պաշտպանության հայեցակարգ, որի հիման վրա պետք է ընդունվի համապարփակ կարգավորող ակտ, որը բացատրում է մայրության, մանկության և ընտանիքի իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները, ամրագրելով մշակված մեխանիզմը:

Կարծում ենք, որ վերոնշյալ ինստիտուտի ներդրումը Հայաստանի Հանրապետությունում ևս կապահովի մայրության և մանկության իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ, ամբողջական և առաջադեմ համակարգի գոյությունը: Մայրության և մանկության իրավունքների պաշտպանության արդյունավետությունը կախված

⁵ *Այվազյան Վ.*, Մարդու իրավունքներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2002, էջ 352:

⁶ *Манукян Н.А.*, Конституционно-правовая защита семьи, материнства, отцовства и детства в зарубежных странах // Гуманитарные научные исследования. 2019. № 11 [Электронный ресурс]. URL: <http://human.snauka.ru/2019/11/26152>

է տվյալ պետության այնպիսի գործոններից ինչպիսիք են սոցիալական, տնտեսական, իրավական երաշխիքներն ու դրանց զարգացվածության մակարդակը: Վերոնշյալ երաշխիքների վերաբերյալ վիճակագրական տվյալների ուսումնասիրման և վերլուծության արդյունքները փաստում են խնդրո առարկա ոլորտում եվրոպական երկրների առաջադիմությունը, որոնցից կարելի է առանձնացնել Ավստրիան, Հունգարիան, Գերմանիան, Լատվիան, Նորվեգիան և Շվեդիան: Նվազ ցուցանիշների թվով առանձնանում են Անդորրան, Հունաստանը, Իսպանիան, Մալթան, Մոնակոն, Սան Մարինոն և Նիդերլանդները: Հղիության և ծննդաբերության վճարովի երկարատև արձակուրդներ տրամադրվում են միայն Ավստրիայում, Բելառուսում, Հունգարիայում, Լեհաստանում, Սլովակիայում, Չեխիայում և Շվեդիայում:

Սակայն շեշտենք, որ այն նահանգներում, որտեղ տրամադրվում են երեխաների խնամքի համար բարձր նպաստներ արձակուրդն ավելի կարճատև է: Չնայած որ Հայաստանում ևս մայրության և մանկության պաշտպանությունն իրականացվում է միջազգային չափանիշներին համապատասխան, սակայն սոցիալական պաշտպանության առումով այն միանշանակ բավականին զիջում է եվրոպական երկրներին: Սոցիալական երաշխիքներից զատ՝ կարևորվում են նաև իրավական և բարոյահոգեբանական երաշխիքները: Մասնավորապես՝ Բելառուսի Հանրապետության Մինսկի քաղաքային գործադիր կոմիտեն իր պաշտոնական էջում հրապարակել է նյութ, որը պատրաստվել է Բելառուսի Հանրապետության Նախագահին առընթեր կառավարման ակադեմիան Առողջապահության նախարարությունից, Կրթության նախարարությունից, Բելառուսի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության ստացված տեղեկատվության հիման վրա: Մասնավորապես՝ այնտեղ նշվում է, որ երկրի հիմնական օրենքի համաձայն (Բելառուսի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդված)՝ ամուսնությունը, ընտանիքը, մայրությունը, հայրությունը և մանկությունը պաշտպանված են պետության կողմից⁷:

Հոդվածում վիճակագրական տվյալներ են ներկայացվում մայրության և մանկության իրավունքների պաշտպանությունը բժշկական օգնությամբ երաշխավորված լինելու մասին: Օրինակ՝ վերջին տարիներին արձանագրվել է առանց բարդությունների ծնունդների թվի կայունացում: 2018-ին նորմալ ծնունդների մասնաբաժինը կազմել է ավելի քան 42 % (2017-ին՝ ավելի քան 41 %): ԿՀՎ-ի փաստերի համաշխարհային գրքի (CIA World Factbook) տվյալների համաձայն՝ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Բելառուսն ունի աշխարհի մայրական մահացության ամենացածր ցուցանիշներից մեկը՝ Լեհաստանի, Իսլանդիայի, Հունաստանի, Ֆինլանդիայի, Շվեդիայի, Ավստրիայի, Չեխիայի, Քուվեյթի, Իտալիայի հետ միասին: Նաև երկիրը դրական տեղաշարժ ունի՝ ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ), Բելառուսի Հանրապետությունը նորածնային մահացության ամենացածր ցուցանիշ ունեցող երկրների դասակարգման ցուցակում զբաղեցնում է 8-րդ տեղը:

Ավելին, այս վեճերով օբյեկտիվորեն հնարավոր է սահմանել գործի քննության սեղմ ժամկետներ՝ առանց արդարադատության որակի վրա ազդելու հիմնավորված ռիսկի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կողմից ձևավորված իրավունքի լույսի ներքո:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած իրավունքը առանձնացնում է դատավարության ժամկետի հիմնավորվածությունը գնահատելու 4 չափանիշ՝

1. գործի բարդությունը,
2. հայցվորի (բողոք բերողի) վարքագիծը,
3. տեղական իշխանությունների վարքագիծը,
4. հայցվորի (բողոք բերողի) համար «կշեռքի նժարի վրա դրվածի» կարևորությունը⁸:

Գործի բարդությունը կարող է պայմանավորված լինել ապացույցների մեծ ծավալով⁹, իրավական խնդիրների բարդությամբ¹⁰, մեծ քանակությամբ վկաների հարցաքննության անհրաժեշտությամբ¹¹, գործի էությունը կարող է լինել բարդ, օրինակ, երբ այն ընդգրկում է և՛ անհատական և՛ հասարակական հետաքրքրություն¹², այդուհանդերձ միայն այն, որ գործը բարդ է, չի նշանակում, որ բոլոր ուշացումները համարվելու են հիմնավորված¹³:

Հայցվորի կամ բողոք բերողի վարքագծի վերաբերյալ ՄԻԵԴ-ը նշել է, որ հայցվորի կամ բողոք բերողի վարքագիծը օբյեկտիվորեն ազդում է գործի քննության ժամկետների վրա, որը չի վերահսկվում պետության կողմից, ուստի այն պետք է հաշվի առնվի դատական քննության ողջամիտ ժամկետների պահպանման հարցը քննարկելիս¹⁴:

Անդրադառնալով տեղական իշխանությունների վարքագծին՝ ՄԻԵԴ-ը նշել է, որ պետությունները պետք է այնպես կազմակերպեն իրենց իրավական համակարգը, որպեսզի դատավորները հնարավորություն ունենան երաշխավորելու ողջամիտ ժամկետում վերջնական դատական ակտ ստանալու իրավունքը¹⁵:

⁷ S'eu Justice delayed is justice denied. Professor Tania Sourdin & Naomi Burstyner. Victoria University Law and Justice Journal. Vol 4, No 1 (2014), էջ 57:

⁸ S'eu Handbook on European law relating to access to justice.// European Union Agency for Fundamental Rights and Council of Europe, 2016, էջ 139:

⁹ S'eu ECtHR, Eckle v. Germany, No. 8130/78, 15 July 1982:

¹⁰ S'eu ECtHR, Breinesberger and Wenzelhuemer v. Austria, No. 46601/07, 27 November 2012, paras. 30–33:

¹¹ S'eu ECtHR, Mitev v. Bulgaria, No. 40063/98, 22 December 2004, para. 99:

¹² S'eu ECtHR, Wiesinger v. Austria, No. 11796/85, 30 October 1991, para. 55:

¹³ S'eu ECtHR, Ferrantelli and Santangelo v. Italy, No. 19874/92, 7 August 1996, para. 42. S'eu նաև ECtHR, Ringeisen v. Austria, No. 2614/65, 16 July 1971, para. 110:

¹⁴ S'eu ECtHR, Wiesinger v. Austria, No. 11796/85, 30 October 1991, para. 57:

¹⁵ S'eu ECtHR, Cocchiarella v. Italy [GC], No. 64886/01, 29 March 2006, para. 119. For a criminal case, see ECtHR, Dobbartin v. France, No. 13089/87, 25 February 1993, para. 44:

Իհարկե, ՄԻԵԴ որոշումների համատեքստում «կշեռքի վրա դրված»-ի կարևորությունն առավելապես վերաբերում է քրեական գործերին, հատկապես այն դեպքերում, երբ մեղադրվողն անազատության մեջ է¹⁶, ինչպես նաև երեխաներին վերաբերող գործերին¹⁷, աշխատանքային և կենսաթոշակային վեճերին և այլն¹⁸:

Բոլոր դեպքերում ՄԻԵԴ դիրքորոշումը հստակ է նաև այն հարցում, որ գործի քննությունը ողջամիտ ժամկետներում իրականացնելու անհրաժեշտությունը չի կարող արդարացնել կողմերի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված իրավունքների սահմանափակումը¹⁹:

Ինչպես ուղղակիորեն բխում է վերը նշված չափանիշներից, պատվի, արժանապատվության և գործարար համբավի վերաբերյալ վեճերն օբյեկտիվորեն հնարավոր է քննել սեղմ ժամկետներում:

Արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանավորված վեճի բնույթով տարբեր երկրներ սահմանում են գործի քննության առավել սեղմ ժամկետներ:

Օրինակ, Բելառուսի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածը սահմանում է, որ ալիմենտի, կյանքին և առողջությանը պատճառված վնասի, աշխատանքային վեճերի և որոշ այլ գործերով առաջին ատյանի դատարանում գործի քննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան դիմումն ընդունելուց մեկ ամսվա ընթացքում²⁰:

Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածն ի թիվս այլոց պարզեցված վարույթով քննվող գործերի շարքին է դասում այն գործերը, որոնք բարդ չեն, ինչպես նաև այն գործերը, որոնց արագ քննությունը առաջնահերթություն է²¹:

Գործերի քննության ժամկետների համատեքստում բավականին հետաքրքիր է Ռուսաստանի Դաշնության մոտեցումը:

ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ պայմանավորված գործի բարդությունից վերջինիս քննության ժամկետը կարող է երկարացվել ոչ ավել քան մեկ ամսով դատարանի նախագահի, նրա տեղակալի, դատական կազմի նախագահի կողմից²²:

Ընդունելի համարելով տարբերակված մոտեցման դրսևորումը բարդ գործերի դեպքում, մենք այդուհանդերձ կիսում ենք Տ. Վ. Սոլովևի կարծիքն այն մասին, որ նշված իրավական կարգավորումը միջամտություն է դատարանի անկախությանը, քանի որ գործի վարույթի բարդության հարցը որոշում և գործի քննության ժամկետը երկարացնում է ոչ այն դատավորը, որի վարույթում քննվում է գործը²³:

Մյուս կողմից չենք կարող չլիսել իրավաբանական գրականության մեջ տարածված այն

¹⁶ Տե՛ս ECtHR, *Jabłoński v. Poland*, No. 33492/96, 21 December 2000, para. 102. See also ECtHR, *Chudun v. Russia*, No. 20641/04, 21 June 2011, para. 112:

¹⁷ Տե՛ս ECtHR, *Hokkanen v. Finland*, No. 19823/92, 23 September 1994, para. 72 (it is “essential that [child] custody cases be dealt with speedily”):

¹⁸ Տե՛ս *Maria Filatova*. Reasonable time of proceedings: Compilation of case-law of the European Court of Human Rights. 2021, էջ 46:

¹⁹ Տե՛ս *Maria Filatova*. Reasonable time of proceedings: Compilation of case-law of the European Court of Human Rights. 2021, էջ 36:

²⁰ https://kodeksy-by.com/grazhdanskij_protseessualnyj_kodeks_rb/158.htm (14.02.2023):

²¹ https://continent-online.com/Document/?doc_id=30418564 (14.02.2023):

²² http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_39570/1912114abb859e576250efd5d1db84739e327b7e/ (13.02.2023):

²³ Տե՛ս *Соловьева Т.В.*, Продление срока судебного разбирательства по гражданским делам.//Отраслевые проблемы юридической науки и практики. Вестник Нижегородской академии МВД России, 2020, N 4(52), էջ 80:

մոտեցումը, որ դատարանին հայեցողական լիազորությունների տրամադրումը բարենպաստ պայմաններ է ստեղծում դրանց չարաշահման համար²⁴:

Այս տեսանկյունից կարծում ենք բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է «ոչ բարդ» և իրենց առանձնահատկություններով պայմանավորված «հրատապ լուծում պահանջող» վեճերի քննության համար սահմանել ժամկետներ օրենսդրությամբ՝ հնարավորինս բացառելով դատական հայեցողության դրսևորման հնարավորությունը:

Ավելին, այդպիսի կարգավորում օրինակ աշխատանքային վեճերի դեպքում սահմանված է Հայաստանի Հանրապետությունում, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ աշխատանքային վեճերն առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

Մենք առաջարկում ենք նույնատիպ մոտեցում դրսևորել նաև պատվի, արժանապատվության և գործարար համբավի վերաբերյալ վեճերի դեպքում:

Ամփոփում

Գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված հսկայական փոփոխություններ են կրել ինֆորմացիոն տեխնոլոգիաները, ինչի արդյունքում ոչ միայն մեծ ծավալներ են ստացել պատվի, արժանապատվության և գործարար համբավի նսեմացման դեպքերը, այլ նաև դրանց տարածումը համացանցային կամ այլ ռեսուրսներով: Վերոգրյալը հաշվի առնելով նաև խիստ արդիական է նման գործերի դատական քննության տարբերակված ընթացակարգերի սահմանումը:

Խոսքի ազատության և խոսքի «սանձարձակության» նույնացման դեպքերը հնարավորինս արագ չկանխելու արդյունքում մեծ վնասներ են կրում քաղաքացիները, կազմակերպությունը և անգամ պետությունը: Ավելին, եթե ենթադրյալ իրավախախտող սուբյեկտի նպատակը որևէ անձի էական վնաս հասցնելն է, ապա տեղեկությունը յուրաքանչյուր ժամ ուշ հերքվելու դեպքում իրավախախտը ավելի է մոտենում իր նպատակին և ի վերջո նրա մոտ արմատավորվում է անպատժելիության ընկալումը: Ավելին, այս գործերով իրական վնասները չափելի չեն, իսկ նյութական օրենսդրությամբ սահմանված որոշակի միանվագ գումարի վճարումը, որն էլ դատարանն ազատ է իր հայեցողությամբ սահմանել (նվազեցնել), չի հանգեցնում «նախկին վիճակը վերականգնելու» իրավունքի պաշտպանության կառուցակարգին:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկվում է սահմանել պատվի, արժանապատվության և գործարար համբավի վերաբերյալ վեճերի քննության եռամսյա ժամկետ՝ տալով դատարանին հնարավորություն իր պատճառաբանված որոշման հիման վրա և բացառիկ դեպքերում այն երկարաձգել ևս երեք ամսով:

Նշված մոտեցումն իրատեսական դարձնելու նպատակով առաջարկվում է այս գործերով կիրառել էլեկտրոնային ծանուցումների և էլեկտրոնային արդարադատության կառուցակարգը:

Annotation. The present article is dedicated to the peculiarities of the examination of cases on the protection of honor, dignity and business reputation and, in particular, the necessity to set short deadlines for dispute resolution. Within the scope of the article the law formed by the ECHR decisions, doctrinal approaches, and the experience of

²⁴ См. Даровских О.И., О злоупотреблении правосудия при реализации им своих дискреционных полномочий в уголовном судопроизводстве // Вестник ЮУрГУ, Серия «Право», 2013, т. 13, № 1, էջ 33:

foreign countries are presented. Within the scope of the article, it is proposed to establish a three-month period for the examination cases of protection of honor, dignity and business reputation in the first instance court, allowing the court in extremely exceptional cases to extend that period for another three months. Time limit, procedural time limit, time limit for cases regarding the honor and dignity, time limit for examination of cases, the business reputation honor, and dignity.

Аннотация. Данная статья посвящена особенностям рассмотрения дел о защите чести, достоинства и деловой репутации, а именно необходимости установления сжатых сроков разрешения спора. В рамках статьи рассматривается право, сформированное решениями ЕСПЧ, доктринальные подходы, опыт зарубежных стран. В рамках статьи предлагается установить трехмесячный срок для рассмотрения дел о защите чести, достоинства и деловой репутации в первой инстанции, с возможностью продления судом этого срока еще на три месяца в особо исключительных случаях.

Բանալի բառեր - ժամկետ, դատաբարական ժամկետ, պարզի արժանապատվության գործեր, գործերի քննության ժամկետ, գործարար համբավ, պարզիկ և արժանապատվություն:

Keywords: *period, trial period, cases of honor and dignity, period of examination of cases, business reputation, honor and dignity.*

Ключевые слова: *срок, испытательный срок, дела о чести и достоинстве, срок рассмотрения дел, деловая репутация, честь и достоинство.*

Զոհրաբյան Ա. - ի.գ.թ., «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի ղեկավար, էլ. հասցե՝ ara.zohrabyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 21.02.2023 թ., տրվել է գրախոսության 21.02.2023 թ., երաշխավորվել է ի.գ.թ. Մանե Կարապետյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-60>

ԿԱՐԱՊԵՏ ՍՄԲԱՏՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս,
ՀՀ դատախազության թիվ 2 կայազորի
գինվորական դատախազության դատախազ*

KARAPET SMBATYAN

*Master of the Yerevan State University Faculty of Law,
Number two garrison's prosecutor of Prosecutor's
Office of the Republic of Armenia*

КАРАПЕТ СМБАТЯН

*Магистр юридического факультета Ереванского государственного университета
Прокурор военной прокуратуры второго гарнизона Республики Армения*

**ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ՝ ՀՀ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
ՆԵՐԴՐՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**A FEW CONSIDERATIONS ON INVESTED CRIMINAL LIABILITY OF
LEGAL BODIES IN THE LEGAL SYSTEM OF THE REPUBLIC OF
ARMENIA**

**НЕСКОЛЬКО ПРИМЕЧАНИЙ ОТНОСИТЕЛЬНО ВКЛЮЧЁННОГО
В ЮРИДИЧЕСКУЮ СИСТЕМУ РА ИНСТИТУТА УГОЛОВНОЙ
ОТВЕТСТВЕННОСТИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ**

Ինչպես գիտենք, ՀՀ նախկին քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվության սուբյեկտ էր դիտարկում միայն ֆիզիկական անձանց: Իսկ ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ից, նկատելիորեն փոխել է այս հարցը: Այսպես՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ քրեական պատասխանատվության ենթակա է մեղսունակ ֆիզիկական անձը, որի տասնվեց տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, **ինչպես նաև իրավաբանական անձը:** Այս փոփոխությունը նորոպթ է ՀՀ իրավական համակարգի համար, և, փաստորեն, առաջին ան-

գամ քրեական պատասխանատվության ենթակա անձանց շրջանակը ընդլայնվել է՝ ներառելով իրավաբանական անձանց:

Իրավաբանական դոկտրինում սկեպցիզմով են վերաբերվում այս ինստիտուտի կիրառման անհրաժեշտությանը և հեռանկարներին: Խոսքը հատկապես վերաբերում է այն տեսաբաններին, որոնք ներկայացնում են դասական գերմանական քրեական իրավունքը՝ իր մեղքի հոգեբանական ընկալման տեսությամբ, որն անհնարին է համարում կազմակերպություններին քրեական պատասխանատվության ենթարկելը¹: Իսկ Տ. Մինյազևան և Ա. Սերբերենինիկովան նշում են, որ իրավաբանական անձանց (այսինքն՝ ոչ ոքի) քրեական պատասխանատվության ենթարկելով և մեղավոր ճանաչելով հնարավոր չէ նպաստել այնպիսի նպատակների իրագործմանը, ինչպիսիք են հանցագործությունների կանխումը և հանցանք կատարած անձանց ուղղումը²:

Կարծում ենք, որ նշված ինստիտուտի ներդրումը ՀՀ իրավական համակարգ առաջին հերթին պայմանավորված է միջազգային պարտավորությունների կատարմամբ: Մի շարք միջազգային կոնվենցիաներ, որոնք վավերացվել են ՀՀ-ի կողմից և ուժի մեջ մտել, պահանջում են ձեռնարկել այնպիսի միջոցներ, ինչպիսիք, հաշվի առնելով իրավական սկզբունքները, կարող են պահանջվել մի շարք լուրջ հանցագործությունների կատարմանը մասնակցելու համար իրավաբանական անձանց պատասխանատվություն սահմանելու համար: Նշվում է, որ մասնակից պետության իրավական սկզբունքների պահպանման պայմանով՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիաիրավական կամ վարչական: Կարևոր պահանջ է, սակայն, որ պատասխանատվությունն ունենա արդյունավետ, համաչափ և կանխարգելիչ (զսպող) ազդեցություն³:

Աշխարհին արագ տեմպերով է զարգանում, և գործընթացներից հետ չմնալու համար իրավական դաշտը պետք է համապատասխանեցվի գործող իրականության մեջ գոյություն ունեցող երևույթներին, որոնք, այնուամենայնիվ, միշտ մեկ քայլ առաջ են լինում: Ըստ մեզ՝ այս ինստիտուտի ներդրման պատճառներից մեկը նաև խոշոր կազմակերպությունների դերի և հնարավորությունների բարձրացումն է, ինչի արդյունքում ֆիզիկական անձինք հանցագործություններ կատարելու համար հաճախ ընտրում են քողարկված տարբերակ՝ ներգրավելով իրավաբանական անձանց: Օրինակ՝ իրավաբանական անձանց իրական ղեկավարները, փաստացի իրավական որևէ աղերս չունենալով կազմակերպության հետ, իրավաբանական անձին ղեկավարում են այլ անձանց միջոցով, որոնք իրականում չեն ղեկավարում դրանք, այլ զուտ կամակատարներ են: Երբ այդ կամակատարները, հրահանգներ ստանալով և իրավաբանական անձի հնարավորություններն օգտագործելով հանցանք են կատարում, պատասխանատվության են ենթարկվում, իսկ իրավաբանական անձի ետևում կանգնած իրա-

¹ Н. А. Голованова, В. И. Лафитский, М.А. Цурина, Уголовная ответственность юридических лиц в международном и национальном праве (сравнительно-правовое исследование), Москва, изд. Статут, 2013, էջ 181:

² Т. Ф. Миняева, А. В. Серебренникова, Уголовная ответственность юридических лиц в России и Германии: к постановке проблемы, 2017, էջ 149:

<https://cyberleninka.ru/article/n/ugolovnaya-otvetstvennost-yuridicheskikh-lits-v-rossii-i-germanii-k-postanovke-problemy/viewer> 01.12.2021.

³ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 10-րդ հոդված

ՄԱԿ կոռուպցիայի դեմ կոնվենցիա, 26-րդ հոդված

Եվրոպայի խորհրդի Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վլացման, հետախուզման, ազգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիա, 10-րդ հոդված

Եվրոպայի խորհրդի կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիա, 12-րդ հոդված

կան ղեկավարները կարողանում են խոյս տալ: Վերջիններս կարող են հեշտությամբ, այլ կամակատարներ նշանակելով, շարունակել հակաօրինական գործունեությունը: Եվ այս տեսանկյունից արդարացված է թվում իրավաբանական անձանց նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառումը, որով, բացի կամակատարներից, նաև ընկերությանը պատասխանատվության ենթարկելով և իրական ղեկավարների համար ֆինանսական բեռ կամ ընկերության համար դատվածություն առաջացնելով, կարելի է կանխել նման վարքագծի հետագա շարունակական կատարումը: Բացի դրանից՝ իրավաբանական անձին քրեական պատասխանատվության ենթարկելով՝ գործադիր մարմինը կամ սեփականատերը կարող է վերանայել իր վարքագիծը, օրինակ՝ անվտանգության առավել մեծ միջոցներ կիրառել, կամ խուսափել հետագա ապօրինի քայլերից: Կարող է դրանով իրավաբանական անձի հեղինակությանը վնաս պատճառվել, և դրա հետևում կանգնած մարդիկ, անշուշտ, պետք է հաշվի նստեն հնարավոր հետևանքների հետ⁴:

Ներկայում իրավաբանական անձանց հանցագործության համարպատասխանատվության ենթարկելու ինստիտուտը գործում է բազմաթիվ երկրներում՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա, Ֆրանսիա, Իսպանիա, Գերմանիա, Իտալիա, Չեխիա և այլն: Սակայն երկրները ինստիտուտի կիրառման հարցում դրսևորել են տարբեր մոտեցումներ:

Առաջին մոտեցումը հատկապես բնորոշ է անգլո-սաքսոնական իրավական ընտանիքի երկրներին: Այն ունի սովորության բնույթ և հիմնվում է նրա վրա, որ իրավաբանական անձը ֆիզիկական անձի պես համարվում է հանցագործության կատարման ինքնուրույն սուբյեկտ⁵:

Երկրորդ մոտեցումը ենթադրում է հանցագործության համար վարչական պատասխանատվության կիրառում իրավաբանական անձանց նկատմամբ: Գիտության մեջ այս մոդելը կոչվում է «իրավաբանական անձանց քվազիքրեական պատասխանատվություն»: Այս մոդելի կիրառման կարկառուն ներկայացուցիչը Գերմանիան է⁶, որտեղ այս մոդելը հարաբերականորեն ուշ ընդունվեց, և պատճառը ինստիտուտի ընկալման դժգոհակ խնդիրներն են⁷:

Իրավաբանական անձանց հանցագործության համար պատասխանատվության ենթարկելու երրորդ մոտեցման համաձայն՝ իրավաբանական անձը չի համարվում հանցագործության կատարման սուբյեկտ, սակայն կարող է ֆիզիկական անձի կողմից հանցագործություն կատարվելու դեպքում քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե հանցանքն ի շահ իրավաբանական անձի է կատարվել: Երրորդ տարբերակն է ներդրվել ՀՀ իրավական համակարգ, ուստի առավել մանրամասն անդրադառնանք կիրառվող տարբերակին:

Առաջին խնդիրը, որը կարող է ի հայտ գալ իրավակիրառ պրակտիկայում, կապված է ընթացակարգային նորմերի, ավելի կոնկրետ՝ դրանց արդյունավետության հետ: Ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով նախատեսված կարգավորումների՝ իրավաբանական անձի վերաբերյալ վարույթ կարող է նախաձեռնվել, միայն եթե Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածում նշված հանցանքի կա-

⁴ Миняева Т. Ф., Серебренникова А. В., Уголовная ответственность юридических лиц в России и Германии, 2017, էջ 149,

<https://cyberleninka.ru/article/n/ugolovnaya-otvetstvennost-yuridicheskikh-lits-v-rossii-i-germanii-k-postanovke-problemy/viewer> 01.12.2021.

⁵ Н.А. Голованова, В.И. Лафитский, М.А. Цирина, Уголовная ответственность юридических лиц в международном и национальном праве (сравнительно-правовое исследование), Москва, изд. Статут, 2013, էջ 13:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 14:

⁷ Michael Bohlander, Principles of German Criminal Law, Oregon, Hart Publishing, 2009, էջ 23:

պակցությամբ առկա է **օրինական ուժի մեջ մտած** մեղադրական դատավճիռ կամ ոչ ռե-աբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշում⁸: Իսկ իրավաբանական անձանց վերաբերյալ վարույթ նախաձեռնվելուց հետո կարող են կիրառվել, այսպես կոչված, ապա-հովման միջոցներ (խափանման միջոցներ), եթե առկա է հիմնավոր կասկած, որ ֆիզիկական անձը հանցանքն առերևույթ կատարել է ի շահ իրավաբանական անձի կամ այն կապված է նրա ծառայողական գործունեության հետ: Այս ձևաչափը կարող է քննության արդյունավե-տության տեսանկյունից լուրջ խնդիրների առաջ կանգնել: Իրավաբանական անձը (ղեկավար մարմնի ներկայացուցիչները), տեսնելով, որ այն ֆիզիկական անձը, որը հանցանք է կատարել ի շահ իրավաբանական անձի, կամ հանցագործություն է տեղի ունեցել անվտանգության մի-ջոցների բացակայության պայմաններում, քրեական պատասխանատվության է ենթարկվում, կարող է որոշակի թերություններ շտկել, տեղեկատվություն կեղծել, արհեստական խոչըն-դոտներ ստեղծել և բազմապիսի այլ արարքներ կատարել՝ անհնարին դարձնելով վարույ-թի հետագա արդյունավետ ընթացքը: Խնդիրներ կարող են առաջանալ նաև այն դեպքում, երբ կատարվում է շարունակվող հանցագործություն, և օրենքը հնարավորություն չի տալիս, իրավաբանական անձի վրա ներգործելով կանխել ապօրինի արարքները: Այդպիսի արարք-ներ իրագործելու համար ներկայիս կարգավորումներով տրված են բավարար ժամկետներ և ստեղծված են հնարավորություններ:

Էլ ավելի մեծ խնդիրներ կարող են առաջանալ հետևյալ իրավիճակում: Այն անձը, որը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակից է, և որն իրավաբանա-կան անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավա-տություն ունի և կատարել է հանցանք՝ կարող է փաստացի դուրս գալ այդ իրավիճակից նա-խատեսվող կարգավորումների շրջանակում՝ իրավաբանական անձի անունից հանդես գա-լով կամ իրավաբանական անձի միջոցով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը կամ դրա մասը վաճառել կամ այլ ձևով զիջել տվյալ ընկերության մեկ կամ մի քանի մասնակցի: Եթե, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությանը համապատասխան, մասնակցի բաժնեմասի (դրա մասի) օտարումը երրորդ անձանց հնարավոր չէ, իսկ ընկերության մյուս մասնակիցները հրաժարվում են այն գնելուց, ընկերությունը պարտավոր է ձեռք բերել մաս-նակցի բաժնեմասը: Ընկերության մասնակցի կողմից իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ անձանց օտարվել թույլատրվում է, եթե այլ բան նախատեսված չէ ընկերության կանոնադ-րությամբ: Իսկ 103-րդ և 104-րդ հոդվածները սահմանում են, որ սահմանափակ պատասխա-նատվությամբ ընկերության մասնակիցը, անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից: Սահմանափակ պատաս-խանատվությամբ ընկերությունից դուրս եկած մասնակցին վճարվում է կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասին համապատասխանող գույքի արժեքը, եթե այլ բան նախա-տեսված չէ ընկերության կանոնադրությամբ: Այսինքն՝ ստացվում է, որ ՍՊԸ-ի մասնակի-ցը, որը հանցանք է կատարել, և որի արարքի համար պատասխանատվություն պետք է կրի նաև իրավաբանական անձը, տեսնելով, որ կարող է վարույթ նախաձեռնվել նաև իրավա-բանական անձի վերաբերյալ, և ինչի արդյունքում ինքը նույնպես կարող է ֆինանսական

⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 438-րդ հոդվածի 1-ին մաս:

կորուստներ ունենալ, ապահովագրում է իրեն և դուրս է գալիս ընկերությունից: Վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն չի ունենում կանխելու այդ գործընթացը, քանի որ վարույթ կարող է նախաձեռնվել միայն այն բանից հետո, երբ ֆիզիկական անձի կողմից կատարված հանցանքի կապակցությամբ առկա էօրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ կամ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշում: Ստեղծվելու է այնպիսի իրավիճակ, երբ պատասխանատվության է ենթարկվում իրավաբանական անձը, բայց ոչ արդարացի ձևով, որովհետև մնացած մասնակիցները կապ չեն ունենում հանցանքի հետ և իրենց ներդրած գույքով պատասխան են տալիս այլ անձի կողմից կատարվածի համար: Կամ էլ հաշվի առնելով այն փաստը, որ իրավաբանական անձին քրեական պատասխանատվության առջև կանգնեցրած անձն այլևս դրա մասնակից չէ, իրավաբանական անձը նույնպես պատասխանատվության չի ենթարկվում: Այդ դեպքում այս ինստիտուտը դառնում է ոչ արդյունավետ և կիրառման ոչ ենթակա:

Մեր կարծիքով՝ երբ ֆիզիկական անձի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում, և քննության ընթացքում առկա է լինում հիմնավոր կասկած, որ ֆիզիկական անձի կողմից հանցանքն առերևույթ կատարվել է՝ ի շահ իրավաբանական անձի կամ կապված է նրա ծառայողական գործունեության հետ, ապա պետք է միաժամանակ իրավաբանական անձի վերաբերյալ վարույթ նախաձեռնվի, և անհրաժեշտության դեպքում կիրառվեն ապահովման միջոցներ: Ուստի, մենք հակված ենք այն մոդելին, ըստ որի՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ վարույթներն ընթանան միաժամանակ: Նման կարգավորումներ գործում են Սլովենիայում և Չեխիայում: Չեխիայի քրեական օրենսգրքը հանցագործության կատարման սուբյեկտ է դիտարկում նաև իրավաբանական անձանց, և սահմանված է, որ համատեղ քննություն է անցկացվում մեղադրվող իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ, եթե գործերը կապված են, և եթե չկան էական պատճառներ, որոնք խոչընդոտում են դրա իրագործմանը⁹: Միևնույն ժամանակ նշված է, որ քրեական պատասխանատվությունը պետք է գնահատվի առանձին¹⁰, իսկ գործի քննությունը պետք է որպես կանոն իրականացվի՝ ֆիզիկական անձի առաջնահերթությամբ¹¹:

Հաջորդ խնդիրը վերաբերում է ՀՀ քրեական նոր օրենսգրքով նախատեսված հանցակազմերի շրջանակին, ինչերով նախատեսված արարքների կատարման համար քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել իրավաբանական անձինք: Նշենք, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծի սկզբնական տարբերակը, որը դեռևս 2019 թվականին տեղադրվել էր իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am), սահմանում էր այն կոնկրետ հանցակազմերը, որոնց համար պատասխանատվություն է նախատեսված իրավաբանական անձանց համար, և դրանց թիվը հասնում էր երկու հարյուրի: Սակայն նոր օրենսգրքը որդեգրել է այլ մոտեցում: Օրենսգրքում ոչինչ նշված չէ հանցակազմերի շրջանակի մասին, ինչը ենթադրում է, որ իրավաբանական անձինք տեսականորեն կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել կատարած յուրաքանչյուր հանցագործության համար: Իհարկե, այս շրջանակից կարող ենք հանել այն հանցակազմերը, որոնք նախատեսում են հանցագործության կատարման հատուկ սուբյեկտ: Հատուկ

⁹ Չեխիայի Հանրապետության քրեական օրենսգրք, հոդված 31-ի առաջին մաս:

¹⁰ Տե՛ս նույն տեղում 2-րդ մաս:

¹¹ Տե՛ս նույն տեղում 3-րդ մաս:

սուբյեկտների մեծ մասը չի կարող լինել իրավաբանական անձի ներկայացուցիչ կամ հանդես գալ նրա անունից ինչպիսիք են զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարման սուբյեկտները: Սակայն մնացած հանցագործությունների դեպքում ամեն ինչ այդքան հստակ չէ:

Պետք է նշել, որ այն երկրներում, որտեղ նախատեսված է քրեական պատասխանատվություն իրավաբանական անձանց համար, որպես կանոն, կամ ընդհանուր մասում են սահմանված կոնկրետ հանցակազմերը, որոնց կատարման դեպքում քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել իրավաբանական անձինք (Ֆրանսիա, Իսպանիա, Չեխիա, Էստոնիա, Սլովենիա, Նորվեգիա, Մոլդովա), կամ հատուկ մասի կոնկրետ հանցակազմերի սանկցիաներում է նշում կատարվում (Ֆինլանդիա): Նույնիսկ ընդհանուր իրավունքի երկրներում, որտեղ իրավաբանական անձինք համարվում են նաև հանցագործության կատարման սուբյեկտներ, ոչ բոլոր հանցագործությունների կատարման համար կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել: Նոր Զելանդիայում իրավաբանական անձինք չեն կարող քրեական պատասխանատվության ենթարկվել այնպիսի հանցագործությունների համար, ինչպիսիք են սպանությունը, անզգուշությամբ մահ պատճառելը, սուտ ցուցմունք տալը, երկամուսնությունը¹²: Միևնույն ժամանակ այն պետությունը, որտեղ կազմակերպությունների նկատմամբ մեղադրական դատավճիռներ են կայացվում ամենատարբեր հանցագործությունների համար, սկսած գողությունից և վերջացած սպանություններով՝ ԱՄՆ-ն է¹³:

Ինչպես նշել ենք, ՀՀ քրեական նոր օրենսգրքի համաձայն, իրավաբանական անձինք կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել կատարած յուրաքանչյուր հանցագործության համար: Մեր կարծիքով՝ որոշ հանցակազմերի դեպքում լուրջ խնդիրներ կարող են առաջանալ իրավական որոշակիության սկզբունքի առումով: Այսպես, ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածում սահմանված է, որ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Սահմանադրական դատարանը նույնպես իր որոշմամբ անդրադարձել է այս սկզբունքին՝ նշելով, որ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը¹⁴: Իսկ ՄԻԵԴ-ը Մեղվեղևը և այլք ընդդեմ Ֆրանսիայի գործով նշել է, որ չի կարելի անդել, որ Ֆրանսիայի օրենքը բավարարում էր իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքին, քանի որ այն չէր համապատասխանում կանխատեսելիության և մատչելիության անհրաժեշտ պայմաններին¹⁵:

ՀՀ քրեական նոր օրենսգրքում առկա են հանցակազմեր, որոնցով նախատեսված արարքների կատարման համար ընդհանրապես հնարավոր չէ քրեական պատասխանատվություն

¹² Н. А. Голованова, В. И. Лафитский, М. А. Цирина, Уголовная ответственность юридических лиц в международном и национальном праве (сравнительно-правовое исследование), Москва, изд. Статут, 2013, էջ 310:

¹³ Бернам У., Правовая система США, 3-й выпуск / науч. ред. В. А. Власихин. М., 2006, էջ 890:

¹⁴ ՍԴԴ-630 որոշում:

¹⁵ Case of Medvedev and others v France, կետ 92:

նախատեսել իրավաբանական անձանց համար: Առաջին հերթին խոսքը վերաբերում է այն հանցակազմերին, որոնք նախատեսում են հանցագործության կատարման հատուկ սուբյեկտ: Հատուկ սուբյեկտների մեծ մասը չի կարող լինել իրավաբանական անձի ներկայացուցիչ կամ հանդես գալ նրա անունից, ինչպիսիք են զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարման սուբյեկտները և այլն: Մինչդեռ կան հանցակազմեր, որոնք չեն պահանջում հանցագործության կատարման հատուկ սուբյեկտ, սակայն, միևնույն ժամանակ, մեր կարծիքով, հնարավոր չէ դրանց դեպքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը: Խոսքը վերաբերում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի 178-րդ և 180-րդ հոդվածներին՝ մարդու իմունային անբավարարության վիճակով կամ սեռավարակով անզգուշությամբ վարակելուն: Բանն այն է, որ նշված հանցակազմերով նախատեսված արարքները հնարավոր չէ կատարել՝ ի շահ իրավաբանական անձի՝ գործելով՝ ինչպես նախատեսված է 123-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով: Անհնար է, որ իրավաբանական անձը չապահովի դրա գործունեությունը կարգավորող օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների կատարումը, և դա հանգեցնի հանցագործության, ինչը նախատեսված է նույն հոդվածի նույն մասի 2-րդ կետով, և վերջապես արարքը հնարավոր չէ կատարել՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով կամ իրավաբանական անձի միջոցով (այն օգտագործելով), ինչը պահանջվում է 3-րդ մասով, քանի որ վարակի փոխանցումը խիստ անձնական և ֆիզիկական բնույթ ունի: Նմանապես հնարավոր չէ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկել այնպիսի հանցագործությունների համար, ինչպիսիք են քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը, ինչպես նաև գերեզմանը անարգանքի ենթարկելը:

Annotation. Taking into account the fact that new clauses of Criminal Code of the Republic of Armenia on criminal liability of legal bodies have been entered into force, we consider it contemporary to refer to this institution, to some of its upcoming usage problems, to show some ways of overcoming that problems and prevent possible defects.

An object of the work is to demonstrate in detail the essence of the legal bodies liability institution, reasons of its investing, some opinions of prominent people on it, international experience and some defects of the Armenian version.

The work is introduced in principles of comparative analyses as well as showing contemporary problems and international experience.

Аннотация. Принимая во внимание то, что уже вступили в силу некоторые положения об уголовной ответственности юридических лиц нового уголовного кодекса Республики Армения, сочли своевременным обратиться к рассмотрению данного института, а при осуществлении одного на вероятные затруднения, показать ряд способов их преодоления и предотвращения возможных упущений.

Цель работы - по возможности развёрнуто изложить суть института уголовной ответственности юридических лиц, причины его вложения, ряд мнений почтенных лиц, а также неполноценные стороны варианта, вложенного в юридическую систему Республики Армения.

Работа подготовлена для предоставления актуальных проблем, международного опыта, а также на основе сопоставительно-юридического анализа.

Բանալի բառեր - իրավաբանական անձ, քրեական պատասխանատվության սուբյեկտ, հանցագործության սուբյեկտ, ՀՀ քրեական նոր օրենսգիրք, իրավական որոշակիության սկզբունք:

Keywords: *legal body, a subject of criminal liability, a subject of a crime, The New Criminal Code of the Republic of Armenia, a principle of legal certainty.*

Ключевые слова: *юридическое лицо, субъект уголовной ответственности, субъект преступления, новый уголовный кодекс Республики Армения, принцип правовой определенности.*

Սմբատյան Կ. - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս, ՀՀ դատախազության թիվ 2 կայազորի գինվորական դատախազության դատախազ, էլ. հասցե՝ karapetsmbatyan96@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 07.12.2022 թ., տրվել է գրախոսության 06.02.2023 թ., երաշխավորվել է ՀՀ գիտությունների ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի քաղաքագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Ռազմիկ Մարիկյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.:

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-68>

ՄԱՐԹԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՀ նստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետ, նստիկանության փոխգնդապետ, Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի քրեական իրավունքի և քրեադատավարության ամբիոնի հայցորդ

MARTHA MELIKSEYAN

Head of Juvenile Affairs and Domestic Violence Prevention Department of the Malatya Department of the Yerevan Police Department of the RA Police, Lieutenant Colonel of the Police, Applicant at the Chair of Criminal Law and Criminal Procedure of the Russian-Armenian/Slavic/University

МАРТА МЕЛИКСЕТЯН

Начальник отдела по делам несовершеннолетних и предупреждению домашнего насилия отдела управления «Малатия» Полиции города Еревана РА, подполковник полиции, соискатель кафедры уголовного права и уголовного процесса Российско-Армянского (Славянского) университета

**ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

**WAYS TO IMPROVE COOPERATION BETWEEN DEPARTMENTS FOR
JUVENILE AFFAIRS AND FOR THE PREVENTION OF DOMESTIC
VIOLENCE AND GUARDIANSHIP AND GUARDIANSHIP AUTHORITIES
IN THE FIELD OF PROTECTING THE RIGHTS OF CHILDREN
SUBJECTED TO VIOLENCE**

**ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ СОТРУДНИЧЕСТВА ОТДЕЛЕНИЙ
ПО ДЕЛАМ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ И ПО ПРЕДУПРЕЖДЕНИЮ**

НАСИЛИЯ В СЕМЬЕ И ОРГАНОВ ОПЕКИ И ПОПЕЧИТЕЛЬСТВА В СФЕРЕ ЗАЩИТЫ ПРАВ ДЕТЕЙ, ПОДВЕРГШИХСЯ НАСИЛИЮ

Պետությունը բոլոր երեխաներին, որպես բնակչության ամենաանպաշտպան զանգվածի, պետք է երաշխավորի հասարակությունում ապահով և լիարժեք կյանքով ապրելու հնարավորություն: Այն դեպքերում, երբ հանցագործությունից տուժողն անչափահաս է, պետության միջամտությունը պետք է լինի այնպիսին, որ հետագա ինտեգրումը հասարակություն նրան դարձնի հասարակության լիիրավ անդամ և պիտանի անձ:

Հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունները պայմանավորել են երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պետական քաղաքականության ձևավորման անհրաժեշտությունը: Դրա հետ մեկտեղ պետք է փաստել, որ այս ոլորտում առկա իրավիճակը բնութագրվում է հակասական տենդենցներով:

Հայաստանի Հանրապետությունում գործում է երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ համայնքային, մարզային և ազգային մակարդակներում:

Համայնքային մակարդակում հիմնական դերակատարը խնամակալության և հոգաբարձության մարմինն է:

Մարզային մակարդակում հիմնական դերակատարները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ու տարածքային կառավարման նախարարների համատեղ հրամանով ստեղծված մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմերի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններն են: Այս բաժիններից յուրաքանչյուրում աշխատում է բազմամասնագիտական խումբ, որի կազմում կա բժիշկ, մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող և իրավաբան:

Ազգային մակարդակում գործում է Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը, որի աշխատանքները համակարգվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, իսկ հանձնաժողովի նախագահը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն է: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են բոլոր պետական այն մարմիններն ու կազմակերպությունները, որոնք ունեն համապատասխան լիազորություններ երեխայի պաշտպանության և աջակցության հարցում: Բացի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից՝ այդ ցանկում են նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, առողջապահության, արդարադատության, տարածքային կառավարման և զարգացման նախարարություններն ու Ոստիկանությունը:

Հանձնաժողովի նպատակն է նպաստել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը, աջակցել ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգմանը:

Համաձայն գործող օրենսդրության՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրենց գործառույթներն են իրականացնում նաև դատախազությունը, դատարանները, ոստիկանության ենթակա ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքները, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնները, առողջապահական հիմնարկները, կրթական հաստատությունները և այլն:

¹ Տես՝ Անչափահասների մասնակցությամբ գործերով մասնագիտացված քննիչների պատրաստման մոդուլներ, Մոդուլ 5՝ Սոցիալական աջակցության ոլորտ, Գ. Հովակիմյան, Է. Վիրապյան, Եր, 2017, էջ 8:

Պետք է նշել, որ երեխաների նկատմամբ բռնությունը դիտարկվում է ոչ միայն որպես քրեաիրավական, այլև որպես համալիր սոցիալական խնդիր, և ըստ այդմ՝ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ոչ միայն դրա հետևանքների վերացման, այլ նաև կանխարգելման ուղղությամբ:

ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների հիմնական գործառնություններից մեկն է անչափահասների պաշտպանությունը հանցավոր ոտնձգություններից, 2018 թվականից՝ նաև «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) համատեքստում:

Սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում լայնածավալ լիազորություններով և աշխատանքային մեխանիզմներով օժտված են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները, մասնավորապես՝ այդպիսիք սահմանում են ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման, որը հաստատում է խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը և մի շարք այլ իրավական ակտեր: Համաձայն նշված որոշման՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների խնդիրներն են՝

1) անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը:

2) երեխայի՝ ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու իրավունքի ապահովումը:

3) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ նրանց հրատապ օգնության, անհրաժեշտության դեպքում նաև անհապաղ տեղավորման ապահովումը:

4) Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ խնդիրներ²:

Վերլուծությունը կատարվել է 2018 հունվարի 1-ից առ 2022 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ոստիկանության Մալաթիայի բաժնի ԱԳ և ԸԲԿ բաժանմունքների և համայնքի խնամակալության ու հոգաբարձության մարմինների համատեղ աշխատանքների արդյունքների հիման վրա:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 58-րդ հոդվածի՝

1. Երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինն իրավասու է անմիջապես երեխային վերցնելու ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան:

2. Երեխային վերցնելիս խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անհապաղ ապահովել երեխայի ժամանակավոր տեղավորումը և յոթ օրվա ժամկետում դիմել դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով:

Ըստ վերոհիշյալ կառավարության որոշման՝ երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում երեխային վերցնում են ծնողներից կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, անհապաղ ապահովում են երեխայի ժամանակավոր տեղավորումը և 7-օրյա ժամկետում դիմում դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին)

² Տես՝ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշում, 8-րդ կետ:

ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով³:

Պետք է արձանագրել, որ 2018 թվականից ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների և խնամակալության և հոգաբարձության մարմինների համագործակցությունը ընդլայնվել է Օրենքի համատեքստում:

Անչափահասի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու և ընտանիքում անչափահասներին բռնության ենթարկելու դեպքերի համատեղ վերլուծությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետի 22-րդ կետը հենց վերաբերվում է ընտանիքում կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալուն:

Նշված ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի ԱԳ և ԸԲԿ բաժանմունքի և ԽՀՀ-րի իրականացված աշխատանքների վերլուծությունը հուսադրող չէ: Այն պայմանավորված է նրանով, որ քննարկվող ժամանակահատվածում ԽՀՀ-ի նախաձեռնությամբ չեն հայտնաբերվել ընտանիքներ, որտեղ ծնողների կողմից պատշաճ չեն կատարվում ծնողական պարտականությունները, ավելին՝ երեխաների կյանքին և առողջությանը ընտանիքում վտանգ է սպառնում: Բոլոր դեպքերում նման ընտանիքների հայտնաբերման ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ են իրականացվել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի մասնագիտացված ստորաբաժանումների ծառայողները, ավելին՝ վերջիններիս կողմից նշված ժամանակահատվածում բացահայտվել է անչափահասի թրաֆիքինգի մեկ դեպք, ֆիզիկական ուժեղ ցավ և հոգեկան տառապանք պատճառելու 6 դեպք, երեխայի խնամքի և դաստիարակության պարտականությունները չկատարելու 2 դեպք, որոնց առթիվ նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 132.2 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 119-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով հարուցվել են քրեական գործեր և ուղարկվել նախաքննության, գործող ՀՀ քրեական օրենսգրքի 196 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 247-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով դեպքերը արձանագրվել են, որոնցով քրեական վարույթ է նախաձեռնվել: Ավելին՝ նշված դեպքերով համապատասխան իրազեկում է ուղարկվել համայնքի ԽՀՀ և մինչ հանձնաժողովի նիստի կայացումը ՀՀ ոստիկանությունը միջոցներ է ձեռնարկել երեխաներին ծնողներից վերցնելու ուղղությամբ, անհապաղ ապահովել են երեխաների ժամանակավոր տեղավորումը:

Բնականաբար, գործնականում օրենքի կիրառումը թույլ է տալիս կատարել որոշակի եզրահանգումներ, վերհանել ընթացակարգային թերություններն ու բացթողումները և դրա հիման վրա, իրականացնելով համապատասխան վերլուծություններ, մշակել ՀՀ ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումների և համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների համագործակցության կատարելագործմանն ուղղված մի շարք առաջարկություններ:

Ինչպես արդեն նշվել էր, ՀՀ կառավարության 02.06.2016 թվականի որոշմամբ սահմանվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կանոնադրությունը, համաձայն որի ՀՀ ոստիկանության ներկայացուցիչները այլևս չեն համարվում հանձնաժողովների կազմում պարտադիր անդամ, ինչը, իհարկե, մեր դիտարկմամբ գործնականում մի շարք խնդիրներ է առաջացնում: Խոսքը մեծապես վերաբերվում է երեխաների իրավունքների պաշտպանության պարտականությունների կատարման արդյունավետությանը, ու 2018 թվա-

³ Տես՝ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշում, 9-րդ կետի 22-րդ ենթակետ:

կանից գործնականում կիրառվող Օրենքի շրջանակում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների լիազորությունների իրականացման մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը:

Սակայն, կիրառման մեխանիզմների բացակայության պատճառով դեռևս կան չլուծված խնդիրներ:

Հիշյալ դեպքերում ՀՀ ոստիկանության և համայնքների ԽՀՀ-ների համատեղ աշխատանքային գործունեությունը մեծապես սահմանված է Օրենքով:

Օրենքով սահմանված է այն, որ ՀՀ ոստիկանությունը կայացնում է օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված անհետաձգելի միջամտության որոշումներ, ինչպես նաև հսկողություն է իրականացնում անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ՝ ոստիկանության պետի սահմանած կարգին համապատասխան:

Երեք տարվա աշխատանքային գործունեության շրջանակում բոլոր այն դեպքերում, երբ բռնությունից ենթարկված անձինք եղել են անչափահասներ և ընտանիքում բռնություն գործադրած անձանց նկատմամբ կիրառվել է անհետաձգելի միջամտության որոշումներ, այդ մասին անհապաղ տեղեկացվել են տարածքային խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները, սակայն այդ դեպքերից և ոչ մեկի դեպքում ԽՀՀ արտահերթ և հրատապ նիստեր չեն հրավիրվել, իրավիճակը չի ուսումնասիրվել և չի գնահատվել, հետևաբար, օրենքով և իր կանոնադրությամբ նախատեսված գործողություններ միջոցներ չեն ձեռնարկվել:

Անհրաժեշտ է ուսումնասիրել այն դեպքերը, երբ ոստիկանությունը ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն կիրառելու դեպքում, և բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին հիմնավոր ենթադրություն առկայության դեպքում, ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում, և անմիջականորեն սպառնացող վտանգի տակ գտնվող անչափահաս կամ անգործունակ անձ է, ապա պետք է այդ որոշման պատճենը և համապատասխան արձանագրությունն անհապաղ ուղարկի խնամակալության և հոգաբարձության մարմնին, որը, գնահատելով իրավիճակը, պետք է ձեռնարկի օրենքով և իր կանոնադրությամբ նախատեսված գործողություններ: Ավելին, եթե անհետաձգելի միջամտության որոշումը կիրառվում է անչափահաս կամ անգործունակ անձի հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցչի նկատմամբ, ապա երեխաների և անգործունակ անձանց ժամանակավոր խնամքը կազմակերպում է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ որոշման պատճենն ստանալուց հետո՝ հնարավորին չափ սեղմ ժամկետում, բայց ոչ ավելի, քան 24 ժամում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առաջնորդվելով նրանց շահերով:

Գործնականում այս առումով կարող են առաջանալ մի շարք ընթացակարգային բարդություններ: Օրինակ, խնամակալության և հոգաբարձության մարմնի աշխատանքային ժամի ավարտին պես կամ ոչ աշխատանքային օրերին ոստիկանության կողմից նմանատիպ դեպքեր հայտնաբերելու և անհապաղ անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու դեպքում, ըստ էության, ոստիկանությունը, բացառությամբ խնամակալության և հոգաբարձության մարմնին դեպքի մասին իրազեկելու, որևէ այլ լիազորությամբ օժտված չէ: Անգամ հայտնելու դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինը բոլոր դեպքերով արձագանքում է սովորական աշխատանքային ընթացակարգով, այնինչ օրենքով նախատեսված է անհապաղ և անհետաձգելի գործողությունների կատարումը առավելապես այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս է: Պարբերաբար անցկացվող քննարկումներ

րին սույն հարցն մեր կողմից բարձրացվել է, պարզվել է, որ ԽՀՀ աշխատում է հասարակական հիմունքներով, հանձնաժողովի անդամներն աշխատանքային օրվա ավարտից հետո որևէ իրավական ակտով լրացուցիչ աշխատանքներ իրականացնելու պարտավորություն չեն կրում: Եթե ընտանիքում բռնություն գործադրողն անչափահասի հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցիչն է և բռնության կրկնման կամ շարունակման վտանգ կա, ապա անհրաժեշտություն է առաջանում բռնության ենթարկված երեխայի կյանքի և առողջության անվտանգության ապահովման նպատակով նրան տեղափոխել երեխանի ժամանակավոր խնամքի կենտրոններից որևէ մեկը, իսկ նման պայմաններում նշված հարցի կարգավորումն օրենսդրական մակարդակով վերապահված է խնամակալության և հոգաբարձության մարմնին:

Կասկածից վեր է, որ խախտվում է երեխայի լավագույն շահերի առաջնահերթության սկզբունքը, ինչն անթույլատրելի է: Ոստիկանության լիազորությունները չպետք է սահմանափակված լինեն, ըստ էության, միայն նախազգուշացման կամ անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու, վերջինիս, ինչպես նաև պաշտպանական որոշման նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև կանխարգելիչ հաշվառում իրականացնելու հնարավորությամբ:

Գործնականում բացառություն չեն կազմում այն դեպքերը, երբ ընտանիքում երեխայի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կարող է թելադրել ոստիկանության ծառայողին անհապաղ երեխային ընտանիքից հեռացնել մինչև խնամակալության և հոգաբարձության մարմնին այդ մասին իրազեկելը:

Մեր համոզմամբ՝ ոստիկանության լիազորությունները չպետք է սահմանափակված լինեն ըստ էության միայն նախազգուշացման կամ անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու, վերջինիս, ինչպես նաև պաշտպանական որոշման նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև կանխարգելիչ հաշվառում իրականացնելու հնարավորությամբ:

ԽՀ հանձնաժողովները կատարում են համայնքում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության վիճակի մշտադիտարկում՝ ընդհանուր առմամբ և համայնքում բնակվող այն ընտանիքների հայտնաբերում, որոնցում առկա է երեխայի իրավունքների կամ շահերի խախտման վտանգ և այդ ընտանիքներում ապրող երեխաների իրավիճակի հատուկ մշտադիտարկում՝ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, հանրակրթական ուսումնական հաստատությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, ընդ որում՝ մշտադիտարկման ժամկետները և հաճախականությունը սահմանվում են՝ ըստ կարիքի՝ ելնելով իրավիճակից, որի մասին ամեն երեխայի համար ընդունվում է առանձին որոշում, իսկ դրանց արդյունքները, ըստ անհրաժեշտության, կարող են ներկայացվել և քննարկվել երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովում⁴: Պետք է նշել, որ մշտադիտարկման կարգ որևէ իրավական ակտով սահմանված չէ:

Այսպիսով, առաջարկվում է՝

- ՀՀ ընտանեկան օրենսգրքի 58-րդ հոդվածը համալրել ոստիկանության կողմից վերոհիշյալ լիազորությունները ստանձնելու հնարավորությամբ:

- Առաջարկվում է 02.06.2016 թ. ՀՀ կառավարության 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 14-րդ կետում կատարել լրացումներ, նախատեսելով ՀՀ ոստիկանության

⁴ Տես՝ ՀՀ կառավարության թիվ 631-Ն որոշում, 15-րդ կետ:

ներկայացուցչի պարտադիր ընդգրկումը հանձնաժողովի կազմում: Առաջարկվում է վարչական շրջաններում ստեղծել արագ արձագանքման խմբեր, որոնք բաղկացած կլինեն ՀՀ ոստիկանության ներկայացուցչից, ԽՀՀ անդամներից որևի մեկից (սահմանել հերթապահություն), միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների սոցաշխատողներից, - մշակել երեխայի հանդեպ բռնության երևույթի վերացմանն ուղղված շահագրգիռ մարմինների համաձայնեցված գործունեության կառուցակարգեր (մեխանիզմներ), խոսքը մեծապես վերաբերվում է ԽՀՀ-ի և ՄՍԾՏԿ-ների կողմից մշտադիտարկումների իրականացման կարգը սահմանող ենթաօրենսդրական ակտերի մշակմանը:

Annotation. The article discusses the problem of the imperfection of legislation and mechanisms of cooperation between departments for juvenile affairs and for the prevention of domestic violence and guardianship and guardianship authorities in the field of protecting the rights of children who have been subjected to violence. Proposals for improving legislation and cooperation mechanisms are presented, based on the conclusions and research of the author in the course of the author's practical activities.

Аннотация. В статье анализируется проблема несовершенства законодательства и механизмов сотрудничества по делам несовершеннолетних и по предупреждению насилия в семье и органов опеки и попечительства в сфере защиты прав детей, подвергшихся насилию. Представлены предложения по совершенствованию законодательства и механизмов сотрудничества, основанные на выводах и исследованиях автора, полученных в ходе практической деятельности автора.

Բանալի բառեր - անչափահաս, բռնություն, ընդանիք, համագործակցություն, ոստիկանություն, խնամակալության և հոգաբարձության մարմին:

Keywords: *minor, violence, cooperation, police, guardianship and guardianship authorities.*

Ключевые слова: *несовершеннолетний, насилие, сотрудничество, полиция, органы опеки и попечительства.*

Մեղիքության Մ. - ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ, Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի քրեական իրավունքի և քրեադատավարության ամբիոնի հայցորդ, էլ. հասցե՝ marta2209@yandex.com:

Ներկայացվել է խմբագրություն 30.03.2023 թ., տրվել է գրախոսության 30.03.2023 թ., երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՀ վաստակավոր իրավաբան Ս. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.:

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-75>

ԱԴԵԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
*իրավաբանական գիտությունների թեկնածու,
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և
քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս*

ADELINA SARGSYAN
*PhD in Law
Lecturer of the Department of Criminal Law and
Criminal Procedure Law
Institute of Law and Politics of the Russian-Armenian University*

АДЕЛИНА САРГСЯН
*кандидат юридических наук
преподаватель кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права и политики Российско-Армянского университета*

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵՆՍԱԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

**SOME PROBLEMS OF THE NEED FOR CRIMINAL LAW REGULATION
OF MODERN BIOMEDICAL TECHNOLOGIES**

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ НЕОБХОДИМОСТИ УГОЛОВНО-
ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ СОВРЕМЕННЫХ БИОМЕДИЦИНСКИХ
ТЕХНОЛОГИЙ**

*Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական
աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR-5E012):*

Բժշկության մեջ գիտատեխնոլոգիական առաջխաղացումը, ժամանակակից կենսաբժշկական տեխնոլոգիաները ներկայումս թույլ են տալիս դրանք օգտագործել անբուժելի հիվանդությունների բուժման նպատակով, մինչույն ժամանակ, այս ընթացակարգերի պատշաճ իրավական կարգավորման բացակայության պայմաններում անհնար է դրանց անվտանգ

և անխոչընդոտ օգտագործումը: Նշվածի կապակցությամբ կարևոր է նաև ժամանակակից կենսաբժշկական տեխնոլոգիաների քրեաիրավական կարգավորման դիտարկումը: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նախանշված են ոչ ավանդական յատրոգեն հանցագործությունների քրեականացման որոշ ուղենիշներ, մասնավորապես, քրեական պատասխանատվություն է նախատեսված կլոնավորման և եվգենիկական փորձերի համար: Միևնույն ժամանակ, քրեաիրավական կարգավորման շրջանակից դուրս են մնացել թերապևտիկ կլոնավորման և մարդու գենոմի խմբագրման հարցերը: Հաշվի առնելով գենետիկական և գենոմային մշակումների զարգացման արագությունն ու մասշտաբների ընդլայնումը՝ նշված ոլորտի իրավական կարգավորման առարկան ենթակա է մշտական վերափոխումների¹: Իհարկե, մարդու գենոմի խմբագրումը կարող է հետաքրքիր լինել բժշկության համար գենոթերապիայի համատեքստում, որը վերաբերում է մարդու գենոմի միջամտությանը՝ որոշակի հիվանդությունների բուժման նպատակով: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ խոսքը վերաբերում է այն բջիջներին միջամտելուն, որոնք չեն մասնակցում վերարտադրությանը: Այստեղից սահուն կերպով բխում են եվգենիկայի և եվգենիկական փորձերի հարցերը, որոնք իրենց ամրագրումն են գտել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում եվգենիկայի համար, այն է՝ եվգենիկական փորձեր՝ մարդու բարելավմանն (սելեկցիային) ուղղված ցանկացած գործողությունների կատարում: Քրեական իրավունքի գիտության մեջ եվգենիկ գաղափարների նկատմամբ միանշանակ վերաբերմունք չկա: Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ եվգենիկայի և դրա անթույլատրելիության մասին հիշատակումն իր արտացոլումն է գտել 2015 թվականի ՀՀ Սահմանադրության մեջ, որի 25-րդ հոդվածի համաձայն (Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք)՝ «բժշկության և կենսաբանության բնագավառում, մասնավորապես, արգելված են եվգենիկայի փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը»:

Պետք է փաստել, որ ընդհանուր առմամբ, հայկական օրենսդիրը չի պարունակում ժամանակակից կենսաբժշկական տեխնոլոգիաների համարժեք իրավական կարգավորում: Ի տարբերություն արտասահմանյան շատ երկրների օրենսդրության, ցավոք, Հայաստանի Հանրապետությունում պատշաճ մակարդակով չկա գենոմային հետազոտությունների իրավական պաշտպանություն, բացակայում են մարդու գենոմի նկատմամբ ոտնձգությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող հատուկ հանցակազմեր:

Անհրաժեշտ է հասկանալ, թե որքանով գենոմային հետազոտություններ պետք է ստանան քրեաիրավական կարգավորում, արդյո՞ք գենոմի խմբագրումը թույլատրելի է և ինչ սահմաններում:

Այսպես, օրինակ, Ի. Յա. Կոզաչենկոն, բարձրացնելով գենետիկական արժանապատվության և ինքնության հարցը, նշում է, որ գենը, դեզօքսիռիբոնուկլեինաթթուն (ԴՆԹ) և քրոմոսոմային նյութն իրենց հիմքում ցավալիորեն ընկալում են դրսից ցանկացած միջամտություն, մանավանդ, եթե այդ միջամտությունը կարող է ոչնչացնել կամ չեզոքացնել նրանց բնական վիճակը, ինչը կարող է հանգեցնել ամենատարբեր բնույթի անկանխատեսելի հետևանքների²:

¹ Տե՛ս Juan Antonio Travieso, Angelo Vigliani Ferraro, Elena Trikoz, Elena Gulyaeva. BIOETHICAL ASPECTS OF THE INSTITUTION OF HUMAN RIGHTS IN LATIN AMERICA // Racionalidad, Derecho Y Ciudadanía [livro eletrônico] / Organización Ricardo Mauricio Freire Soares... [et al.]. Salvador, BA: Direito Levado a Serio, 2021 թ., էջ 89:

² Տե՛ս Болков М.А., Козаченко И.Я., Ларионов П.А. [и др.] Генетические исследования: законодательство и уголов-

Ինչո՞ւ կոնկրետ ինչ-որ մեկին սպանել, երբ գենային ինժեներիայի միջոցով կարելի է հասնել ոչնչացման՝ մի ամբողջ սոցիալական խմբի «դեգեներացիայի» միջոցով³: Նշվածի կապակցությամբ լայն ուշադրության են արժանի գիտնականի դատողությունները գենոմի ապօրինի խմբագրմանն ուղղված գործողությունների համար քրեական պատասխանատվություն սահմանելու անհրաժեշտության մասին⁴: Նա նշել է մարդու գենետիկական արժանապատվության պատշաճ քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտության մասին՝ նշելով, որ արարքի հասարակական վտանգը զգալիորեն մեծանում է, եթե տուժողի արժանապատվության նվաստացումն իրականացվում է հանցագործի կողմից գենետիկ մանիպուլյացիաների միջոցով (գենետիկ արժանապատվություն)⁵: Այս մտքերը, անշուշտ, արժանի են ուշադրության, քանի որ մենք խոսում ենք խնդրի էթիկական կողմի մասին: Այնուամենայնիվ, միևնույն ժամանակ, թույլ կտանք մեզ չհամաձայնել Ի. Յա. Կոզաչենկոյի տեսակետի հետ, քանի որ, կարծում ենք, կարելի է խոսել գենոմի խմբագրման թույլատրելի սահմանների մասին (բացառապես թերապետիկ նպատակներով), սակայն, պատշաճ իրավական ապահովման պայմաններում, ներառյալ քրեաիրավական: Ներկայում, չնայած առկա բազմաթիվ զարգացումներին, այնուամենայնիվ, մարդկությունը լիովին պատրաստ չէ լիարժեք իրականացնել այնպիսի կենսաբժշկական տեխնոլոգիա, ինչպիսին է գենոմի խմբագրումը, որը, այսօր, այնուամենայնիվ, բժշկական փորձի բնույթ է կրում, որը կարող է տալ ինչպես դրական, այնպես էլ բացասական արդյունք: Ըստ Վ. Վ. Ֆեդորինի «Մարդու գենոմի խմբագրման զարգացումը կհանգեցնի «կիսա-մարդկանց» առաջացմանը: Գենետիկական կառուցումը թույլ չի տալիս անձի ձևավորումը բազմաբնույթի ամբողջական փիլիսոփայական իմաստով: Հասարակությունը կարող է բաժանվել նրանց, ում մենք բոլորս սովոր ենք, և նրանց, ում արհեստական ճանապարհով են գեներացրել: Այս տեսակի տեխնոլոգիան ծնողների չարաշահման վտանգ է ներկայացնում, ովքեր երագում են, որ իրենց երեխան հատուկ տեսք ունենա կամ իր ֆիզիոլոգիական հատկություններով հնարավորություն ունենա ընտրել այնպիսի մասնագիտություն, որին ի վիճակի չէ ծնողը»⁶: Սակայն գենոմի խմբագրման բարի նպատակը բնավ չի հավակնում ոտնահարել մարդու էվոլյուցիայի հիմքերը, նրա ինքնությունն ու փիլիսոփայական հիմքերը, այլ միայն նպատակ է հետապնդում նպաստել բարձր տեխնոլոգիական բժշկական օգնություն ստանալու մարդու իրավունքի իրացմանը:

Գենոմային խմբագրման տեխնոլոգիան առաջընթաց է ժամանակակից գիտության մեջ, սոցիալական անհավասարության և խտրականության նոր տեսակ, թե՛ մարդկության էվոլյուցիայի վերաբերյալ հիմնական հիմքերի և պատկերացումների ոտնահարում: Հարցը միջդիսցիպլինար բնույթ է կրում՝ իր մեջ ներառելով բժշկագենետիկական, բիոէթիկական և իրավական ասպեկտները: Սակայն, այնուամենայնիվ, հեռանկարում դիտվում է մարդու գենոմի և սաղմի խմբագրման արգելքը թերապևտիկ նպատակներով հանելու հեռավոր հնարավորու-

ная политика: коллективная монография / под. ред. д-ра юрид. наук, проф. И. Я. Козаченко, канд. юрид. наук Д.Н. Сергеева. — Екатеринбург : Лаборатория SAPIENTIA, 2021 թ., էջ 164:

³ Տե՛ս *Ткачев И.О.*, Уголовно-правовая охрана жизни: от человеческого эмбриона к генетическому благополучию // *Виктимология*. 2020 թ., № 3 (25), էջ 18:

⁴ Տե՛ս *Генетические исследования: законодательство и уголовная политика: коллективная монография / М.А. Болков, И.Я. Козаченко, П.А. Ларионов [и др.]; под. ред. д-ра юрид. наук, проф. И. Я. Козаченко, канд. юрид. наук Д.Н. Сергеева.* — Екатеринбург: Лаборатория SAPIENTIA., 2019 թ., էջ 136:

⁵ Տե՛ս *Козаченко И. Я., Мелюханова Е. Е.*, Об обусловленности уголовно-правовой охраны генетического достоинства // *Всероссийский криминологический журнал*. 2021 թ., № 4, էջ 42:

⁶ Տե՛ս *Федорин В.В.*, Философско-методологический анализ проектов генетического конструирования человека: автореф. дис. ... канд. философ. наук. М., 2017 թ., էջ 8:

թյուն:

Գենոմային հետազոտությունների ոլորտում հիմնարար միջազգային իրավական ակտ է հանդիսանում կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման հետ կապված Մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիան, որի 13-րդ հոդվածի համաձայն «Մարդու գենոմի միջամտությունը, որն ուղղված է դրա փոփոխմանը, կարող է իրականացվել միայն կանխարգելիչ, ախտորոշիչ կամ բուժական նպատակներով և միայն այն պայմանով, որ այն ուղղված չէ տվյալ անձի ժառանգների գենոմի փոփոխմանը»: Այսպիսով, թերապևտիկ նպատակներով մարդու գենոմի խմբագրման թույլտվության և դրա օրենսդրական կարգավորման պայմաններում անհրաժեշտ է նաև նախատեսել օրենսդրական մեխանիզմներ այս ընթացակարգի անվտանգության ապահովման և դրանց խախտման համար իրավական (քրեաիրավական) պատասխանատվության ապահովման համար: Պետք է նաև ուսումնասիրել սաղմի գենոմի խմբագրման հնարավորության հարցը, հատկապես վերջինիս իրավական կարգավիճակի վերաբերյալ միասնականության բացակայության պայմաններում:

Միանգամայն հնարավոր են իրավիճակներ, երբ անձը կատարում է համապատասխան ազգային օրենսդրությամբ արգելված արարք, բայց չի ճանաչվում որպես հանցավոր և չի առաջացնում քրեական պատասխանատվություն: Նման բանի աշխարհը բախվել է 2018 թվականին, երբ SUSTech հարավային գիտատեխնիկական համալսարանի պրոֆեսոր Հե Յզյանքույան արհեստական բեղմնավորման ընթացակարգից առաջ մարդկային սաղմերի գենոմի խմբագրման ընթացակարգ է իրականացրել՝ դրանով իսկ փոխելով երկու նորածին երկվորյակների ԴՆԹ-ն:

Չինացի գիտնականներն ու իրավակիրառները կատարվածին տարբեր իրավական գնահատական են տվել՝ անօրինական բժշկական գործունեություն, փաստաթղթերի կեղծում կամ խարդախություն⁷: Չինացի գիտնականների խումբն այդպիսով կատարել է CCR5 գենի նպատակային անջատում, որը որոշիչ դեր ունի մարդու իմունային անբավարարության վիրուսով բջիջների վարակման գործում: Գենի ուղղորդված անջատումը կատարվել է ռեկոմբինացիայի գործընթացում ԴՆԹ-ի վեկտորի միջոցով քրոմոսոմում CCR5-D32 գենի մուտացիայի ներդրման միջոցով⁸: Այս մուտացիան հանգեցնում է վիրուսի T բջիջին միանալու անհնարինության⁹:

Այս արարքի պատշաճ օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում մենք չենք կարող խոսել չինացի գիտնականի արարքի հակաօրինականության հատկանիշի մասին:

Հաշվի առնելով գենային թերապիայի հնարավոր դրական հնարավորությունները, ինչպես նաև առկա պրակտիկայի օրինակների վերլուծությունը, այնուամենայնիվ, կարելի է խոսել մարդու գենոմի խմբագրման հնարավորության մասին: Այսպիսով, օրինակ, Չիկագոյի վերարտադրողական գենետիկայի ինստիտուտում աշխատող դոկտոր Յու Վերլինսկու գլխավորած խումբը ապահովեց երեխայի բեղմնավորումը, որը զերծ է քաղցկեղ առաջացնող գենից:

⁷ S՛ն *Сергеев Д.Н.*, Ответственность за манипуляции с геномом человека (дело Хэ Цзянькуя) // Электронное приложение к Российскому юридическому журналу, 2019 թ., № 5, էջ 5:

⁸ S՛ն *Сергеев Д.Н.*, Ответственность за манипуляции с геномом человека (дело Хэ Цзянькуя) // Электронное приложение к Российскому юридическому журналу, 2019 թ., № 5, էջ 6:

⁹ S՛ն *Allers K., Schneider Th.* CCR5A32 mutation and HIV infection: basis for curative HIV therapy // Current Opinion in Virology, 2015 թ., Vol. 14, էջ 24:

Այս գենը երեխան կարող էր ժառանգել իր հորից, որը նախատրամադրված էր ուռուցքային հիվանդությունների զարգացմանը (այսպես կոչված լի-Ֆրոմենի համախտանիշ, որն առաջացել է p53 գենի մուտացիայի պատճառով)¹⁰: Այսպիսով, թերապևտիկ նպատակներով մարդու գենոմի միջամտությունը նպատակահարմար է թվում: Միևնույն ժամանակ, եվգենիկ պատկերացումների համատեքստում, անկասկած, բացասական է մարդու գենոմի ցանկացած միջամտություն, օրինակ՝ երեխաներին պլանավորված կամ ցանկալի գենոտիպ «արտադրելու» նպատակով («սաղմերի արհեստական ընտրություն»): Այս պահին ծնողների «պատվերով» գենոտիպով երեխաներ ծնելու նպատակով գենետիկ մանիպուլյացիայի հնարավորությունը շատ հեռու է թվում, սակայն նման հեռանկար կա և, մեր կարծիքով, պետք է համարժեք արձագանք ստանա նաև քրեաիրավական մակարդակում:

Մեկ այլ կարևոր ուղղություն է կլոնավորման քրեաբանական և քրեաիրավական կանխարգելումը, ինչպես նաև ձվաբջիջների, սպերմատոզոիդների հետ կապված այլ մանիպուլյացիաները, հարկադիր բեղմնավորումը և սաղմնային ցողունային բջիջների օգտագործումը:

Հաշվի առնելով սոցիալական վտանգի բարձրացումը՝ սաղմի և սաղմնային ցողունային բջիջների հետ կապված տարբեր հանցավոր մանիպուլյացիաների քողարկված բնույթը, հնարավոր ենք համարում նախատեսել ինքնուրույն հանցակազմ, որը կարգավորում է քրեական պատասխանատվությունը մարդու սաղմնային բջիջների ապօրինի վերցնելու համար՝ դրանց հետագա օգտագործման համար բժշկության և էսթետիկ բժշկության մեջ (կոսմետոլոգիա), հանցավոր նպատակներով սաղմի ստեղծման համար և այլն: Կամ էլ խոսքը կարող է գնալ նույն նպատակներով աբորտի կատարման մասին: Այսպիսով, հիմնական խնդիրը հանգում է աբորտային նյութի հետագա հանցավոր օգտագործմանը: Վ. Ս. Օվչինսկին պնդում է, որ մաֆիոզ բիզնեսի տեսակներից մեկը, որը կծաղկի (և արդեն ծաղկում է), քրեական և ոչ քրեական աբորտների արդյունաբերությունն է՝ սաղմերը ցողունային բջիջների հետ փորձեր կատարելու համար օգտագործելու համար: Նման փաստերը տեղի են ունեցել Ռուսաստանում, դրանք ստուգվել են իրավապահ մարմինների կողմից, բայց չեն գտել համապատասխան իրավական լուծում՝ քրեական օրենսդրության համապատասխան նորմերի բացակայության պատճառով¹¹:

Մարդու իրավունքների եւ մարդկային արժանապատվության պաշտպանության մասին 1996 թ. կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման հետ կապված կոնվենցիայում (Եվրոպայի խորհուրդ) 18-րդ հոդվածում նշվում է, որ «Եթե օրենքը թույլ է տալիս հետազոտություններ անցկացնել in vitro սաղմերի վրա, ապա այն պետք է նախատեսի այդ սաղմի պատշաճ պաշտպանությունը: Մարդու սաղմերի ստեղծումը հետազոտական նպատակներով արգելվում է»: Միևնույն ժամանակ, Կոնվենցիան չի պարունակում թերապևտիկ կլոնավորման նպատակով սաղմերի օգտագործման հնարավորության ուղղակի հիշատակում (արգելք կամ թույլտվություն): Նշվածի առնչությամբ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում քրեական պատասխանատվություն է սահմանվում միայն վերարտադրողական կլոնավորման համար: Ի տարբերություն վերարտադրողական թերապևտիկ կլոնավորումը ենթադրում է սաղմի զարգացում մինչև բլաստոցիստի փուլ (մինչև 14 օր), այնուհետև դրա աճը դադարեցվում է: Սաղմն օգտագործվում է ցողունային բջիջներ ստանալու համար՝ բժշկության մեջ դրանց հետագա բուժական օգտագործման նպատակով, այսինքն՝

¹⁰ Տե՛ս *Захаров И.А.*, ГенЭтика или Рожать нельзя клонировать. - Новосибирск: Изд-во СО РАН, 2003 թ., էջ 45:

¹¹ Տե՛ս *Овчинский В.С.*, Криминология и биотехнологии, М., 2005 թ., էջ 63:

տարբեր հիվանդությունների բուժման և կանխարգելման համար¹²: «Մարդու կլոնավորված սաղմերի վրա հիմնված ցողունային բջիջների գծերի արտադրությունն առաջարկվել է որպես դեղամիջոցների, ախտորոշիչ մեթոդների և բջիջների և հյուսվածքների փոխպատվաստման մշակումն ու գնահատումն արագացնելու միջոցներից մեկը: Այն հարցը, թե արդյո՞ք մարդու սաղմի ցողունային բջիջները (համեմատած մեծահասակից վերցված հյուսվածքների ցողունային բջիջների հետ) բուժման միակ հեռանկարային միջոցն են, և եթե այո, արդյո՞ք կլոնավորված սաղմերի ստեղծումը, որպես ցողունային բջիջների աղբյուր, նրանց ավելի մեծ թերապևտիկ արժեք կտա, ներկայումս գիտական հետազոտությունների առարկա է»¹³: Մարդու կլոնավորման հարցի վերաբերյալ Ն. Ե. Կոփլովան առաջարկում է քրեական պատասխանատվություն սահմանել մարդու կլոնավորման, մարդու կլոնավորված սաղմերի ներմուծման կամ արտահանման¹⁴:

Հաշվի առնելով տվյալ հարցի գործող կարգավորումները Հայաստանի Հանրապետությունում՝ միևնույն ժամանակ հարկ է նշել, որ թերապևտիկ կլոնավորման հարցը օրենսդրական մակարդակով լուծվել է ոչ համակարգային և ոչ բավարար: Նախ, բացակայում է ՀՀ-ում թերապևտիկ կլոնավորման մասին օրենքը, որը կանոնակարգում է դրա հասկացությունը, անցկացման կարգը, ընթացակարգը և այլ հարցեր: Երկրորդ, առնվազն նպատակահարմար կլիներ նշված օրենքի ընդունման պայմաններում բլանկետային դիսպոզիցիայով հանցակազմի կառուցումը, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում թերապևտիկ կլոնավորման անցկացման սահմանված կարգի խախտման համար: Այդ քրեաիրավական նորմի նախատեսումը հետագայում պատշաճ քրեաիրավական գնահատական կտար մարդու թերապևտիկ կլոնավորման ժամանակ կատարվող այլ (դասական, ավանդական) յատրոգեն հանցագործություններին: Միևնույն ժամանակ, թույլ տանք մեզ չհամաձայնել հայկական օրենսդրի մոտեցման և կլոնավորման հարցերի գործող օրենսդրական կարգավորման հետ: Նշելով վերարտադրողական կլոնավորման համար քրեական պատասխանատվություն նախատեսելու անվերապահ նշանակությունը, միևնույն ժամանակ, սխալ ենք համարում քրեաիրավական պաշտպանության շրջանակներից դուրս թողնել թերապևտիկ կլոնավորումը, որը, մեր կարծիքով, հակասում է ընդհանուր ընդունված բարոյական և էթիկական համոզմունքներին, իրենից ներկայացնում է «ինչ-որ բանի» արհեստական սկիզբ՝ դրա նպատակի և բնական տեսքով դրա «շարունակության» բացակայության կանխամտածված գիտակցմամբ:

Թերապևտիկ կլոնավորումը պարունակում է բազմաթիվ քրեածին ռիսկեր, որոնք բաղկացած են այն փաստից, որ բուժաշխատողները, թերապևտիկ նպատակներով «կլոնավորման» պատրվակով (օրենսդրական մակարդակում դրա թույլտվության պայմաններում), կգրադվեն անձի, նրա օրգանների և հյուսվածքների կլոնավորմամբ կրիմինալ նպատակներով: Այսպիսով, ստացվում է, որ թերապևտիկ կլոնավորումը, որի հիմնական նպատակը պացիենտների բուժումն է (մասնավորապես՝ հիվանդ օրգանների փոխարինման կատարումը), իրականում կարող է հանգեցնել կլոնավորման միջոցով ձեռք բերված մարդու օրգանների և հյուսվածքների ապօրինի շրջանառության: Հատուկ վտանգ է ներկայացնում մարդու սաղմի կլոնավորման

¹² Տե՛ս *Гурылёва М.Э.*, Этико-правовые проблемы клонирования человека // Казанский медицинский журнал. – 2019 թ., Том 100, № 6, էջ 993:

¹³ Տե՛ս *Репродуктивное клонирование людей: состояние дискуссий на Генеральной Ассамблее Организации Объединенных Наций*, 2018 թ., Режим доступа: http://apps.who.int/gb/archive/pdf_files/EB115/B115_ID2-ru.pdf. էջ 4:

¹⁴ Տե՛ս *Крылова Н.Е.*, Уголовное право и биоэтика (уголовно-правовые проблемы применения современных биомедицинских технологий): автореф. дис. ... д-ра юрид. Наук: 12.00.08/ Крылова Н. Е., Москва, 2006 թ., էջ 51:

հնարավորությունը ապօրինի շրջանառության կամ տարբեր մանիպուլյացիաների իրականացման նպատակով, ինչը նույնպես պահանջում է, մեր կարծիքով, քրեականացում:

Սաղմի իրավական կարգավիճակի հարցը, ցավոք, օրենսդրական հստակ կարգավորում չի գտել: Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում որոշակի նախադրյալներ են դրված սաղմին իրավական կարգավիճակ տալու համար: Մասնավորապես, խոսքը ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի մասին է, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում բուժաշխատողի կողմից իր մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, որն անզգուշությամբ առաջացրել է սաղմի կամ պտղի վնասում: Միևնույն ժամանակ, «սաղմի» հասկացության առկա սահմանումների բազմազանության պայմաններում ներկայումս բացակայում է դրա օրենսդրական սահմանումը: Այս առումով հետաքրքիր է թվում որոշ արտասահմանյան երկրների փորձը: Մասնավորապես, Կորեայի Հանրապետության Բիոէթիկայի եւ անվտանգության մասին օրենքը նախատեսել է մի շարք առանցքային տերմիններ գենետիկական հետազոտությունների ճյուղի կարգավորման համար, ինչպիսիք են, օրինակ, «սաղմը», «գենային թերապիան», «սոմատիկ բջջի միջուկի տեղափոխումը», ինչպես նաև ամրագրել է այն դրույթները, որոնց համաձայն՝ սաղմերն արգելվում է արտադրել որեւէ նպատակով, բացի երեխաների ծնունդից¹⁵: Ճապոնիայում մարդու գենոմի ժառանգական գծերի մոդիֆիկացիայի նորմատիվ-իրավական կարգավորման ոլորտը կարգավորվում է մեկ հիմնարար օրենքով՝ 2000 թվականին ընդունված մարդու կլոնավորման տեխնոլոգիաների կարգավորման ակտով (Act on Regulation of Human Cloning Techniques), «Մարդու սաղմերի հետ վարվելու հիմնական քաղաքականությունը» (Fundamental Policy Regarding Handling of Human Embryos) փաստաթղթով, որը 2004 թվականին հրատարակվել է Ճապոնիայի նախարարների կաբինետի վարչակազմի գիտական եւ տեխնոլոգիական քաղաքականության խորհրդի կողմից:

Գենոմի փոփոխման հնարավորության հարցի շուրջ ակտիվ քննարկումները կապված են այն մտավախության հետ, որ գենոմի խմբագրման հնարավորության ի հայտ գալուն պես դա ինքնաբերաբար կհանգեցնի որոշակի գենոտիպ ունեցող մարդկանց վերարտադրության նպատակ հետապնդող եվգենիկ գաղափարների իրականացմանը: Իսկապես, այսօր մարդու գենոմի խմբագրման հարցերի իրավական կարգավորումը, և առաջին հերթին այն փոփոխությունները, որոնք ժառանգները կարող են ժառանգել, ավելի կարևոր է, քան երբևէ¹⁶: Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման հետ կապված մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու գենոմի միջամտությունը, որն ուղղված է դրա փոփոխմանը, կարող է իրականացվել միայն կանխարգելիչ, ախտորոշիչ կամ բուժական նպատակներով և միայն այն պայմանով, որ այն ուղղված չէ տվյալ մարդու ժառանգների գենոմի փոփոխմանը»:

Այլ կերպ ասած, գենային թերապիայի միջոցով փոփոխվում են սոմատիկ բջիջները, այլ ոչ թե սաղմնային բջիջները, որպեսզի խուսափեն գենետիկորեն ձևափոխված ԴՆԹ-ի փոխանցումից հաջորդ սերունդներին: Սակայն, կրկին, «տվյալ անձի ժառանգների գենոմի փո-

¹⁵ Տե՛ս Kim H., Joly J., The regulation of human germline genome modification in the Republic of Korea // Human germline genome modification and the right to science. A comparative study of national laws and policies / ed. by Boggio A., Romano C.P.R. Almqvist J. - Cambridge, 2020 թ., էջ 512:

¹⁶ Տե՛ս Калинин П.А., Косилкин С.В., Геномные исследования: стандарты Совета Европы и правовое регулирование в России // Вестник университета им. О.Е. Кутафина, 2019 թ., էջ 112:

փոխության» առկա սահմանափակման կապակցությամբ առաջին պլան են մղվում առկա ժառանգական հիվանդությունները, ինչի հետևանքով նշված սահմանափակումը կասկածելի է թվում: Վերոնշյալ համատեքստում գենոմի խմբագրման դրական կողմը ընդունելու տեսանկյունից կարելի է մատնանշել այնպիսի հիվանդությունների կանխարգելման հնարավորությունը, ինչպիսիք են Դաունի համախտանիշը, հեմոֆիլիան, միոտոնիկ դիստոնիան և այլն: Այսպիսով, շոշափվում է սոմատիկ գենային թերապիայի և սաղմնային գծի հարցը: «Մարդու գենոմի խմբագրման հնարավոր առավելությունները կայանում են ավելի արագ և ճշգրիտ ախտորոշման, ինչպես նաև գենետիկական խանգարումների արդյունավետ բուժման և կանխարգելման հնարավորության մեջ: Սոմատիկ գենային թերապիան, որը թույլ է տալիս փոխել հիվանդի ԴԽԹ-ն, նախկինում հաջողությամբ օգտագործվել է ՄԻԱՎ-ի և այլ լուրջ հիվանդությունների բուժման համար: Հեռանկարում այս հեղափոխական մեթոդը կարող է նաև զգալիորեն բարելավել քաղցկեղի տարբեր տեսակների բուժման արդյունավետությունը: Գենետիկական փոփոխությունները կարող են փոխանցվել հաջորդ սերունդներին՝ փոփոխելով սերունդների ֆիզիոլոգիական առանձնահատկությունները¹⁷»: Հաշվի առնելով քննարկվող հարցի կարևորությունը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) 2018 թվականի դեկտեմբերին ստեղծեց փորձագետների գլոբալ բազմամասնագիտական Խորհրդատվական կոմիտե՝ ուսումնասիրելու մարդու գենոմի (ինչպես սոմատիկ, այնպես էլ սաղմնային) խմբագրման հետ կապված գիտական, էթիկական, սոցիալական և իրավական խնդիրները:

Պետք է նշել, որ արտասահմանյան երկրներում կարելի է նկատել մարդու սաղմնային գծի գենետիկական խմբագրման տարբեր մոտեցումներ, որոնց մի մասը պարունակում է նման մանիպուլյացիաների ուղղակի արգելքներ, իսկ մյուս մասը դրանք թույլ է տալիս միայն բուժական, կանխարգելիչ և ախտորոշիչ նպատակներով, այնուամենայնիվ, պայմանով, որ մարդու սաղմնային գծի փոփոխությունը նպատակ չէ հանդիսանում: Այսպիսով, Լիտվայի Հանրապետության «էթիկայի և կենսաբժշկական հետազոտությունների մասին» օրենքը նախատեսում է, որ «Մարդու կլոնավորումն արգելված է. և կենսաբժշկական հետազոտությունները, որոնք փոխում են մարդու գենոմը, կարող են իրականացվել միայն կանխարգելման, ախտորոշման կամ բուժման նպատակով և միայն այն դեպքերում, երբ դրանք նախատեսված չեն սերունդների գենոմը փոխելու համար (սաղմնային գիծ)»¹⁸: Պորտուգալիայի «Անձնական գենետիկական և առողջապահական տեղեկատվության մասին» օրենքը արգելում է մարդու սաղմնային գծի փոփոխությունը¹⁹: Նման սահմանափակում կա նաև Մալթայի «Սաղմի պաշտպանության մասին ակտում»:²⁰

Ամփոփելով կատարված ուսումնասիրության արդյունքները՝ պետք է փաստել, որ ներկայումս չկա պատշաճ քրեաիրավական հիմք մարդու գենոմի դեմ հանցավոր ոտնձգությունների դեմ պայքարի համար: Մարդու սաղմի իրավական անորոշության պատճառով բացակայում է նաև նրա պատշաճ քրեաիրավական պաշտպանությունը: Վերջինիս իրավական կարգավիճակ տալու որոշակի սկիզբ ձեռնարկվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունում, որը որպես այլ հանցագործությունների հանրորեն վտանգավոր հնարավոր հետևանք նախատեսել է սաղմի կամ պտղի անզգույշ վնասում: Նշելով հայկական օրենս-

¹⁷ Տե՛ս URL: <https://news.un.org/ru/story/2021/07/1406242> (дата обращения: 10.03.2023)

¹⁸ Տե՛ս The Law on Ethics in Biomedical Research (2002) «Закон об этике в биомедицинских исследованиях»:

¹⁹ Տե՛ս The Law no 12/2015 of 26 January on Personal Genetic Information and Health Information:

²⁰ Տե՛ս The Embryo Protection Act (2013) «Акт о защите эмбриона»:

դիրի դրական քայլը մարդու վերարտադրողական կլոնավորման համար քրեական պատասխանատվությունն ամրագրելու առումով, մինչույն ժամանակ հաշվի առնելով հնարավոր քրեածին ռիսկերը, անհրաժեշտ ենք համարում նմանատիպ հանցակազմի նախատեսումը նաև թերապևտիկ կլոնավորման դեպքում: Բացի դրանից, նշելով մարդու գենոմի բուժական խմբագրման օգտակար նպատակի և գործնականում դրա կիրառման հնարավորության մասին, մինչույն ժամանակ, առաջարկվում է նախատեսել ինքնուրույն հանցակազմ, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում գենոմի խմբագրման կարգը խախտելու համար, ինչպես նաև դրա կատարումը՝ մարդու սաղմնային գիծը փոխելու համար:

Annotation. Scientific and technological breakthrough, improvement of medical care technologies, processes of genetic engineering and other biomedical technologies require proper legal, including criminal law regulation. Of course, many potentially socially dangerous acts in these areas have not found their actual manifestation to date, but this does not mean that they do not require criminal legal regulation. After all, several decades ago, with the same success, the world community did not even assume about such negative phenomena as cybercrime, in particular, cyberterrorism, cyberterrorism, phishing, etc., while today the efforts of many states are aimed precisely at criminal legal counteraction to the noted illegal encroachments. In the absence of a definition of the concept of “iatrogeny” and “iatrogenic crimes” at the legislative level, the issues of classification of iatrogenic crimes are widely discussed in scientific circles. Most authors refer to them only traditional iatrogenic crimes, at the same time, we defend the position regarding the attribution of non-traditional iatrogenic crimes to them, which have no less degree of public danger. The issues of genomic research are relevant primarily due to the fact that they are at the intersection of ethics and law. To date, such issues as editing, modification of the human genome, the legal status of the human embryo and its criminal protection, new reproductive technologies are on the agenda. The development of biomedical technologies actualizes the issue of their proper legislative regulation, criminalization of potential socially dangerous acts in the areas under consideration and identification of criminal law problems in the application of modern biomedical technologies.

Аннотация. Научно-технологический прорыв, совершенствование технологий оказания медицинской помощи, процессы геномной инженерии и иных биомедицинских технологий требуют надлежащего правового, в том числе, уголовно-правового регулирования. Безусловно, многие потенциально общественно опасные деяния в данных сферах на сегодняшний день не нашли своего фактического проявления, однако это отнюдь не означает, что они не требуют уголовно-правовой регламентации. Ведь несколько десятков лет назад с той же успешностью мировое сообщество и не предполагало о таких негативных явлениях, как киберпреступность, в частности, кибертерроризм, фишинг и т.д., в то время как на сегодняшний день усилия многих государств направлены именно на уголовно-правовое противодействие отмеченным противоправным посягательствам. В условиях отсутствия на законодательном уровне определения понятия «ятрогения» и «ятрогенные преступления» в научных кругах широко дискутируются вопросы классификации ятрогенных преступлений. Большинство авторов относит к ним лишь традиционные ятрогенные преступления, в то же время, нами отстаивается позиция относительно отнесения к ним и нетрадиционных ятрогенных преступлений, обладающих отнюдь не меньшей степенью общественной опасности. Вопросы проведения геномных исследований представляют актуальность в первую очередь в силу того, что они находятся на стыке этики и права. На сегодняшний день в повестке дня такие вопросы, как редактирование, модификация генома человека, правовой статус человеческого эмбриона и его уголовно-правовая защищенность, новые репродуктивные технологии. Развитие биомедицинских технологий актуализирует вопрос их надлежащего законодательного регулирования, криминализации потенциальных общественно-опасных деяний в рассматриваемых сферах и выявления уголовно-правовых проблем в применении современных биомедицинских технологий.

Բանալի բառեր - կենսաբժշկական տեխնոլոգիաներ, քրեաիրավական պաշտպանություն, վերարտադրողական կլոնավորում, թերապևտիկ կլոնավորում, սաղմ, գենոմի խմբագրում:

Keywords: *biomedical technologies, criminal law protection, reproductive cloning, therapeutic cloning, embryo, genome editing.*

Ключевые слова: *биомедицинские технологии, уголовно-правовая охрана, репродуктивное клонирование, терапевтическое клонирование, эмбрион, редактирование генома.*

Սարգսյան Ա. - իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, էլ. հասցե՝ adelina-sargsyan@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 28.03.2023 թ., տրվել է գրախոսության 28.03.2023 թ., երաշխավորվել է ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսոր Ս. Ս. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-85>

ԱԶԱՏ ԲԱԳՐԱՏՅԱՆ
*«Նստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
օպերատիվ-հետախուզական գործունեության և
քրեագիտության ամբիոնի դասախոս,
նստիկանության մայոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

AZAT BAGRATYAN
*Lecturer at the Chair of Operative-Search Activity and
Criminology at the Police Academy of the Republic of Armenia,
Police Major,
Doctor of Law*

АЗАТ БАГРАТЯН
*Преподаватель кафедры оперативно-розыскной
деятельности и криминалистики
Академии образовательного комплекса полиции РА,
майор полиции,
кандидат юридических наук*

**ԱՐՏԱՎԱՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԾՎԵԼՈՒ
ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

**THE PROSPECTS OF TRANSFORMING OPERATIVE-SEARCH ACTIVITY
RESULTS INTO EXTRA-PROCEDURAL DOCUMENTS**

**ПЕРСПЕКТИВЫ ПРЕОБРАЗОВАНИЯ РЕЗУЛЬТАТОВ
ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ВО
ВНЕПРОЦЕССУАЛЬНЫЕ ДОКУМЕНТЫ**

Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները կարևոր նշանակություն ունեն հանցավորության դեմ պայքարի գործում: Դրանք կիրառվում են հանց օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտում և հիմք են մեկ այլ օպերատիվ-հետախուզական

միջոցառման անցկացման համար: Սակայն հաճախ այդ արդյունքներն օգտագործվում են քրեադատավարական ոլորտում: Իրավաբանական գրականության մեջ այս հաշվով առկա են տարբեր մոտեցումներ: Այսպես, հեղինակների մի մասն առաջարկում է օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ուղղակիորեն օգտագործել որպես ապացույց՝ որոշակի վերապահումներով կամ առանց դրանց¹: Տեսակետներ են արտահայտվում այդ արդյունքները փոխակերպելու և ապացույցների վերածելու² կամ որպես ապացույցներ քրեադատավարական օրենսգրքում ներառելու մասին³:

Նախկին տեսքով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքն օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները ճանաչում էր ապացույցներ, բացառությամբ օպերատիվ հարցման, օպերատիվ տեղեկությունների ձեռք բերման, իրերի և փաստաթղթերի հետազոտման և անձի նույնացման արդյունքներից: Այս օրենքն ինքնին լուծում էր այդ հարցը՝ չունենալով այդ լիազորությունները և հակասելով դատավարական նորմերին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը դրական ազդեցություն գործեց օպերատիվ-հետախուզական համակարգի վրա և որոշակիորեն կարգավորեց իրավիճակը՝ դուրս մղելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները որպես ապացույց սահմանող նորմ⁴: Բայց քրեադատավարական օրենքն ամբողջությամբ չկանոնակարգեց այդ հարցերը, իսկ դրանց մի մասով հակասություններն էլ ավելի սրվեցին: Մի կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումները չեն պահանջում դատարանի որոշումը և օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները միանշանակորեն ապացույց չեն⁵, մյուս կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացվում են դատարանի որոշմամբ և դրանց արդյունքները դիտարկվում որպես ապացույցներ⁶:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ մասի՝ քրեական վարույթի շրջանակից դուրս դատարանի թույլտվությամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները կարող են ճանաչվել արտավարությամբ

¹ Տե՛ս *Азаров В.А.*, Уголовно-процессуальные и оперативно-розыскные средства достижения цели раскрытия преступлений // Государство и право, 1997, № 10, էջ 4. *Безлепкин Б.Т.*, Проблемы уголовно-процессуального доказывания // Советское государство и право, 1991, № 8, էջ 101. *Бозров В.М.*, Результатам оперативно-розыскной деятельности – статус доказательств в уголовном процессе // Российская юстиция, 2004, № 4, էջ 4. *Поляков М.П.*, Уголовно-процессуальная интерпретация результатов оперативно-розыскной деятельности, Н. Новгород: Нижегородская правовая академия, 2001, էջ 54-55, 180:

² Տե՛ս *Белкин А.Р.*, УПК РФ: нужны ли перемены? М.: Норма – Инфра-М, 2013, էջ 283. *Доля Е.А.*, Использование в доказывании результатов оперативно-розыскной деятельности. М.: Спарк, 1996, էջ 56-63, 70-77. *Зажицкий В.И.*, Оперативно-розыскная деятельность и уголовное судопроизводство // Российская юстиция, 2001, № 3, էջ 45-47. *Петрухин И.Л.*, Теоретические основы реформы уголовного процесса в России. Ч. 1. М.: Проспект, 2004, էջ 168. Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности» / отв. ред. А.Ю. Шумилов. М., 1997, էջ 120:

³ Տե՛ս *Зникин В.К.*, Научные основы оперативно-розыскного обеспечения раскрытия и расследования преступлений: автореф. дис. ... докт. юрид. наук. Н. Новгород, 2006, с. 23, 39. *Гущин А.Н.*, *Громов Н.А.*, *Царева Н.П.*, Оперативно-розыскная деятельность: совершенствование форм вхождения ее результатов в уголовный процесс: учеб.-практ. пособие. М.: Изд. Шумилова И. И., 2003, с. 65–66, 93–96. *Лупинская П.А.*, Основания и порядок принятия решений о недопустимости доказательств // Российская юстиция. 1994. № 11. с. 3. *Шейфер С.А.*, Использование непроцессуальных познавательных мероприятий в доказывании по уголовным делам // Государство и право, 1997, № 9, с. 60–63:

⁴ Տե՛ս 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին № ՀՕ-154-Ն ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը:

⁵ Տե՛ս համապատասխանաբար ՀՀ քրեական դատավարության 6-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետը, 86-րդ հոդվածի 2-րդ մասը:

⁶ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը, 97-րդ հոդվածի 10-րդ մասը:

փաստաթղթեր և կցվել վարույթի նյութերին միայն հանցանքը կանխելու, խափանելու կամ անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու համար: Քրեադատավարական այս նորմը հնարավորություն է տալիս արտավարության փաստաթղթերի տեսանկյունից դիտարկել օպերատիվ-հետախուզական գործունեության այն արդյունքները, որոնք ամրագրում են անձանց գործողությունները հանցագործության նախապատրաստության և հանցափորձի փուլերում կամ կատարելուց անմիջապես հետո: Ըստ այդմ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումները պետք է մեկնարկեն նախքան հանցագործությունն ավարտին հասցնելը, մինչդեռ օպերատիվ-հետախուզական նորմի ուժով դատարանի թույլտվությունը պահանջող օպերատիվ-հետախուզական մի շարք միջոցառումներ անցկացվում են միմիայն հանցագործության ավարտից հետո: Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ներքին դիտում, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում, ֆինանսական գործարքների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացվում են միայն այն դեպքերում, երբ առկա են հիմքեր կասկածելու, որ անձն արդեն կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն: Այստեղ ոչ մի ակնարկ չկա հանցավոր ոտնձգությունը կանխելու, խափանելու կամ անձին հանցանքի կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո բացահայտելու մասին: Խոսքը, ըստ էության, վերաբերում է ավարտված, այլ ոչ թե նախապատրաստվող կամ կատարվող հանցավոր ոտնձգությանը: Օրենսդրական այս սահմանումից ուղղակիորեն հետևում է, որ նշված միջոցառումներն ընդհանրապես արգելվում է անցկացնել հանցագործությունը կանխելու կամ խափանելու համար, բնականաբար, դրանց արդյունքներն էլ չունեն արտավարության փաստաթղթի վերաձվելու հնարավորություն:

Հանցագործությունն ավարտված լինելու պահանջը չի տարածվում կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակման և դատարանի թույլտվությամբ անցկացվող արտաքին դիտման վրա: Դրանց արդյունքները կարող են համապատասխանել դատավարական պահանջներին և ճանաչվել արտավարության փաստաթուղթ: Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակման սահմաններում որպես կանոն իրականացվում են արտաքին դիտում և ներքին դիտում՝ տեսաձայնագրման միջոցով կաշառքի առարկայի փոխանցման ընթացքը վերահսկելու համար: Այս տեսանկյունից խոչընդոտներ կարող են առաջանալ ներքին դիտում կազմակերպելիս, քանի որ առկա են միմյանց բացառող հանգամանքներ՝ մի կողմից պետք է անցկացնել ներքին դիտումը, մյուս կողմից նման հնարավորություն ընձեռնվում է հանցագործության արդեն կատարված լինելու դեպքում: Այսպիսով, որպես արտավարության փաստաթուղթ կարող են ճանաչվել ընդամենն արտաքին դիտման արդյունքները, այդ թվում՝ կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառման սահմաններում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը տարածություն է ստեղծում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների գործածման համար: Իրավական նորմերի համապատասխանեցմանն ուղղված հետագա աշխատանքը պետք է ծավալվի օպերատիվ-հետախուզական օրենքում: Սակայն խնդիրը ոչ միայն համակարգերի հակասություններն են, այլև օպերատիվ-հետախուզական գործունեության էությունից չբխող կարգավորումն է: Այս ամենը կարելի էր ընդունել որպես տեխնիկական բացթողման հետևանք, եթե չլիներ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին № ՀՕ-154-Ն ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը: Ըստ այդմ՝ ներքին դի-

տում, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում, ֆինանսական գործարքների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումը տարածվեց միայն կատարված հանցագործությունների վրա: Սակայն արդյո՞ք ճիշտ է նշված միջոցառումները կազմակերպել միայն հանցագործության ավարտից հետո՝ անտեսելով գործողությունների ամրագրման այդքան նպաստավոր ժամանակահատվածը: Հանցագործությունից հետո այս միջոցառումներն արդարացված են լատենտային բնույթի արարքների պարագայում, որոնց կապակցությամբ մինչ այդ վարույթ չի նախաձեռնվել: Եվ եթե արտավարության փաստաթղթերի համատեքստում ընկալվում են դատարանի որոշմամբ վարույթից դուրս իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները, ապա դրա շրջանակներում կատարվում են համանուն գաղտնի քննչական գործողություններ: Սա նկատի ունենալով՝ օպերատիվ-հետախուզական գործունեության կարողություններն էլ ավելի պետք է կարևորվեն հանցագործությունների կանխարգելման գործում, այնինչ տեղի է ունենում ճիշտ հակառակը:

Առհասարակ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն առավել արդյունավետ են նախքան քրեական վարույթ նախաձեռնելը, ինչը հաստատում են նաև քրեական գործերի նյութերը: Օրինակ՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ 2020 թվականի մարտի 14-ից մինչև մարտի 23-ը կազմակերպվել է «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որին 2020 թվականի մարտի 31-ին հաջորդել է քրեական գործի հարուցումը⁷: Թիվ 58207019 քրեական գործի հարուցմանը նույնպես նախորդել են արտաքին դիտում, ներքին դիտում և հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումները⁸: Այս ամենը հաշվի առնելով՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը պետք է փոփոխել՝ ներքին դիտման, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկման, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկման և ֆինանսական գործարքների վերահսկման անցկացումը տարածելով նախապատրաստվող, կատարվող և կատարված ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վրա:

Օպերատիվ-հետախուզական օրենքն անընդհատ լրամշակվում է, սակայն դրա հետ մեկտեղ, ցավոք, տարածված են, մեղմ ասած, բացթողումները, որոնք երբեմն զարմանք են առաջացնում: Օրինակ, համաձայն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն կարող է անցկացնել օպերատիվ-հետախուզական բոլոր միջոցառումները, մինչդեռ նույն օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով այն զրկված է նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկման անցկացման իրավունքից: Ընդհանրապես չի կանոնակարգվում միջազգային նամակագրության ոլորտը: Կամ, ինչպես արձանագրեցինք, դատարանի թույլտվությունը պահանջող օպերատիվ-հետախուզական որոշ միջոցառումներ անցկացվում են ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցագործության դեպքում, սակայն, ըստ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2.1 մասի, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման նպատակն է կանխել, խափանել կան բացահայտել հանցագործությունները:

Քրեական դատավարության ոլորտում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման վրա ներգործություն կարող է ունենալ նաև հետևյալ նորմը:

⁷ Տե՛ս http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=3349552228627453:

⁸ Տե՛ս http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=16325548649303797:

Ըստ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե այն անձի վերաբերյալ, որի նկատմամբ իրականացվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումը, ձեռք են բերվում տվյալներ, որոնք նախատեսված չէին միջոցառումն անցկացնելու մասին որոշմամբ, ապա դրանք օգտագործման ենթակա չեն, բացառությամբ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝

1. օպերատիվ-հետախուզական մարմինները գործել են բարեխղճորեն,
2. արդյունքները պարունակում են ծանր, առանձնապես ծանր հանցագործության կամ դրա նախապատրաստման, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթաց սկսելու կամ առկա վարույթին առերևույթ առնչվող տվյալներ,
3. այդ տվյալների ձեռքբերման համար թույլատրվում է իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը:

Նմանօրինակ բովանդակությամբ դրույթն իր արտահայտությունն է գտել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ գաղտնի քննչական գործողությունների առնչությամբ⁹:

Բարեխղճորեն գործելու եզրույթը գնահատողական կատեգորիա է: Այս տեսանկյունից օպերատիվ-հետախուզական օրենքը չի բացահայտում հասկացության բովանդակությունը: Ըստ ամենայնի, նկատի է առնվում այն, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացնելիս անհրաժեշտ է պահպանել նորմատիվ իրավական ակտերի պահանջները: Օրինականության սկզբունքը վերաբերում է օպերատիվ-հետախուզական համակարգին ընդհանուր առմամբ, ուստի անորոշություն ստեղծող լրացուցիչ ամրագրման անհրաժեշտություն բնավ չկա:

Վերը նշված նորմի համաձայն՝ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ արդյունքները չեն օգտագործվում: Միանշանակ այս պայմանն արդիական է օպերատիվ-հետախուզական այն միջոցառումների համար, որոնք անցկացվում են միայն ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների պարագայում: Օրինակ, եթե ներքին դիտմամբ տեղեկություններ ստացվեն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության մասին, ապա դա կհակասի ներքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման կանոններին: Մինչդեռ օպերատիվ-հետախուզական որոշ միջոցառումների մասով այդ պահանջը չի գործում, հետևաբար, ինչու այն պետք է կիրառել օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ չնախատեսված արդյունքների համար: Մասնավորապես, օպերատիվ հարցման ընթացքում տեղեկություններ են ստացվում միջին ծանրության ուրիշ հանցագործության մասին: Անշուշտ, ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների մասին օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները չեն վերափոխվում արտավարության փաստաթղթերի¹⁰, բայց անհրաժեշտ կարգավորումներ նախատեսելու դեպքում դրանք կարող են օգտագործվել քրեադատավարական այլ ուղղություններով կամ օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասն արդեն տալիս է անհրաժեշտ լուծում՝ ստացված նման կարգի տվյալները կարող են օգտագործվել, եթե դրանց ձեռքբերման համար թույլատրվում է անցկացված օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը: Այս ամենի հիմքով, կարծում եմ, պետք չէ առանձնացնել հանցագործության տեսակները, քանի որ դրանց հատկանիշներն արդեն իսկ բավարար են օպերատիվ եղանակով ստացված տվյալների օգտագործման համար՝ հատկապես հաշվի առնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչու-

⁹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասը:

¹⁰ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 10-րդ մասը:

թյամբ քաղաքացիական վարույթ ծավալելու գործոնը: Միաժամանակ նկատենք, որ նշված նորմում հիշատակվում է միայն առանձնապես ծանր հանցագործության նախապատրաստությունը՝ համենայնդեպս դա հետևում է հոդվածի ձևակերպումից: Արդյո՞ք օրենսդիրը ցանկացել է արտահայտել այս գաղափարը, թե այն տեխնիկական անճշտություն է:

Տարակուսանք է առաջացնում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի այն դրույթը, ըստ որի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումը կարող է իրականացվել միայն կոնկրետ անձի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու համար: Ստացվում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումը չի անցկացվում հանցակիցներին պարզելու համար՝ նույնիսկ միջնորդությամբ և որոշմամբ նախատեսվելու դեպքում: Հաճախ օպերատիվ-հետախուզական միջոցառման նպատակն է բացահայտել հանցագործություն կատարողին: Օրենսդրական այս ամրագրումը կարող է չափազանց բացասական հետևանքներ ունենալ օպերատիվ ճանապարհով ստացված արդյունքների հետագա գործածման, այդ թվում՝ արտավարությանին փաստաթղթեր ճանաչվելու ընթացքի վրա: Այս առումով ավելի ճիշտ է իրավական կարգավորումը կապել ոչ թե անձի, այլ այնպիսի տվյալների հետ, որոնք չի նախատեսվում ստանալ օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ: Նման մոտեցում կարելի է ցուցաբերել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, սակայն արձանագրենք, որ գաղտնի քննչական գործողությունները, որպես կանոն, պահանջում են դատարանի թույլտվությունը:

Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման համար բարենպաստ և ներդաշնակ միջավայր ստեղծելը բխում է ուսումնասիրվող համակարգերի շահերից, ուստի անճշտությունները և անհամապատասխանությունները պետք է բացառել ինչպես «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Annotation. This academic article is dedicated to the characteristics of the application of the operative-search activities in the field of criminal procedures. In particular, it studies the possibilities of transforming operative-search activity results into extra-procedural documents. This article illustrates the contradictions, which exist not only between the systems, but also in the domain of the legislative regulation of operative-search activity. Certain suggestions are being made in order to exclude omissions and to create a favorable environment for the application of operative-search activity results.

Аннотация. Научная статья посвящена изучению особенностей использования результатов оперативно-розыскной деятельности в сфере производства по уголовным делам. В частности, рассматриваются возможные пути преобразования результатов оперативно-розыскной деятельности во внепроцессуальные документы. В ходе исследования были выявлены неточности и противоречия, существующие как между уголовно-процессуальными и оперативно-розыскными нормами, так и в пределах законодательного регулирования оперативно-розыскной деятельности. В этой связи предлагается исключить подобные упущения и создать благоприятную среду для использования результатов оперативно-розыскной деятельности.

Բանալի բառեր - օպերատիվ-հետախուզական գործունեություն, օպերատիվ-հետախուզական միջոցառում, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներ, արտավարությանին փաստաթղթեր:

Keywords: operative-search activity, operative-search measures, operative-search activity results, extra-procedural documents.

Ключевые слова: оперативно-розыскная деятельность, оперативно-розыскное мероприятие, результаты оперативно-розыскной деятельности, внепроцессуальные документы.

Բազրատյան Ա. - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի դասախոս, ոստիկանության մայր, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլ. հասցե՝ verdi2003@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 31.01.2023 թ., տրվել է գրախոսության 31.01.2023 թ., երաշխավորվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ Ա. Մնացականյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.:

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-92>

ՆԱԻՐԱ ՇԱՀԻՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի ուսումնական ասիստենտ, ոստիկանության կապիտան

SHAHINYAN NAIRA

Assistant at the Chair of Criminal Process of the Academy of the Educational Complex of the Police of the RA, Police Captain

НАИРА ШАГИНЯН

Ассистент кафедры Криминального процесса Образовательного комплекса Полиции РА, капитан полиции

ԲԱՅԱՌՄԱՆ ԿԱՆՈՆԻ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՉ ԻՐԱՎԱԶԱՓ ԶԵՐԲԱԿԱԼՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

EXCEPTIONS TO THE EXCLUSIONARY RULE IN THE UNLAWFUL ARREST CONTEXT

ОТСТУПЛЕНИЯ ОТ ПРАВИЛА ИСКЛЮЧЕНИЯ В КОНТЕКСТЕ НЕЗАКОННОГО АРЕСТА

Բացառման կանոնի տեսությունը սահմանում է անձանց սահմանադրական իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունը: Տեսության հիմքը դրվել է ԱՄՆ գերագույն դատարանի կողմից «Վիքսն ընդդեմ Միացյալ Նահանգների գործով» 1914 թ., որով առաջին անգամ արձանագրվեց, որ ԱՄՆ սահմանադրության Չորրորդ փոփոխության խախտումն ինքնին կարող է հիմնավորել ապացույցի բացառումը¹: Այս փոփոխության նպատակն է ապահովել, որ Միացյալ Նահանգները չդառնա մի ազգ, որտեղ Պատրիկ Հենրիի խոսքով. «Անձինք արգելանքի են վերցվում, գույքն առգրավվում է ամենակամայական կերպով առանց որևէ ապացույցի և հիմնավորման» պետական իշխանության ուժով²:

ԱՄՆ դատական պրակտիկայում ձևավորված այս կանոնը հետագայում որոշ տարբերու-

¹ Տե՛ս *Bradford P. Wilson*, California State University San Bernardino, Exclusionary rule, էջ 2-3, <https://www.ncjrs.gov/pdffiles1/Digitization/100738NCJRS.pdf>:

² Տե՛ս նույն տեղում:

թյուններով իր տարածումն է գտել նաև այլ երկրներում³, այդ թվում՝ ՀՀ իրավական համակարգում. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ ապացույցների թույլատրելիությունը սահմանող 97-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Ապացույցներ ձեռք բերելիս էական են նաև այն խախտումները, որոնք դրսևորվել են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ կամ քրեական վարույթի սկզբունքների խախտմամբ»:

¹⁵ Տե՛ս Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 17՝ ԱԵԴ-ի դատական պրակտիկայից բազմաթիվ օրինակներով:

¹⁶ Եվրոպական իրավունքի հիմնարար սկզբունքների՝ իբրև սահմանադրական սկզբունքների մասին տե՛ս v. Bogdandy, EuR 2009, 749:

¹⁷ v. Bogdandy, EuR 2009, 749 (761):

որոնք ազգային սահմանադրական իրավունքում հայտնի են իբրև կառուցվածքային սկզբունքներ: Ըստ այդմ՝ ազատության և ժողովրդավարության սկզբունքները կամ լոյալ համագործակցության սկզբունքը Եվրոպական իրավունքի այդպիսի սկզբունքներ են, տես նաև ԵՄՊ 2-րդ և 3-րդ հոդվածները (դրա մասին ստորև II. կետի տակ):

2. Երկրորդային իրավունքը

Երկրորդային իրավունքը ԵՄ մարմինների կողմից պայմանագրերում նրանց վերապահված իրավասությունների հիման վրա ընդունված իրավունքն է¹⁸: Պայմանագրերում մասամբ ամրագրված է նաև գործելու ձևը (օրինակ՝ դիրեկտիվը ԵՄԳՊ 115-րդ հոդվածում), բայց որպես կանոն գործում է ԵՄԳՊ 296-րդ հոդվածը, որը մյուս բոլոր դեպքերի համար սահմանում է, որ ԵՄ մարմինները դեպքից դեպք ինքնուրույն են որոշում իրենց գործելու ձևը՝ «պահպանելով սահմանված ընթացակարգերը և համաչափության սկզբունքը»¹⁹:

ա) Իրավաստեղծումը

Եվրոպական օրենսդրական գործընթացի մասին տարրական գիտելիքներն անհրաժեշտ են ինչպես իրավանորմերի հարաբերակցությունը, այնպես էլ Միության վերազգային կառուցվածքը հասկանալու համար:

Եվրոպական իրավունքի իրավանորմերը բաժանվում են երկու խմբի՝ օրենսդրական ակտեր և օրենքի բնույթ չունեցող իրավական ակտեր: Տարբերիչ հատկանիշը, ըստ ԵՄԳՊ 289-րդ հոդ. 3-րդ մասի, այն է, թե արդյոք իրավական ակտն ընդունվել է ստորև ներկայացվող օրենսդրական գործընթացներից մեկում:

աա) Օրենսդրական ակտերը

Օրենսդրական գործընթացներն իրենց հերթին բաժանվում են երկու տեսակի՝ *սովորական* օրենսդրական գործընթաց, որը կարգավորված է ԵՄԳՊ 294-րդ հոդվածում, և *հատուկ* օրենսդրական գործընթաց, որը կարգավորված է պայմանագրերի տարբեր բաժիններում, բայց արդեն հիշատակվում է ԵՄԳՊ 289-րդ հոդ. 2-րդ մասում:

Օրենսդրական գործընթացում առկա երկու առանձնահատկություններ պայմանավորված են ԵՄ-ի՝ իբրև վերազգային կազմակերպության բնույթով: Դրանցից մեկը Խորհրդի հատուկ դերն է²⁰: Նա լրջորեն ներգրավված է օրենսդրական գործընթացում: Նա պետք է համաձայնություն տա յուրաքանչյուր օրենսդրական ակտին (տես, օրինակ, ԵՄԳՊ 294-րդ հոդ. 3-րդ մասը): Բացի դրանից՝ շատ ոլորտներում Խորհրդի հավանության համար անհրաժեշտ է *որակյալ մեծամասնություն*²¹, այն դեպքում, երբ միջազգային կազմակերպությունների մեծ մասում որոշումները կարող են ընդունվել միայն *միաձայն*: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ Հանձնաժողովը, համաձայն ԵՄՊ 17-րդ հոդ. 2-րդ մասի 1-ին նախադասության, օրենսդրական ակտերի համար ունի *օրենսդրական նախաձեռնության մենաշնորհ*²²: Ընդ որում՝ Հանձնաժողովը գործում է իբրև անկախ, միայն ԵՄ-ի շահերին ծառայող մարմին (ԵՄՊ 17-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախ.) և օրինագծերը ներկայացնում է Խորհուրդ ու Խորհրդարան:

¹⁸ Nettesheim in Grabitz/Hilf/Nettesheim, Das Recht der EU, 68. EL 2019, AEUV Art. 288 (Aug. 2012) Rn. 30.
¹⁹ Haltern, EuropaR I, 2017, Rn. 862.
²⁰ Խոսքն այստեղ ԵՄ Խորհրդի մասին է, որը պետք է տարբերել Եվրոպական խորհրդից և Եվրախորհրդից: ԵՄ մարմինների մասին տես հոդվածաշարի առաջին մասը՝ Հովհաննիսյան, Դատական իշխանություն 280-282/2022, էջ 96-100, հատկապես 25-րդ տողատակի ծանոթագրությունը:
²¹ Համաձայն ԵՄՊ 16-րդ հոդ. 4-րդ մասի՝ այդ պահանջը պետք է միշտ բառացիորեն նախատեսված լինի պայմանագրերում:
²² Չնայած դրան՝ կան այնուամենայնիվ առանձին բացառություններ Հանձնաժողովի «նախաձեռնության իրավունքի մենաշնորհից», տես Martenczuk in Grabitz/Hilf/Nettesheim, Das Recht der EU, 68. EL 2019, EUV Art. 17 (Juli 2016) Rn. 55:

(1) Սովորական օրենսդրական գործընթացը

Սովորական օրենսդրական գործընթացը մանրամասն նկարագրվում է ԵՄԳՊ 294-րդ հոդվածում²³: Այն բաժանվում է ընդհուպ **ութ քայլի**, որոնք, սակայն, ոչ բոլորը պիտի պարտադիր պահանջվեն: Կախված ընթացքից՝ Խորհրդարանն ունի **վետոյի իրավունք**, օրինակ՝ երկրորդ ընթերցման շրջանակում՝ ըստ ԵՄԳՊ 294-րդ հոդ. 7-րդ մասի «բ» կետի:

Այսպիսով, Հանձնաժողովի օրենսդրական նախաձեռնությունից (ԵՄԳՊ ձևակերպմամբ՝ առաջարկից) հետո այս գործընթացը կախված է ամենից առաջ Խորհրդարանի ու Խորհրդի համագործակցությունից:

(2) Հատուկ օրենսդրական գործընթացը

Հատուկ օրենսդրական գործընթացը որոշվում է համապատասխան իրավասության մասին նորմով²⁴ (տես, օրինակ, ԵՄԳՊ 289-րդ հոդ. 2-րդ մասը): Այս գործընթացին բնորոշ է, որ առաջատար դեր ունի կամ Եվրոպական խորհրդարանը, կամ Խորհուրդը, և համապատասխանաբար մյուս մարմինը պետք է մասնակից դարձվի գործընթացին²⁵:

Հատուկ օրենսդրական գործընթացը կարելի է ստորաբաժանել **համաձայնության գործընթացի**²⁶ և **լուսնների գործընթացի**,²⁷ կախված նրանից, թե անհրաժեշտ է Եվրոպական խորհրդարանի համաձայնությունը, թե նրան լսելը: Չլսելն օրենսդրական գործընթացի էական թերություն է ԵՄԳՊ 263-րդ հոդ. 2-րդ մասի իմաստով, որի հետևանքն օրենսդրական ակտի ոչ իրավաչափությունն է²⁷: Իրավական ակտն ընդունվում է Եվրոպական խորհրդարանի կողմից՝ Խորհրդի մասնակցությամբ, կամ Խորհրդի կողմից՝ Խորհրդարանի մասնակցությամբ (ԵՄԳՊ 289-րդ հոդ. 2-րդ մաս)²⁸:

(3) Trilogue

Միութենական օրենսդրության կարևոր բաղադրիչ են դարձել այպես կոչված *Trilogue-ները*: Դրանք ԵՄ երեք մարմինների՝ Հանձնաժողովի, Խորհրդի ու Խորհրդարանի միջև միջինստիտուցիոնալ քննարկումներ են: Դրանք որոշ իմաստով հաշտեցման՝ նախորդող ու ոչ ֆորմալ ընթացակարգ են²⁹: Նորմերով սահմանված օրենսդրական գործընթացներից այս շեղման պատճառը օրենքների ընդունման արագացումն է: *Trilogue-ների* աճմանը նպաստել է նաև փոքր և ոչ հրապարակային խմբերում փոխզիջումների գնալու մեծ պատրաստակամությունը, ինչպես նաև քաղաքական որոշումներ կայացնելու աճող բարդությունը³⁰:

Թեև անվիճելի են *Trilogue-ների* գործնական առավելությունները, բայց դրանք

²³ Սովորական օրենսդրական գործընթացի մասին մանրամասն տես Haratsch/Koenig/Pechstein, EuropaR, 2018, Rn. 344f., գործընթացի համառոտ նկարագրությունը սխեմայով տես Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 79, մանրամասն սխեմա տես Haltern, EuropaR I, 2017, Vor Rn. 1168:

²⁴ Հատուկ օրենսդրական գործընթացի դեպքերի թվարկումը տես Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 289 Rn. 3f.:

²⁵ Streinz, EuropR, 2019, § 6 Rn. 563.

²⁶ Օրինակ՝ պատգամավորների ստատուտի (ԵՄԳՊ 223-րդ հոդ.) կամ քննիչ հանձնաժողովների (ԵՄԳՊ 226-րդ հոդ. 3-րդ մաս) մասին կարգավորումները՝ իբրև Խորհրդարանի օրենսդրական ակտերի օրինակ՝ Խորհրդի մասնակցությամբ, կամ, օրինակ, հակախտրական միջոցառումները (ԵՄԳՊ 19-րդ հոդ. 1-ին մաս) կամ Եվրոպական դատախազության մասին կարգավորումները (ԵՄԳՊ 86-րդ հոդ. 1-ին և 4-րդ մասեր)՝ իբրև Խորհրդի օրենսդրական ակտերի օրինակ՝ Խորհրդարանի համաձայնությամբ (օրինակներն ըստ՝ Streinz, EuropR, 2019, § 6 Rn. 564f.):

²⁷ EuGH, C-138/79, ECLI:EU:C:1980:249 Rn. 37 – Roquette Frères ./ Rat.

²⁸ Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 80.

²⁹ Haltern, EuropaR I, 2017, Rn. 1158.

³⁰ Haltern, EuropaR I, 2017, Vor Rn. 1155.

քննադատվում են ամենից առաջ դրանց ոչ թափանցիկության պատճառով³¹:

բբ) Օրենքի բնույթ չունեցող իրավական ակտերը

Օրենսդրական ակտերի կողքին եվրոպական իրավունքում գոյություն ունեն նաև Հանձնաժողովի՝ օրենքի բնույթ չունեցող **գործադիր իրավական ակտերը**: Այս կատեգորիայի մեջ են մտնում *պարտիրակված իրավական ակտերը* (ԵՄԳՊ 290-րդ հոդ.) և *կարարողական իրավական ակտերը* (ԵՄԳՊ 291-րդ հոդ.): Հետևաբար, կանոնակարգերը, որոշումները կամ դիրեկտիվները (գերմ. *Verordnungen, Beschlüsse, Richtlinien*) կարող են լինել օրենքի բնույթ ունեցող կամ չունեցող իրավական ակտեր (տես ԵՄԳՊ 297-րդ հոդ. 2-րդ մասը), դասակարգման համար որոշիչ է միայն այն ընթացակարգը, որի միջոցով դրանք ընդունվում են³²:

բ) ԵՄԳՊ 288-րդ հոդվածի կատալոգը

Ներկայացված ընթացակարգերով ընդունվում է եվրոպական երկրորդային իրավունքը: Երկրորդային իրավական ակտերի համար կենտրոնական նորմը ԵՄԳՊ 288-րդ հոդվածն է, որը թվարկում է ԵՄ-ի տարբեր իրավական ակտերը: Ընդ որում, այդ կատալոգն **սպառիչ չէ**:³³

աա) Կանոնակարգեր

Ըստ ԵՄԳՊ 288-րդ հոդ. 2-րդ մասի՝ կանոնակարգերն «ընդհանուր կարգավորումներ» են, այսինքն՝ ունեն ընդհանուր ու վերացական բնույթ և անմիջականորեն ուղղված են Միության մարմիններին, անդամ պետություններին և Միության քաղաքացիներին: Դրանք գործում են **անմիջականորեն**՝ առանց փոխակերպող ակտի անհրաժեշտության: Դրանք ունեն **կիրառման առաջնություն**: Ըստ այդմ՝ անդամ պետության օրենքը *չպետք է կիրառվի*, եթե այն հակասում է որևէ կանոնակարգի: Միության քաղաքացիները նույնպես կարող են անմիջականորեն վկայակոչել կանոնակարգը, եթե այն սուբյեկտիվ իրավունքներ է տրամադրում:

Քանի որ վարչական մարմինները պարտավոր են անմիջականորեն կիրառել կանոնակարգերը, ապա ազգային իրավունքի ու կանոնակարգի միջև հակասության դեպքում ծագում է վարչական մարմնի կողմից ազգային իրավունքի նորմը չկիրառելու իրավասության հարցը: Դա վիճելի է³⁴: Հօգուտ վարչական մարմնի նման իրավասության խոսում են եվրոպական իրավունքի կիրառման առաջնությունը և *Effet-utile*-սկզբունքը: Նման փաստարկման դեմ խոսում են, սակայն, օրենքով վարչական մարմնի կաշկանդվածությունը և այն, որ վարչական մարմինը նման դեպքերում հնարավորություն չունի դիմելու *ԱԵԴ* այդ հարցը նախապես պարզելու նպատակով³⁵: Ավելի համոզիչ միջին մոտեցումը բացառության կարգով ընդունում է վարչական մարմնի՝ ազգային նորմը չկիրառելու իրավասությունը եվրոպական իրավունքին *ակնհայտ հակասության* դեպքում³⁶: Այսպիսով, երբ ազգային

³¹ Մանրամասն քննադատություն տես Haltern, EuropaR I, 2017, Vor Rn. 1159 ff.

³² Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 81՝ բազմաթիվ օրինակներով, օրինակ՝ ԵՄՊ 7-րդ հոդ. 1-ին մաս, 14-րդ հոդ. 2-րդ մաս, 18-րդ հոդ. 6-րդ մասի 2-րդ ենթամաս:

³³ Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 98. ԵՄԳՊ 288-րդ հոդվածից դուրս գտնվող գործողությունների դասակարգման մասին տես Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 100–105: Այդ իրավական ակտերը կոչվում են չիշխատակված իրավական ակտեր:

³⁴ ԱԵԴ-ը հաստատում է ազգային նորմը վերացնելու պարտականությունը (տես, օրինակ, ԱԵԴ C-103/88, ECLI:EU:C:1989:256 = Slg. 1989, 1839 – Fratelli Costanzo): Վեճի մասին տես. Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 74 f.; Schwerdtfeger/Schwerdtfeger, Öffentl. Recht in d. Fallbearb., 2018, § 48 Rn. 713 f.:

³⁵ Mögele, BayVBl. 1993, 129 (131); Pagenkopf, NVwZ 1993, 216 (222); Papier, DVBl. 1993, 809 (814); Pietzcker, FS-Everling, S. 1095 (1105).

³⁶ Sfin Jarass, Grundfragen der innerstaatlichen Bedeutung des EG-Rechts, S. 102 ff.; Weber, EuR 1986, 1 (25 f.); Winter, NuR 1991, 453 (454); նույն ինքը, DVBl. 1991, 657 (666); Streinz/Herrmann, BayVBl. 2008, 1 (7 f.):

իրավունքը կոնկրետ դեպքն ակնհայտորեն այլ կերպ է կարգավորում, քան կանոնակարգը, ապա վարչական մարմինը պարտավոր է կիրառել կանոնակարգը:

բբ) Դիրեկտիվները

Դիրեկտիվներն ուղղված են բացառապես անդամ պետություններին: Նրանք սկզբունքորեն պարտավոր են սահմանված ժամկետում դիրեկտիվի կարգավորման բովանդակությունը փոխադրել ազգային իրավունք: Այսպիսով, դիրեկտիվներն սկզբում ընդունվում են եվրոպական օրենսդրի կողմից և հետո անդամ պետությունների ներպետական իրավական ակտերով ներդրվում ազգային իրավունքում: Դիրեկտիվներն ազգային իրավունքում ներդրելիս անդամ պետություններն ունեն *ներդրման ազատություն*: Այդ ազատությունն ամենից առաջ վերաբերում է դիրեկտիվի բովանդակությունն ազգային իրավունքում ներդրելու ձևին ու միջոցներին: Դրանով հնարավորություն է ստեղծվում պատշաճ կերպով արձագանքելու ազգային առանձնահատկություններին: Այս տեսանկյունից դիրեկտիվները կանոնակարգերի համեմատ եվրոպական իրավունքի՝ անդամ պետությունների ինքնիշխանությունը նվազ շոշափող միջոցներ են: Բովանդակային տեսանկյունից ներդրման ազատությունը հաճախ խիստ սահմանափակված է³⁷:

Անգամ եթե անդամ պետություններին է թողնվում ներդրման ձևի ու միջոցի ընտրությունը, նրանք այնուամենայնիվ պիտի պահպանեն *արդյունավետ ներդրման պահանջ*³⁸: Մասնավորապես, բավարար չէ դիրեկտիվի ներդրումը զուտ վարչական հրահանգների միջոցով³⁹: Անդամ պետությունը նաև չի կարող վկայակոչել այն հանգամանքը, որ մյուս անդամ պետությունները նույնպես չեն ներդրել դիրեկտիվը, կամ որ ներդրման համար սահմանված ժամկետը շատ կարճ է եղել⁴⁰:

Անգամ այդ ժամկետի ավարտից առաջ անդամ պետություններն իրավունք չունեն ընդունելու դիրեկտիվին հակասող իրավական ակտեր (այսպես կոչված *նախնական ներգործություն*)⁴¹: Բացի դրանից՝ ազգային իրավունքը պետք է հնարավորինս մեկնաբանվի *դիրեկտիվին համահունչ*⁴²: Այս սկզբունքը գործում է դիրեկտիվից առաջ ու հետո ընդունված ազգային իրավունքի համար⁴³:

Եթե ֆիզիկական կամ իրավաբանական անձը ցանկանում է օգտվել դիրեկտիվից բխող իրավունքներից, ապա նա սկզբունքորեն կարող է հենվել միայն դիրեկտիվի ազգային ներդրման վրա: Միայն ազգային նորմն է ուղղված ֆիզիկական և իրավաբանական անձանց: Դիրեկտիվն ինքը, ի տարբերություն կանոնակարգի, սկզբունքորեն չունի *անմիջական ներգործություն*: Որոշակի նախապայմանների դեպքում այս կանոնից կան **բացառություններ**:

Բացառության կարգով անմիջականորեն դիրեկտիվի դրույթը վկայակոչել կարողանալու համար անհրաժեշտ է, որ այն ազգային իրավունքում ներդրված չլինի կամ թերի ներդրված լինի, ներդրման ժամկետը լրացած լինի, ինչպես նաև դիրեկտիվի կոնկրետ դրույթը բովանդակության տեսանկյունից անպայման և բավարար չափով ճշգրիտ ձևակերպված լինի: Բովանդակային անպայմանությունը ենթադրում է անվերապահ և առանց պայմանների

³⁷ Մի օրինակ է սպառողների շահերի պաշտպանության իրավունքի ամբողջական ներդաշնակեցումը՝ Սպառողների իրավունքների մասին դիրեկտիվի հիման վրա (2011/83/ԵՄ):

³⁸ Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 28 f.

³⁹ Տե՛ս ԱԵԴ, C-361/88, ECLI:EU:C:1991:224:

⁴⁰ Տե՛ս Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 29՝ ԱԵԴ-ի պրակտիկայից բազմաթիվ օրինակներով:

⁴¹ ԱԵԴ, C-129/96, ECLI:EU:C:1997:628 – Inter-Environnement Wallonie.

⁴² Այդ մասին տե՛ս Kühling, JuS 2014, 481; Mittwoch, JuS 2017, 296:

⁴³ ԱԵԴ, C-397/01–C-403/01, ECLI:EU:C:2004:584 – Pfeiffer.

կիրառելի նորմի առկայություն: Չպետք է անհրաժեշտ լինեն անդամ պետությունների կամ Միության մարմինների կողմից կատարման ենթակա այլ միջոցառումներ: Դրույթը բավարար չափով ճշգրիտ է, եթե այն աներկիմաստ կերպով սահմանում է մի պարտականություն, ընդ որում անորոշ իրավական հասկացությունների գործածությունը նորմի որոշակիությանը չի հակադրվում⁴⁴: Այս երեք իրավական նախապայմանների կողքին գոյություն ունի, ըստ դատական պրակտիկայի, նաև մի նորմատիվ նախապայման: Անմիջականորեն դիրեկտիվը վկայակոչելը պիտի լինի միայն ի վնաս այն անդամ պետության, որը պատշաճ կերպով չի ներդրել այն: Երրորդ անձանց ծանրաբեռնումն անթույլատրելի է⁴⁵: Դիրեկտիվներն ուղղված են անդամ պետություններին և ոչ անհատներին: Բացի դրանից, դա համապատասխանում է այն սկզբունքին, որ Միությունն անհատի վրա կարող է պարտականություններ դնել միայն կանոնակարգով⁴⁶:

Անմիջականորեն կիրառելի դիրեկտիվների դեպքում նույնպես ծագում է վարչական մարմնի կողմից ազգային իրավունքը չկիրառելու հարցը:⁴⁷

Իրավական պաշտպանություն ընդդեմ դիրեկտիվների կարելի է ստանալ առոչնչության հայցի միջոցով՝ համաձայն ԵՄԳՊ 263-րդ հոդվածի:

գգ) Որոշումը

Որոշումը մի առանձին դեպքի պարտադիր կարգավորումն է: Այն կարող է ուղղված լինել ինչպես անդամ պետություններին, այնպես էլ մասնավոր անձանց⁴⁸: Այդ պատճառով որոշումները համեմատելի են վարչական ակտերի հետ: Դրանք ներգործում են անմիջականորեն: Ինչպես որ դիրեկտիվների դեպքում է, որոշումները նույնպես կարող են անմիջական ներգործություն ունենալ անհատների նկատմամբ⁴⁹: Նման որոշման դեմ կարելի է ներկայացնել առոչնչության հայց ԵՄԳՊ 263-րդ հոդ. 4-րդ հոդվածի իմաստով: Ի տարբերություն հասցեատերերին ուղղված որոշումների, այսպես կոչված *անհասցեատեր որոշումները* կաշկանդում են միայն Միությանը և նրա հաստատություններին: Դրանով որոշումը տարբերվում է նաև կանոնակարգերից⁵⁰:

դդ) Հանձնարարականները և կարծիքները

Հանձնարարականն ու կարծիքը **ոչ պարտադիր** իրավական ակտեր են: Այնուամենայնիվ *առանձին սահմանափակ լիազորման սկզբունքը* գործում է նաև այս ակտերի համար, ուստի Միությունը դրանց ընդունման համար ունի լիազորման կարիք⁵¹: Հանձնաժողովի հանձնարարականները, օրինակ, հաճախ ծառայում են այն նպատակին, որ Հանձնաժողովը պատշաճ կատարի եվրոպական իրավունքի պահպանման նկատմամբ իր վերահսկողական ու կառավարման գործառույթը⁵²:

II. Եվրոպական իրավունքի կառուցվածքային սկզբունքները

Եվրոպական իրավունքը մեկնաբանելիս ու կիրառելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ կառուցվածքային սկզբունքները:

⁴⁴ Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 54f.

⁴⁵ Streinz, EuropR, 2019, § 5 Rn. 498.

⁴⁶ ԱԵԴ, C-91/92, ECLI:EU:C:1994:292 Rn. 24 – Paola Faccini Dori.

⁴⁷ Այս վեճի մասին տես վերևում II 2b (1) «Կանոնակարգեր» կետի ներքո:

⁴⁸ Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 64.

⁴⁹ Streinz, EuropR, 2019, § 5 Rn. 524.

⁵⁰ Schroeder, Grundkurs EuropR, 2021, § 6 Rn. 70.

⁵¹ Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 97.

⁵² Nettesheim in Grabitz/Hilf/Nettesheim, Das Recht der EU, 74. EL 2021, AEUV Art. 292 (Mai 2013) Rn. 13.

1. Կիրառման առաջնությունը

Եվրոպական իրավունքն ունի կիրառման առաջնություն անդամ պետությունների իրավունքի նկատմամբ⁵³: Դա նշանակում է, որ եվրոպական իրավունքին հակասող ազգային իրավունքը դառնում է անկիրառելի, բայց չի կորցնում իր իրավաբանական ուժը:

2. Effet-utile-սկզբունքը

Effet-utile-սկզբունքի նպատակը համապատասխան նորմի գործնական արդյունավետությունն է⁵⁴: Պայմանագրային ամրագրում ստացել է սկզբունքը ԵՄՊ 4-րդ հոդ. 3-րդ մասում և ԱԵԴ-ի կողմից հաճախ օգտագործվում է Միության իրավունքը մեկնաբանելու համար⁵⁵: Ըստ դրա՝ նորմը պետք է այնպես մեկնաբանել, որ նրա կարգավորման նպատակը «լավագույնս ձեռք բերվի» և հնարավորինս արդյունավետորեն դրսևորվի: ԱԵԴ-ը այս սկզբունքը գերմաներենով թարգմանում է իբրև «*volle Wirksamkeit*» կամ «*praktische Wirksamkeit*»⁵⁶:

Օրինակ՝ դիրեկտիվների անմիջական կիրառելիության մասին վերևում նշված վեճում ԱԵԴ-ն անմիջական կիրառելիության օգտին իր մոտեցումը հիմնավորում է *Effet-utile*-սկզբունքով⁵⁷:

3. Լոյալ համագործակցության սկզբունքը

Լոյալ համագործակցության սկզբունքը ԵՄՊ 4-րդ հոդ. 3-րդ մասում անդամ պետություններին պարտավորեցնում է «ձեռք առնել ընդհանուր և հատուկ բնույթի բոլոր պիտանի միջոցները Եվրոպական միության իրավունքից բխող իրենց պարտավորությունները կատարելուն պատակով»⁵⁸: Այն կարելի է բնորոշել իբրև ԵՄ-ի ֆունդամենտալ սահմանադրական կառուցվածքային սկզբունք⁵⁹: Այս սկզբունքն իրավական առումով պարտադիր է, ուստի կարող է ԱԵԴ-ի ու ԵԴ-ի կողմից դատական կարգով ստուգվել⁶⁰: Սկզբունքի դրսևորումներ են ինչպես անդամ պետությունների միջև *համագործակցության սկզբունքը (Kooperationsprinzip)*, այնպես էլ *միմյանց հետ հաշվի նստելու սկզբունքը (Prinzip der Rücksichtnahme)*⁶¹:

Օրինակ՝ եթե անդամ պետություններում ԵՄ իրավունքը կատարելիս կիրառվում են ազգային ընթացակարգային նորմերը (վարչական և դատական վարույթներում), ապա վարույթը չի կարող ավելի անբարենպաստ լինել, քան ներպետական վարույթի դեպքում է (*համարժեքության պահանջ*), և Միության իրավունքի կյանքի կոչումը չպետք է գործնականում անհնար դարձվի կամ չափազանց դժվարացվի⁶²:

Լոյալ համագործակցության սկզբունքը գործում է **եռաչափ**, այն է՝ ինչպես անդամ պետությունների ու Միության միջև և հակառակը, այնպես էլ անդամ պետությունների միջև հարաբերություններում⁶³:

4. Միության արժեքները

ԵՄՊ 2-րդ հոդվածում թվարկված են Միության արժեքները: Տնտեսական համայնքի հիման վրա Միությունը զարգացել ու աստիճանաբար դարձել է արժեքների համայնք:

⁵³ Միջազգային իրավունքի կիրառման առաջնության մասին մանրամասն տե՛ս Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 145-146:

⁵⁴ Wegener in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, EUV Art. 19 Rn. 16.

⁵⁵ Մանրամասն տե՛ս Potacs, EuR 2009, 465:

⁵⁶ Տե՛ս, օրինակ, ԱԵԴ, C-6/90 և C-9/90, ECLI:EU:C:1991:428 – Francovich:

⁵⁷ Տե՛ս, օրինակ, ԱԵԴ, C-41/74, ECLI:EU:C:1974:133 Rn. 12 – van Duyn ./ Home Office:

⁵⁸ ԱԵԴ, C-355/04, ECLI:EU:C:2007:116 Rn. 52 – Segi ua ./ Rat:

⁵⁹ Kahl in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, EUV Art. 4 Rn. 97.

⁶⁰ Kahl in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, EUV Art. 4 Rn. 106.

⁶¹ Kahl in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, EUV Art. 4 Rn. 112.

⁶² Տե՛ս ԱԵԴ, C-312/93, ECLI:EU:C:1995:437 Rn. 12 – Peterbroeck:

⁶³ Schill/Krenn in Grabitz/Hilf/Nettesheim, Das Recht der EU, 74. EL 2021, AEUV Art. 4 (Jan. 2014) Rn. 61.

Նշված արժեքները սահմանադրական սկզբունքներ են, որոնք գործում են իբրև Միության կառուցվածքային պահանջներ⁶⁴: Արժեքների իրավական բնույթը դրսևորվում է հատկապես ԵՄՊ 7-րդ հոդ. 1-ին մասում դրանց վրա արվող հղմամբ: Արժեքների նկատմամբ հարգանքը Միությանն անդամակցելու նախապայմաններից մեկն է (ԵՄՊ 49-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախ.):

Annotation. The first part of the four-part series of articles on European law starts with basic questions and the foundations of organisational law.

The second part explains the legal sources of the European Union law and also deals with the legislative procedures. In addition, the structural principles applicable in the European law are outlined.

The third part focuses on the fundamental rights of the European Union, which - in addition to the fundamental freedoms - are the essential individual rights of European primary law. The structural peculiarities from the perspective of the European and constitutional law are described, with a particular focus on the binding effect of the Charter of Fundamental Rights for the Member States.

The fourth part explains the fundamental freedoms as the central means for establishing the internal market.

Аннотация. Первая статья из 4 статей о европейском праве начинается с анализа базовых вопросов и основ организационного права.

Во второй части объясняются правовые источники права Европейского Союза, а также рассматриваются законодательные процедуры. Кроме того, изложены структурные принципы, применяемые в европейском праве.

Третья часть посвящена основным правам Европейского Союза, которые, в дополнение к основным свободам, являются существенными индивидуальными правами европейского первичного права. Описаны структурные особенности с точки зрения европейского и конституционного права, с особым акцентом на обязательное действие Хартии по правам человека для государств-членов.

В четвертой части объясняются основные свободы как центральное средство для создания внутреннего рынка.

Բանալի բառեր – Եվրոպական միություն, առաջնային իրավունք, երկրորդային իրավունք, կանոնակարգ, դիրեկտիվ, սովորական օրենսդրական գործընթաց, հատուկ օրենսդրական գործընթաց, գործնական արդյունավետության սկզբունք, լրյալ համագործակցության սկզբունք:

Keywords: *European Union, primary law, secondary law, regulation, directive, the ordinary legislative procedure, the special legislative procedure, the principle of the practical effectiveness, the principle of loyal cooperation.*

Ключевые слова: *Европейский Союз, первичное право, вторичное право, постановление, директива, обычная законодательная процедура, специальная законодательная процедура, принцип практической эффективности, принцип лояльного сотрудничества.*

Հովհաննիսյան Գ. - Հագենի համալսարանի գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև Միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Սաքսոնիայի փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, էլ. հասցե՝ gor.hovhannisyan@iw-partner.de:

Ներկայացվել է խմբագրություն 03.02.2023թ., տրվել է գրախոսության 03.02.2023 թ., երաշխավորվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր, Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս, իրավագիտության թեկնածու Գոռ Թորոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.:

⁶⁴ Calliess in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, EUV Art. 2 Rn. 8.

ՎԴ/4427/05/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2022 թվականի սեպտեմբերի 08-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Մհեր Բադալյանի ընդդեմ Երևան համայնքի, երրորդ անձ Անթրանիկ Արթին՝ 08.06.2020 թվականի թիվ 01/18-Ա-3590-679 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.03.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Անթրանիկ Արթինի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մհեր Բադալյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևան համայնքի 08.06.2020 թվականի թիվ 01/18-Ա-3590-679 շինարարության թույլտվությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 17.01.2022 թվականի որոշմամբ վարչական ակտի կատարման կասեցումը վերացնելու միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.03.2022 թվականի որոշմամբ Անթրանիկ Արթինի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անթրանիկ Արթինը (ներկայացուցիչ Ալբերտ Կանդալյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի

6-րդ, 27-րդ, 83-րդ հոդվածները, 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անտեսելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի և 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջները, գտել է, որ Դատարանի 17.01.2022 թվականի որոշումը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով, այն պարագայում, երբ սույն գործի շրջանակներում նույն կարգի դատական ակտն արդեն իսկ եղել է բողոքարկված:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 46-րդ, 70-րդ և 71-րդ հոդվածները:*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործի շրջանակներում վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցումը կիրառվել է հենց Վերաքննիչ դատարանի դատավոր Արթուր Պողոսյանի կողմից կայացված 25.09.2020 թվականի որոշմամբ, հետևաբար, սույն գործով կանխակալ վերաբերմունք ունենալու պայմաններում վերջինս պարտավոր էր հայտնել ինքնաբացարկ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 01.03.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 5-րդ մասի, 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանը սույն բողոքի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. վարչական ակտի կատարման կասեցումը վերացնելու միջնորդության քննության արդյունքում կայացված դատական ակտը ենթակա է արդյո՞ք վերաքննության կարգով բողոքարկման:

1) ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...) ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի

(առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*տե՛ս, Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանգադով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Եվրոպական դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*տե՛ս, ophնակ, Khalfaoui v. France գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետեր 35, 36, Papon v. France գործով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, կետ 90*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*տե՛ս, նաև «Ֆասթ Սփլայ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներում (*տե՛ս, ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257, ՍԴՈ-1289*) կարևորելով իրավակարգավորման մի շարք սկզբունքներ, նաև արձանագրել է, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրա-

վունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են նույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատական ակտերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն՝

1. Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ՝

1) օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման.

2) այն դեպքերի, երբ վարչական մարմինը վարչական ակտ (ներառյալ՝ վարչական բողոքի վերաբերյալ ըստ էության որոշում) ընդունելիս գրավոր ձևով հիմնավորել է, որ անհապաղ կատարումն անհրաժեշտ է՝ ելնելով հանրային շահերից.

3) այն դեպքերի, երբ վիճարկվում է կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացված վարչական ակտ.

4) այն դեպքերի, երբ վիճարկվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու կամ այդ իրավունքից զրկելու ձևով վարչական տույժ նշանակելու վերաբերյալ վարչական ակտ.

4.1) այն դեպքերի, երբ վիճարկվում է ընդերքօգտագործման իրավունքի դադարման կամ կասեցման վարչական ակտը.

5) այն դեպքերի, երբ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վիճարկվում է վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտ (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի դեպքում հասցեատիրոջ համար բարենպաստ դրույթները).

6) այն դեպքերի, երբ վիճարկվում է ռազմական դրության իրավական ռեժիմի կանոնների խախտման համար վարչական տույժ նշանակելու վերաբերյալ վարչական ակտ.

7) այն դեպքերի, երբ վիճարկվում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կամ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին կայացված վարչական ակտ:

2. Հայցվորի միջնորդությամբ վարչական դատարանը կարող է գործի քննության ժամանակ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 4.1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը:

3. Միջնորդության վերաբերյալ որոշումը կայացվում է 3 օրվա ընթացքում:

4. Միջնորդությունը բավարարվում է, եթե առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

5. Վարչական դատարանն իրավասու է վիճարկվող վարչական ակտի կասեցումը պայմանավորելու որոշակի ժամկետով և կարող է ցանկացած ժամանակ փոխել կամ վերացնել իր որոշումը:

«Վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ կողմերն անմիջական կարգով իրավունք ունեն բողոքարկելու միայն այն միջանկյալ դատական ակտերը, որոնց բողոքարկման հնարավորությունն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով: Ըստ այդմ, օրենսդիրը նախատեսել է այն միջանկյալ դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով: Ընդ որում, նշված միջանկյալ դատական ակտերի շարքը սպառիչ է, ինչը նշանակում է, որ այն դատական ակտերը, որոնք նախատեսված չեն այդ ցանկում, չեն կարող բողոքարկվել վերաքննության կարգով (...):»

«Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի հստակ նախատեսումն ինքնանպատակ չէ. այն մի կողմից ապահովում է իրավական որոշակիության սկզբունքն այնքանով, որքանով դատավարության մասնակիցներին որոշակի է դառնում, թե որ միջանկյալ դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով, իսկ մյուս կողմից նման սահմանափակումն ապահովում է դատավարության բնականոն ընթացքը, քանի որ հակառակ պարագայում յուրաքանչյուր միջանկյալ դատական ակտի բողոքարկման դեպքում դատավարության բնականոն ընթացքը կարող է խաթարվել (...): (տե՛ս Արմեն Նավոյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության ծանապարհային ոստիկանության թիվ ՎԴ/7711/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.02.2019 թվականի որոշումը):»

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների և վկայակոչված նորմերի վերլուծության համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը համապատասխան միջնորդության առկայության և դրանում նշված հիմքերի հիմնավորվածության պարագայում կայացնում է վարչական ակտի կատարման կասեցման կամ վարչական ակտի կատարման կասեցումը փոխելու կամ վերացնելու մասին պատճառաբանված որոշում: Ընդ որում, նման որոշում կայացնելու անհրաժեշտության բացակայության դեպքում դատարանը մերժում է ներկայացված միջնորդությունը:

Նկատի ունենալով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, որպես վերաքննության կարգով բողոքարկման ենթակա, նախատեսված են նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատական ակտերը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ վերը նշված դատական ակտերը, այդ թվում, վարչական ակտի կատարումը կասեցնելու որոշումը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը, ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 13.08.2020 թվականին հայցվոր Մհեր Վալերիի Բաղայանի ներկայացուցիչ Սարգիս Մադաթյանը ներկայացրել է միջնորդություն՝ Երևանի քաղաքապետի կողմից 08.06.2020 թվականին տրված թիվ 01/18-Ա-3590-679 շինարարության

թույլտվության որոշման կատարումը կասեցնելու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատարանը (դատավոր Լ. Հակոբյան) 17.08.2020 թվականի որոշմամբ մերժել է վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը (նախագահող դատավոր Ա. Պողոսյան) 25.09.2020 թվականի որոշմամբ բավարարել է հայցվորի վերաքննիչ բողոքը, ՀՀ վարչական դատարանի 17.08.2020 թվականի որոշումը վերացրել է, հայցվորի միջնորդությունը բավարարել է. ամբողջությամբ կասեցրել է Երևանի քաղաքապետի կողմից 08.06.2020 թվականի Անթրանիկ Արթինին տրված թիվ 01/18/-Ա-3590-679 շինարարության թույլտվությունը՝ մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Երրորդ անձ Անթրանիկ Արթինի ներկայացուցիչ Ալբերտ Կանդալյանը 12.01.2022 թվականին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ պահանջելով վերացնել վարչական ակտի կատարման կասեցումը (**հավելվածի հատոր 4-րդ, գ.թ. 4-36**):

Դատարանը 17.01.2022 թվականի որոշմամբ մերժել է վարչական ակտի կատարման կասեցումը վերացնելու միջնորդությունը (**հավելվածի հատոր 4-րդ, գ.թ. 37-40**):

Վերաքննիչ դատարանը 01.03.2022 թվականին կայացված որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքի ընդունումն այն պատճառաբանությամբ, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի և 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի իմաստով վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշումը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը չի կարող դիտարկվել որպես վերաքննության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտ, քանի որ դրանով ամբողջությամբ/մասնակիորեն չի կասեցվել վարչական ակտի կատարումը կամ չի փոփոխվել/ վերացվել դատարանի նախկինում կայացրած որոշումը (**հավելվածի հատոր 4-րդ, գ.թ. 68-70**):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշումը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը չի կարող դիտարկվել որպես վերաքննության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտ: Ըստ էության, Վերաքննիչ դատարանի նման դիրքորոշումը ելնում է այն տրամաբանությունից, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 5-րդ մասով ուղղակիորեն նախատեսված են միայն վիճարկվող վարչական ակտի կասեցումը փոխելու կամ վերացնելու դեպքերը:

Մինչդեռ, տվյալ նորմի բովանդակային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորման շրջանակում դատարանը կայացնում է հետևյալ որոշումները.

- վարչական ակտի կատարումը կասեցնելու որոշումը փոխելու մասին,
- վարչական ակտի կատարումը կասեցնելու որոշումը վերացնելու մասին,
- վարչական ակտի կատարումը կասեցնելու որոշումը փոխելու կամ վերացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին:

Հետևաբար, նշված դատական ակտերը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի իմաստով հանդիսանում են վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտեր:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում, երրորդ անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելով, Վերաքննիչ դա-

տարանը բողոք բերած անձին գրկել է միջանկյալ դատական ակտը անմիջականբողոքարկելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հնարավորությունից, ինչը խաթարում է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված անձի՝ դատական պաշտպանության իրավունքի բուն էությունը:

2) Վճռաբեկ դատարանը միաժամանակ անհրաժեշտ է համարում անդրադառնալ վճռաբեկ բողոքում նշված այն հիմքին, որ Վերաքննիչ դատարանը սույն միջնորդությունը քննելիս պետք է հայտներ ինքնաբացարկ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորի ինքնաբացարկի հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի համաձայն.

1. Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ:

2. Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլնի, այն դեպքերը, երբ՝

1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, փաստաբանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ.

2) դատավորը՝ որպես մասնավոր անձ, ականատես է եղել այն հանգամանքներին, որոնք վիճարկվում են գործի քննության ընթացքում.

3) դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանն այլ դատարանում.

4) դատավորի մերձավոր ազգականը հանդիսացել է, հանդիսանում է կամ ողջամտորեն կհանդիսանա գործին մասնակցող անձ.

5) դատավորը գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ նա անձամբ կամ նրա մերձավոր ազգականը տնտեսական շահ ունի՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ.

6) դատավորը պաշտոն է զբաղեցնում ոչ առևտրային կազմակերպությունում, և գործով կարող են շոշափվել այդ կազմակերպության շահերը (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է: Եվրոպական դատարանն իր բազմաթիվ որոշումներում բացահայտել է դատարանի անկողմնակալության գնահատման չափանիշները: Այսպես, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ դատարանի անաչառությունը ենթադրում է գործը քննող դատավորի մոտ կանխակալ կարծիքի բացակայություն, իսկ ցանկացած դատավոր, որի անաչառության վերաբերյալ ողջամիտ կասկածներ կան, պետք է դուրս գա դատարանի կազմից: Նշված կասկածները պետք է ստուգվեն տարբեր ճանապարհներով: Առաջինը սուբյեկտիվ չափանիշն է, որը վերաբերում է քննվող գործի կապակցությամբ տվյալ դատավորի անձնական համոզմունքներին և վարքագծին, իսկ երկրորդը՝ օբյեկտիվ չափանիշը, վերաբերում է առաջարկվող այն երաշխիքներին, որոնք պետք է բավարար լինեն դատավորի անաչառության կապակցությամբ առաջացած ցանկացած ողջամիտ կասկած բացառելու համար: Սուբյեկտիվ չափանիշի համաձայն՝ դատարանի կամ դատավորի անկողմնակալությունը հանդես է գալիս որպես կանխավարկած, հետևաբար, քանի դեռ հակառակն ապացուցված չէ, դատավորը

համարվում է սուբյեկտիվորեն անկողմնակալ: Հակառակ դրան՝ օբյեկտիվ անկողմնակալությունը կախված է արտաքին գործոններից, և այս դեպքում դատավորի վարքագիծը երկրորդական նշանակություն է ստանում: Մասնավորեցնելով օբյեկտիվ չափանիշը՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ այն հիմնականում վերաբերում է դատավորի և վարույթի մյուս մասնակիցների միջև աստիճանակարգային կամ մյուս կապերին կամ դատական գործընթացի շրջանակներում միևնույն անձի կողմից տարբեր գործառույթների իրականացմանը: Հետևաբար՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշել՝ արդյոք տվյալ հարաբերությունների բնույթը և սերտության աստիճանը վկայում են այն մասին, որ դատարանն անկողմնակալ չէ (*տես, օրինակ, Piersack v. Belgium գործով Եվրոպական դատարանի 01.10.1982 թվականի վճիռը, կետ 30, Grieves v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 16.12.2003 թվականի վճիռը, կետ 69, Kyprianou v. Cyprus գործով Եվրոպական դատարանի 15.12.2005 թվականի վճիռը, կետեր 118, 121, Nicholas v. Cyprus գործով Եվրոպական դատարանի 09.01.2018 թվականի վճիռը, կետեր 49, 53, Ղուլյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 24.01.2019 թվականի վճիռը, կետ 45*):

Օբյեկտիվ չափանիշի տեսանկյունից Եվրոպական դատարանը կարևորել է նաև կոնկրետ գործի քննությանը դատավորի ունեցած դերը, դատավորի կողմից իրականացված գործողությունների շրջանակն ու բնույթը և գտել է, որ դատավորի կողմից գործի նյութերին պարզապես ծանոթ լինելը չի հանգեցնում վերջինիս անաչառության վերաբերյալ ծագած կասկածների ողջամտությանը (*տես, Morel v. France գործով Եվրոպական դատարանի 18.10.2000 թվականի վճիռը, կետ 45, Fazli Fazli Aslaner v. Turkey գործով Եվրոպական դատարանի 07.07.2014 թվականի վճիռը, կետ 31*): Վերադաս դատարաններում նույնիսկ երկու այլ դատավորների հետ գործի քննությունն իրականացնող և գործի քննությունը նախագահող դատավորը չպետք է քննի իր իսկ որոշման դեմ ներկայացված բողոքները (*տես, De Haan v. the Netherlands գործով Եվրոպական դատարանի 26.08.1997 թվականի վճիռը, կետ 51*):

Անկողմնակալության ապահովման մասով ազգային ընթացակարգերի, մասնավորապես՝ դատավորներին գործի քննությունից հեռացնելը կարգավորող կանոնների առկայությունն էական գործոն է: Այդպիսի կանոնները վկայում են այն մասին, որ ազգային օրենսդիրները հատուկ ուշադրություն են դարձնում տվյալ դատավորի կամ դատարանի անկողմնակալության հետ կապված հիմնավոր բոլոր կասկածները վերացնելուն և այդպիսի կասկածների պատճառները վերացնելու միջոցով փորձում են անկողմնակալություն ապահովել: Որպես այդպիսին կողմնակալության բացակայությունն ապահովելուց բացի՝ դրանք ուղղված են կողմնակալության ցանկացած արտաքին հատկանիշ վերացնելուն և այդպիսով նպաստում են, որ ժողովրդավարական հասարակությունում դատարանները հանրությանը վստահություն ներշնչեն: Իրավիճակից կամ կապից է կախված դատավորի անկողմնակալության վերաբերյալ կասկածների առաջացումը: Այդ կասկածների օբյեկտիվորեն հիմնավորված լինելը կամ չլինելն առավելապես կախված է կոնկրետ գործի հանգամանքներից և այն գործոններից, որոնք այդ իմաստով պետք է հաշվի առնվեն (*տես, Ղուլյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 24.01.2019 թվականի վճիռը, կետեր 47, 51*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու պարտադիր հիմքերի ցանկ, որն, ի թիվս այլնի, ներառում է դատավորի մասնակցությունը տվյալ գործի քննությանն այլ դատարանում:

Ըստ էության, վերոնշյալ նորմի մեկնաբանությունից բխում է, որ նշված հիմքի առկայությունը բացառում է դատավորի կողմից նույն գործի քննությունը վերադաս դատական ատյա-

նում, եթե վերջինս մասնակցություն է ունեցել այլ ատյաններում գործի ըստ էության քննությանը: Հետևաբար, կոնկրետ դատավորի կողմից նույն գործով տարբեր միջնորդությունների նկատմամբ դատական վերահսկողության գործառույթի իրականացումը չի կարող հիմք հանդիսանալ վերջինիս կողմից ինքնաբացարկ հայտնելու համար:

Սույն գործի փաստերից բխում է, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Արթուր Պողոսյանը 25.09.2020 թվականի որոշմամբ բավարարել է հայցվորի վերաքննիչ բողոքը, ՀՀ վարչական դատարանի 17.08.2020 թվականի որոշումը վերացրել է, ամբողջությամբ կասեցվել է վիճարկվող վարչական ակտի կատարումը՝ մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Երրորդ անձի ներկայացուցիչը 12.01.2022 թվականին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ պահանջելով վերացնել վարչական ակտի կատարման կասեցումը, որը Դատարանի 17.01.2022 թվականի որոշմամբ մերժվել է:

Նշված որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը 23.03.2022 թվականին մակագրվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Արթուր Պողոսյանին, ով 01.03.2022 թվականին կայացված որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքի ընդունումը:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդության քննությունը չի խոչընդոտում վարչական ակտի կատարման կասեցումը վերացնելու վերաբերյալ միջնորդության քննությանը նույն դատավորի կողմից: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում բողոքաբերի այն դիրքորոշումը, որ Վերաքննիչ դատարանի դատավոր Արթուր Պողոսյանի կողմից վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշման կայացման հիմքով սույն գործով կանխակալ վերաբերմունք ունենալու պայմաններում վերջինս պարտավոր էր հայտնել ինքնաբացարկ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում բացակայում է Վերաքննիչ դատարանի կողմից ինքնաբացարկ հայտնելու հիմքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.03.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՍնԴ/1246/04/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2023 թվականի հունվարի 25-ին

գրավոր ընթացակարգով քննելով էռնեստ Ղազարյանի վճռաբեկ բողոքը սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.06.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Կորյուն Մխիթարյանի՝ «Ասիամեզաստոռոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Կորյուն Մխիթարյանը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ: ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Տ. Փոլադյան) (այսուհետ՝ Դատարան) 22.11.2021 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Դատարանի 30.03.2022 թվականի որոշմամբ հաստատվել է Ընկերության պահանջների վերջնական ցուցակը, և նշանակվել է պարտատերերի առաջին ժողով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.06.2022 թվականի որոշմամբ էռնեստ Ղազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, Արմեն Սինանյանի, Նիկոլայ Մուսոյանի, Հայկ Դանիելյանի, Լյուդվիգ Գզողյանի, Արտյոմ Մելքոնյանի, Դիանա Ենոքյանի, Ռաֆայել Տեր-Վարդանյանի, Վահագն Ղազարյանի, Տաթևիկ Սաֆարյանի, Նազիկ Հովհաննիսյանի, Նորայր Կարապետյանի, Ռադիկ Գևորգյանի, Ավետիք Մարտիրոսյանի, Արտակ Ավետյանի, Ալբերտ Հովհաննիսյանի, Սերգեյ Քոչարյանի, Կարապետ Ղազարյանի, Պետիկ Հովակիմյանի, Գայանե Սարգսյանի, Գրենիկ Միրզոյանի, Անահիտ Սարգսյանի, Տիգրան Գրիգորյանի, Կարեն Ստեփանյանի, Արտյոմ Հակոբյանի, Աղասի Խաչատրյանի, Լիլիթ Հարությունյանի, Էդմոնդ Գրիգորյանի, Ապրես Մարտիրոսյանի, Մարգարիտ Մարգարյանի, Վրեժ Վարդանյանի, Յուլյա Թորոսյանի, Կոլյա Խաչիկյանի, Էդգար Հովակիմյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի «Սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին» 30.03.2022 թվականի որոշումը մասնակի՝ բողոքը ներկայացրած անձանց պահանջների գրանցումը մերժելու մասով, վերացվել է, և այդ մասով հարցն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել էռնեստ Ղազարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածը, չի կիրառել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի «է» կետը, որը պետք է կիրառեր, կիրառել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի «թ» կետը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Բողոքաբերը նշել է, որ Դատարանի 30.03.2022 թվականի որոշմամբ հաստատվել է պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, որով Էռնեստ Ղազարյանի պահանջը գրանցվել է որպես «թ» հերթի պահանջ: Նույն որոշմամբ Դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության 100 տոկոս բաժնետերը հանդիսանում է «Էռնեստ Կո» ՍՊԸ-ն, Էռնեստ Ղազարյանի պահանջը՝ 696.474.155 ՀՀ դրամի չափով, գրանցել է որպես «թ» հերթի պահանջ: Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ «Էռնեստ Ապրեսի Ղազարյանը հանդիսանում է «Էռնեստ Կո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Ասիամեգաստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենը և սեփականատերը: Վերաքննիչ դատարանը Դատարանի՝ Էռնեստ Ղազարյանի՝ 696.474.155 ՀՀ դրամի չափով պահանջը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ուժով Ընկերության պարտավորությունների ցուցակի՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում գրանցելու վերաբերյալ հետևությունը գնահատել է իրավաչափ և սույն գործի փաստական հանգամանքներից բխող»:

Վերաքննիչ դատարանը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ առանց գործում առկա ապացույցների, գործի նյութերի պատշաճ ուսումնասիրության՝ եկել է գործի նյութերից և օրենսդրությունից ակնհայտորեն չբխող եզրահանգման՝ պահանջի գրանցման հերթի վերաբերյալ՝ այդպես խախտելով սահմանված արդար դատաքննության իրավունքն այն աստիճան, որ Էռնեստ Ղազարյանը, գտնվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածով նախատեսված ամենավերջին հերթում, փաստացի զրկվելու է սնանկության վարույթով իրեն հասանելիք գումարների ստացումից:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 20.06.2022 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ Էռնեստ Ղազարյանի պահանջը գրանցել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի «է» կետի հիմքով:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դիմելով դատարան՝ Կորյուն Մխիթարյանը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ: ՀՀ սնանկության դատարանի 22.11.2021 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ (**հավելված, հատոր 1, գ. թ. 3-9, 13-25**):

2) Էռնեստ Ղազարյանը դատարան է ներկայացրել Ընկերության հանդեպ ունեցած պահանջը, որի հիմքում դրել է իր և Ընկերության միջև 13.08.2020 թվականին կնքված նպատակային փոխառության պայմանագիրը, 13.05.2020 թվականին կնքված նպատակային փոխառության պայմանագիրը, 04.05.2020 թվականին կնքված թիվ 050 նպատակային փոխառության պայմանագիրը և խնդրել է գրանցել իր պահանջը Ընկերության պարտատերերի

պահանջների ցուցակում՝ 696.474.150 ՀՀ դրամի չափով, որից 676.188.500 ՀՀ դրամը՝ պարտավորության մայր գումար, իսկ 20.285.655 ՀՀ դրամը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ (**հավելված, հատոր 1, գ. թ. 29-36**)

3) 04.08.2020 թվականին ՀՀ Երևան նոտարական տարածքում Ընկերության բաժնետերեր Ռադիկ Գևորգյանի, Գուլանա Ամանշիկայի և «Էռնեստ Կո» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Բաժնեմասի առուվաճառքի» պայմանագիր, ըստ որի՝ Ընկերության բաժնետերեր Ռադիկ Գևորգյանը և Գուլանա Ամանշիկայի Ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը վաճառել են «Էռնեստ Կո» ՍՊԸ-ին 145.700.500 ՀՀ դրամով:

4) Ընկերության 100 տոկոս բաժնեմասը պատկանում է «Էռնեստ Կո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Վերոնշյալ փոփոխությունը ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 18.08.2020 թվականին:

5) Էռնեստ Ղազարյանը հանդիսանում է «Էռնեստ Կո» ՍՊԸ-ի տնօրենը և սեփականատերը և Ընկերության տնօրենը:

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածը, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք սնանկ ճանաչված պարտապանի հիմնադիր հանդիսացող իրավաբանական անձի մասնակից ֆիզիկական անձի պահանջը ենթակա է գրանցման «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում, եթե վերջինս հանդիսանում է նաև պարտապան ընկերության տնօրեն:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով: Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով:

Նույն օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում, բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի:

1.1. Նույն օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված միջնորդության առկայության և պարտատիրոջ կողմից սույն հոդվածով սահմանված ընդհանուր կարգով պահանջ ներկայացվելու դեպքում դատարանը դիտարկում է միայն այդ պահանջը:

2. Պարտատիրոջ պահանջում պետք է նշվեն՝

ա) պահանջը ներկայացնող պարտատիրոջ՝

- իրավաբանական անձի համար՝ անվանումը և գտնվելու վայրը,
- ֆիզիկական անձի համար՝ անունը և բնակության վայրը.

բ) պարտավորությունը, որից բխում է պահանջը, ինչպես նաև կատարման ժամկետը.

գ) պահանջի չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, վսասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝ համապատասխան հաշվարկներով.

դ) պահանջը հիմնավորող հանգամանքները:

Պահանջին կից ներկայացվում են այն հիմնավորող փաստաթղթերը: Պահանջը ներկայացնելու ժամկետից հետո պահանջը հիմնավորող փաստաթղթեր կարող են ներկայացվել, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է սահմանված ժամկետում նման փաստաթուղթ ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Պահանջը և նրանց կից փաստաթղթերը ներկայացվում են 3 օրինակից:

2.1. Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները չպահպանելու դեպքում ներկայացված պահանջը չի դիտարկվում, որի մասին պարտատերը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը:

3. Պահանջը սահմանված կարգով ներկայացվելու դեպքում գրանցվում է դատարանում:

4. Պահանջի գրանցումից ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում դատարանը պահանջի և նրան կից փաստաթղթերի օրինակներն ուղարկում է կառավարչին՝ դրա մեկ օրինակը պարտապանին հանձնելու համար:

5. Նույն հոդվածի առաջին մասով նախատեսված ժամկետում ներկայացրած բոլոր պահանջները կառավարիչն ընդգրկում է պարտատերերի պահանջների նախնական ցուցակում՝ նույն օրենքի 82-րդ հոդվածով սահմանված պահանջների բավարարման հերթականությանը համապատասխան:

6. Պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Եթե հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ չեն ներկայացնում դատարան, ապա դատավորը եռօրյա ժամկետում առանց նիստ հրավիրելու որոշում է կայացնում պահանջների ցուցակը հաստատելու մասին (վերջնական ցուցակ): (...)

8. Եթե իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատարանը առարկությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերի չապահովված պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

(...)

է) չապահովված պարտատերերի պահանջները, ներառյալ՝ պարտադիր սոցիալական վճարները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած՝ հարկերի և (կամ) վճարների, վարչարարությունից ծագած տուգանքների գծով պարտավորությունները, բացառությամբ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջների.

(...)

թ) պարտապանի հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) պահանջները (...):

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերլուծելով վերոգրյալ իրավադրույթները և հաշվի առնելով օրենսդրի նպատակը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը նախատեսելով սնանկության վարույթում պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման որոշակի ընթացակարգ, միաժամանակ սահմանել է այդ պահանջների ցուցակը հաստատելու հստակ կառուցակարգ՝ այն եզրափակելով դատարանի կողմից պահանջների վերջնական ցուցակը հաստատելու վերաբերյալ լիազորության իրացմամբ: ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է վկայակոչված իրավակարգավորումների վերլուծությանը՝ մասնավորապես նշելով, որ սնանկության վարույթում օրենսդիրը, ինչպես պարտատերերի շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակ ունենալով, այնպես էլ ելնելով սնանկ ճանաչված պարտապանի շահերից, այն է՝ հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնելու իր բնականոն գործունեությունը, հաղթահարելու ֆինանսական դժվարությունները, վերականգնելու նրա կենսունակությունը, սահմանել է պարտատերերի կողմից պահանջների ներկայացման և դրանց հիմնավորվածության ստուգման որոշակի կառուցակարգ: Մասնավորապես՝ օրենսդրորեն ամրագրվել է, որ սնանկության մասին հայտարարությունից հետո մեկամսյա ժամկետում պարտատերերն իրենց պահանջները դատարան ներկայացնելիս պարտավոր են նշել այն պարտավորության մասին, որից բխում է պահանջը, դրա կատարման ժամկետը, ինչպես նաև պահանջը հիմնավորող հանգամանքները: Միաժամանակ, օրենսդիրը պարտավորեցրել է դատարանին անկախ պահանջի (պահանջների) նկատմամբ առարկություն ներկայացնելուց, քննության առնել դատարան ներկայացված յուրաքանչյուր պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը, որից հետո միայն որոշում կայացնել պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին: Նման օրենսդրական կարգավորումն ինքնանպատակ չէ և նպատակ ունի բացառելու սնանկության վարույթում չհիմնավորված պահանջներ ընդգրկելը, քանի որ այդպիսիք կհանգեցնեն ինչպես այն պարտատերերի իրավունքների և օրինական շահերի խախտման, որոնց պահանջները հիմնավորված են, այնպես էլ՝ պարտապանի և նրա հիմնադիրների (մասնակիցների) իրավունքների և օրինական շահերի խախտման:

ՀՀ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ներկայացված պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս դատարանները պետք է առաջին հերթին հաշվի առնեն այն հանգամանքը, որ հաստատման են ենթակա միայն այն պահանջները, որոնց առկայության և չափի վերաբերյալ ներկայացված են բավարար ապացույցներ, ընդ որում, ապացույցների բավարար լինելը գնահատողական կատեգորիա է, և յուրաքանչյուր գործով այն ենթակա է գնահատման՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից: Միաժամանակ, ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության վարույթում պահանջների վերջնական ցուցակի հաստատումը

սնանկության վարույթի առանցքային փուլերից է, որի հիման վրա կատարվում է պարտատերերի գրանցված պահանջների բավարարումը: Հետևաբար, առարկությունների քննարկման արդյունքում պահանջի օրինականությունը որոշելիս դատարանները պետք է ուշադրություն դարձնեն պարտատիրոջ կողմից պահանջը հիմնավորող հանգամանքների հիմնավորվածությանը՝ դրանով իսկ ապահովելով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման իրավական հիմնավորվածությունը (տես ըստ դիմումի «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶԴՐՈՍԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ի՝ Սարգիս Գասպարյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին թիվ ԿԴ/0033/04/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Վերլուծելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նշված դրույթով ամրագրված հերթում ընդգրկել է չապահովված պարտատերերի պահանջները, այդ թվում՝ պարտադիր սոցիալական վճարները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած՝ հարկերի և (կամ) վճարների, վարչարարությունից ծագած տուգանքների գծով պարտավորությունները՝ դրանց շարքից բացառելով ստորադաս չապահովված պարտատերերի պահանջները (դրանք ընդգրկված են այլ հերթում): Միևնույն ժամանակ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի վերլուծությունից հետևում է, որ նշված դրույթով ամրագրված հերթում կարող են գրանցվել բացառապես պարտապան իրավաբանական անձի **հիմնադիրների**, ինչպես նաև **մասնակիցների, բաժնետերերի, անդամների** կամ **գործընկերների** պահանջները:

Սույն որոշմամբ առաջադրված իրավական հարցի համատեքստում Վճռաբեկ դատարանը վերոնշյալ իրավական վերլուծությունների ամփոփման արդյունքում արձանագրում է, որ սնանկ ճանաչված պարտապանի հիմնադիր հանդիսացող իրավաբանական անձի մասնակից ֆիզիկական անձը, որը նաև պարտապան ընկերության տնօրեն է, չի հանդիսանում դրա հիմնադիր, մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր, հետևաբար պարտապանի հանդեպ նրա ունեցած պահանջը ենթակա չէ գրանցման «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի հերթում:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Էռնեստ Ղազարյանը դատարան ներկայացրած դիմումով խնդրել է Ընկերության պարտատերերի պահանջների ցուցակում գրանցել Ընկերության նկատմամբ ունեցած իր պահանջը՝ 696.474.150 ՀՀ դրամի չափով, որից՝ 676.188. 500 ՀՀ դրամը՝ պարտավորության մայր գումար, իսկ 20.285.655 ՀՀ դրամը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ՝ հիմքում դնելով իր և Ընկերության միջև 13.08.2020 թվականին կնքված նպատակային փոխառության պայմանագիրը, 13.05.2020 թվականին կնքված նպատակային փոխառության պայմանագիրը, 04.05.2020 թվականին կնքված թիվ 050 նպատակային փոխառության պայմանագիրը:

04.08.2020 թվականին Երևան նոտարական տարածքում Ընկերության բաժնետերեր Ռադիկ Գևորգյանի, Գուլզանա Ամանշիևայի և «Էռնեստ Կո» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Բաժնեմասի առուվաճառքի» պայմանագիր, ըստ որի՝ Ընկերության բաժնետերեր Ռադիկ Գևորգյանը և Գուլզանա Ամանշիևայի Ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը վաճառել են «**Էռնեստ Կո**» ՍՊԸ-ին 145.700.500 ՀՀ դրամով:

Ընկերության 100 տոկոս բաժնեմասը պատկանում է «Էռնեստ Կո» ՍՊԸ-ին. նշված փոփո-

խությունը ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 18.08.2020 թվականին: Էռնեստ Ղազարյանը հանդիսանում է «**Էռնեստ Կո» ՍՊԸ-ի տնօրենը և սեփականատերը և միաժամանակ Ընկերության տնօրենը:**

Դատարանը 30.03.2022 թվականի «Սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին» որոշմամբ նշել է, որ «(...) Էռնեստ Ապրեսի Ղազարյանը հանդիսանում է «Էռնեստ Կո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Ասիամեգաստոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենը և սեփականատերը: Հերևաբար, Դատարանը գտնում է, որ Էռնեստ Ղազարյանի՝ 696 474 155 ՀՀ դրամի չափով պահանջը, «Էռնեստ Կո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 145 701 000 ՀՀ դրամի և 123 732 000 ՀՀ դրամի պահանջները՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ուժով ենթակա են գրանցման «Ասիամեգաստոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտատերերի ցուցակի՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում»:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ մերժել է Էռնեստ Ղազարյանի վերաքննիչ բողոքը՝ վերահաստատելով Դատարանի պատճառաբանությունները և վկայակոչելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը («Պարտապանի հետ փոխկապակցված անձինք»)՝ իրավաչափ գնահատելով Էռնեստ Ղազարյանի՝ 696.474.155 ՀՀ դրամի չափով պահանջը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ուժով «Ասիամեգաստոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտատերերի ցուցակի՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում գրանցելու վերաբերյալ Դատարանի հետևությունը:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը:

Դատարանի որոշմամբ Էռնեստ Ղազարյանի պահանջը գրանցվել է «թ» հերթում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պարտապան Ընկերության 100 տոկոս բաժնետերը «Էռնեստ Կո» ՍՊԸ-ն է, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Էռնեստ Ղազարյանը հանդիսանում է «Էռնեստ Կո» ՍՊԸ-ի **տնօրենը և սեփականատերը** և Ընկերության **տնօրենը:**

Վերաքննիչ դատարանը Էռնեստ Ղազարյանի պահանջը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ուժով Ընկերության պարտատերերի ցուցակի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում գրանցելու վերաբերյալ Դատարանի հետևությունը գնահատել է իրավաչափ՝ վկայակոչելով պարտապանի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ իրավական նորմեր:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի հետ փոխկապակցված են համարվում՝

ա) պարտապանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական, դուստր կամ կախյալ իրավաբանական անձը.

բ) պարտապանի ղեկավարը, ինչպես նաև տնօրենների խորհրդի (դիրտորդ խորհրդի) անդամը, պարտապանի կոլեգիալ գործադիր մարմնի անդամը, գլխավոր հաշվապահը (հաշվապահը), ինչպես նաև սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու պահից վերջին մեկ տարվա ընթացքում նշված պաշտոններից ազատված անձը.

գ) պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտափայլ) կապիտալի 20 և ավելի

տոկոսին տիրապետող անձը.

դ) պարտապանին կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձը կամ մարմնի անդամը:

Պարտապանի նկատմամբ փոխկապակցված է համարվում նաև անձը, որը սույն մասում նշված ֆիզիկական անձանց հետ գտնվում է սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված հարաբերությունների մեջ, իսկ սույն մասի «գ» կամ «դ» կետերի հիմքով իրավաբանական անձի փոխկապակցվածության դեպքում՝ նաև այդ անձի՝ սույն մասի «բ» կետում նշված պաշտոն զբաղեցնող ֆիզիկական անձը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ օրենսդիրը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով փոխկապակցված անձանց պահանջները առանձնահատուկ հերթով չի նախատեսել նույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում:

Տվյալ դեպքում էռնեստ Ղազարյանի պահանջի հիմքում դրված փոխառության պայմանագրերի կողմերն են **ֆիզիկական անձ** էռնեստ Ղազարյանը և սույն գործով պարտապան Ընկերությունը, և պարտավորական հարաբերություններ ծագել են վերջինների միջև: Այլ կերպ ասած՝ փոխառության պայմանագրերը փոխադարձ իրավունքներ և պարտականություններ են առաջացել բացառապես էռնեստ Ղազարյանի և Ընկերության համար: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանն անտեսել են այն հանգամանքը, որ «էռնեստ Կո» ՍՊԸ-ն իրավաբանական անձ է և որևէ կերպ չի կարող նույնանալ էռնեստ Ղազարյան **ֆիզիկական անձի** հետ:

Սույն գործի ուսումնասիրությունից և վերոգրյալ պատճառաբանություններից ակնհայտ է, որ էռնեստ Ղազարյանը՝ որպես **ֆիզիկական անձ**, ոչ իրավահարաբերության ծագման պահին և ոչ էլ դրանից հետո չի հանդիսացել Ընկերության **հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր)**: Հետևաբար, Ընկերության նկատմամբ էռնեստ Ղազարյանի պահանջը չէր կարող գրանցվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում:

Ինչ վերաբերում է պարտապանի հետ փոխկապակցված անձ լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիտարկմանը, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանը ընդամենը վկայակոչել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը՝ չկատարելով նշված իրավանորմի և սույն գործի փաստերի համադրում:

Վերոգրյալից հետևում է, որ էռնեստ Ղազարյանի 696.474.150 ՀՀ դրամ չապահովված պահանջը պետք է ներառվի Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակի «է» հերթում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի

նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի՝ նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ գործի նյութերում, ինչպես նաև բողոքին կից ներկայացված չէ Էռնեստ Ղազարյանի և փաստաբան Արսեն Սախոյանի ինչպես նաև փաստաբան Արթուր Մանուկյանի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, կամ համապատասխան վճարումը կատարելու փաստը հավաստող ապացույց, իսկ վերաքննիչ և վճռաբեկ բողոքները ներկայացվել են Էռնեստ Ղազարյանի կողմից, հետևաբար Վճռաբեկ դատարանը Էռնեստ Ղազարյանի՝ փաստաբանի խելամիտ վարձատրության փոխհատուցման մասով գտնում է դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.06.2022 թվականի որոշումը և փոփոխել այն հետևյալ կերպ. Էռնեստ Ղազարյանի 696.474.150 ՀՀ դրամի չափով պահանջը գրանցել ՀՀ սնանկության դատարանի 30.03.2022 թվականի «Սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին» որոշման մեջ՝ որպես «է» հերթի չապահովված պահանջ: Մնացած մասով որոշումը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԵԿԴ/0172/01/16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2 մարտի 2023 թվական ք. Երևան
գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 27-ի որոշման դեմ ամբաստանյալ Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանի և պաշտպան Զ.Հարությունյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում հարուցվել է թիվ 69109715 քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգրք) 253-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

2015 թվականի նոյեմբերի 12-ին Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Ավթանդիլ Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով ու 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Ա.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով, որը հետագայում երկարացվել է:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 1-ի որոշմամբ Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով ու 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 9-ի որոշմամբ Ա.Ավետիսյանի վերաբերյալ գործի նյութերն անջատվել են առանձին վարույթում՝ 69105316 համարի ներքո ու նույն թվականի հունիսի 20-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ Ա.Ավետիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է գրավով՝ գրավի չափ սահմանվելով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի դատավճռով Ա.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ու երկու դրվագ 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Ավետիսյանին նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ նշանակված պատիժն հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու 1 (մեկ) տարի 4 (չորս) ամիս 24 (քսանչորս) օրը և Ա.Ավետիսյանին թողնվել է կրելու ազատազրկում՝ 3 (երեք) տարի 7 (յոթ) ամիս 6 (վեց) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով: Նույն դատական ակտով վճռվել է ներկայացված քաղաքացիական հայցը մասնակիորեն բավարարել, ու Ա.Ավետիսյանից հոգուտ տուժող «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բռնագանձել 1.912.600 (մեկ միլիոն ինը հարյուր տասներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում:

3. Մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի փետրվարի 27-ին որոշում է կայացրել պաշտպանի բողոքը մերժելու, մեղադրողի բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի դատավճիռը մասնակիորեն բեկանելու ու փոփոխելու մասին: Ա.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացվել է և Առաջին ատյանի դատարանի կողմից հանցանքների համակցության կանոններով նշանակված պատիժն հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու 1 (մեկ) տարի 4 (չորս) ամիս 25 (քսանհինգ) օրն ու Ա.Ավետիսյանին թողնվել է կրելու ազատազրկում՝ 3 (երեք) տարի 7 (յոթ) ամիս 5 (հինգ) օր ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվվել է փաստացի արգելանքի վերցնելու պահից:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ավետիսյանը և պաշտպան Զ.Հարությունյանը բերել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ ընդունվել են վարույթ¹:

Վճռաբեկ դատարանը 2022 թվականի հունիսի 6-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքների քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնա-

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

վորումներով.

1. Պաշտպան 2. Հարությունյանի բողոքի փաստարկները.

5. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ինչպես նաև դատարանի կիրառած նյութական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Այսպես՝ բողոքի հեղինակը նշել է, որ գործով առկա չէ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն Ա.Ավետիսյանի մեղավորության վերաբերյալ:

Մասնավորապես՝ բողոք բերած անձը փաստարկելով, որ առանց հանցակիցների բացահայտման և հանցանքի կատարման դրդապատճառը պարզելու անհնար է ողջամտորեն փաստել, որ նրանց գործողությունները համակարգվել են որևէ անձի կողմից, գտել է, որ անգամ Ա.Ավետիսյանին մեղսագրված գործողությունները հաստատված համարելու պայմաններում, չի բացառվում կասկածն առ այն, որ Ա.Բաղդասարյանը մոլորության մեջ է գցել Ա.Ավետիսյանին՝ հայտարարելով, որ կապի մեջ է կատարողների հետ՝ Ա.Ավետիսյանից գումար կորզելու նպատակ հետապնդելով, ուստի, քանի դեռ այդ հավանականությունը բացառված չէ, անհնար է գալ այն եզրահանգման, որ Ա.Ավետիսյանը կազմակերպել է հանցանքի կատարում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, փաստարկվել է, որ սույն գործով քննություն չի կատարվել նաև ենթադրյալ համակարգչային սաբոտաժները մեկ միասնական դիտավորությամբ կատարված լինելու ուղղությամբ, ուստի, ըստ բողոքաբերի, մեկ միասնական դիտավորությունը հերքող փաստական տվյալների բացակայության պայմաններում Ա.Ավետիսյանի ենթադրյալ գործողությունները դիտվում են իբրև մեկ հանցագործություն:

Բացի այդ, նշելով, որ համակարգչային սաբոտաժը սուբյեկտիվ կողմից կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, բողոքի հեղինակը գտել է, որ գործում բացակայում է ինչպես նշված հանցանքը կատարելու, այնպես էլ ծանր հետևանք առաջացնելու ուղղակի դիտավորության մասին վկայող որևէ փաստական տվյալ:

Ծանր հետևանք առաջացնելու դիտավորության կապակցությամբ բողոք բերած անձը կրկնելով, որ ենթադրյալ հանցագործության հանցակիցները բացահայտված չեն, գտել է, որ չփարատված է կասկածն առ այն, որ Ա.Ավետիսյանը չի ցանկացել որևէ բացասական հետևանք առաջացնել տուժող կազմակերպությունների համար կամ առաջացած հետևանքները ենթադրյալ հանցակիցների ինքնուրույն որոշման և ընտրված մեթոդիկայի արդյունք են:

Վերոշարադրյալի հետ մեկտեղ, նյութական իրավունքի վերլուծության արդյունքում, բողոքի հեղինակը եզրահանգել է, որ ծանր հետևանքն առավել բարձր հասարակական վտանգավորության աստիճան կրող է և ըստ էության համարժեք է այնպիսի հանցավոր հետևանքի, ինչպիսին է մարդուն կյանքից զրկելը, բնապահպանական բնույթի աղետների և վթարների առաջացումը, պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության ոչնչացումը, գույքային վնասը և այլն: Ընդ որում, օրենսդրությամբ որոշակիացված չլինելու դեպքում գույքային վնասի՝ ծանր հետևանք դիտարկելու համար, անհրաժեշտ է վերջինիս դրամական արտահայտությունը համադրել տուժողի սոցիալական դրությամբ:

Նշվածի հաշվառմամբ բողոքաբերը գտել է, որ կազմակերպության բնականոն գործունեության կազմալուծումը կամ գործարար համբավին վնաս պատճառելը՝ հիշյալ հանրորեն վտանգավոր հետևանքներին առերևույթ անհամարժեքության պատճառաբանությամբ, չեն կարող դիտարկվել որպես ծանր հետևանք: Միևնույն ժամանակ, բողոքաբերը փաստարկել

լով, որ Ա.Ավետիսյանի ենթադրյալ հանցավոր արարքների հետևանքով պատճառված գույքային վնասի վերաբերյալ տվյալներ առկա են միայն «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դրվագով, նշել է, որ ներկայացված քաղաքացիական հայցում արձանագրված գույքային վնասը՝ 13.616.872 ՀՀ դրամը չի կարող գնահատվել որպես ծանր հետևանք, քանի որ վերաբերելի հարկային տարվա արդյունքով արձանագրված հիշյալ ընկերությունների շրջանառությունն էապես գերազանցել է այն: Նշվածին համատեղ բողոքի հեղինակը գտել է նաև, որ տուժող ճանաչված ընկերությունների գործարար համբավին պատճառված վնասի վերաբերյալ պնդումն իրական չի կարող համարվել՝ ենթադրյալ հանցավոր արարքները կատարելուն հաջորդող ժամանակահատվածում հիշյալ ընկերությունների կողմից «հազար խոշոր հարկատուներ» ցուցակում ունեցած առաջխաղացման փաստարկմամբ:

5.1. Անդրադառնալով քաղաքացիական հայցին, բողոքաբերը նշել է, որ որպես պատճառված վնաս դիտարկված գույքային վնասի և ենթադրյալ հանցագործության միջև առկա չէ պատճառահետևանքային կապ:

5.2. Անդրադառնալով համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու մեղադրանքին, բողոքաբերը փաստարկել է, որ այն հիմնավորող ապացույցներից տուժող Ա.Թյությունջյանի ցուցմունքը՝ իր և ամբաստանյալի հոր միջև տեղի ունեցած հանդիպման և որդու դեմ չբողոքելու խնդրանքի վերաբերյալ, արժանահավատ չի կարող գնահատվել: Ըստ բողոքաբերի՝ քննարկվող մեղադրանքի տեսանկյունից դա ապացուցողական նշանակություն ունեցող միակ փաստական հանգամանքն է, որը չի համապատասխանում իրականությանը: Այս համատեքստում բողոքի հեղինակը նշել է, որ Աշոտ Ավետիսյանին գրավոր հարցման ենթարկելու վերաբերյալ արձանագրությունը ներկայացվել է դատարան և միջնորդվել է նրան հարցաքննելու, ինչը ոչ իրավաչափ մերժվել է, ուստի խախտվել է մրցակցության դատավարական սկզբունքը:

Ինչ վերաբերում է համակարգչի գնության արձանագրությանը, ապա այն չի հանդիսացել Ա.Ավետիսյանի անձնական օգտագործման համակարգիչը և օգտագործվել է նրա կողմից շահագործվող հանրային սննդի կետի հաճախորդների կողմից: Բացի այդ, ըստ բողոքի հեղինակի, որևէ անձի էլեկտրոնային փոստարկղ մուտք գործելու անհրաժեշտ տեղեկատվությունն ունենալու հանգամանքը չի կարող մեկնաբանվել որպես հանցավոր արարք, քանի որ անհնար է բացառել, որ նշվածը սխալմունքի արդյունքում է հայտնվել համակարգչում, հատկապես այն պայմաններում, երբ նույն համակարգչում բացակայում է համապատասխան տեղեկատվությանը տիրանալու պատվեր տալու և դրա դիմաց վճարելու վերաբերյալ հաղորդակցությունը: Բացի այդ, տուժողն իր ցուցմունքում հայտնել է նաև, որ որևէ անձ իր էլեկտրոնային փոստարկղ մուտք չի գործել, ինչը, ըստ բողոք բերած անձի, ևս ապացուցում է Ա.Ավետիսյանի անմեղությունը:

Ըստ բողոքաբերի՝ չի բացառվում նաև, որ ենթադրյալ պատվեր կատարողը հանդիսանա ավտոմատացված համակարգ, որը գործում է ինքնավար և չի պահանջում որևէ ֆիզիկական անձի ներգրավվածություն, ուստի ողջամիտ է խմբի գոյություն չունենալու մասին ենթադրությունը:

6. Անդրադառնալով ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիրքորոշմանը, բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանն առհասարակ գնահատման չի ենթարկել գործի քննության տևողությունը, ընտրված խափանման միջոցը փոփոխելուց հետո Ա.Ավետիսյանի դրսևորած վարքագիծը, մասնավորապես այն, որ նա կազմել է ընտանիք, գտել է աշխատանք և դրսևոր-

րել պատշաճ վարքագիծ, վերջինիս ընտանիքի կյանքի պայմանների վրա ազդեցությունը, հատկապես այն պայմաններում, երբ Ա.Ավետիսյանի կինը հղի է: Ըստ բողոքաբերի՝ նշված հանգամանքները վկայում են հասարակությունում Ա.Ավետիսյանի վերախնտեգրված լինելու և նրան կրկին մեկուսացնելու անհրաժեշտության բացակայության մասին:

7. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 27-ի որոշումը և ճանաչել ու հռչակել Ա.Ավետիսյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

II. Ամբաստանյալ Ա.Ավետիսյանի բողոքի փաստարկները.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ինչպես նաև առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Բողոքաբերի պնդմամբ, իր նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու առնչությամբ Առաջին ատյանի դատարանի տրված լուծման իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել իր առողջական վիճակը, ինչով պայմանավորված ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է գրավով, ազատության մեջ գտնվելու ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելը, ամուսնանալը, աշխատելը, դրական բնութագրվելը, ընտանիքի կյանքի պայմանների վրա նշանակված պատիժը կրելու ազդեցությունը, հատկապես այն դեպքում, երբ կինը հղի է, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը:

Նշվածի, ինչպես նաև գործի քննության տևողության հաշվառմամբ, բողոք բերած անձը եզրահանգել է, որ իր նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը կհամապատասխանի օրինականության, արդարության և պատժի անհատականացման հիմնարար սկզբունքներին:

Վերոգրյալի հետ մեկտեղ, բողոքաբերը փաստարկել է, որ մեղքը չընդունելն ու պատճառված վնասը հատուցված չլինելը հակակշռող գործոններ չեն կարող դիտարկվել, քանի որ պաշտպանության իրավունքից օգտվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս անձի:

9. Վերոգրյալի հաշվառմամբ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 27-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի դատավճռին:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

10. Ավթանդիլ Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա. «*«Մոսկովյան մշակութագործարարական կենտրոն «Դոմ Մոսկվի» Երևանում» ՍՊ ընկերության պնդմամբ Ա.Թյությունջյանի կողմից օգտագործվող՝ dommoskvy@mail.ru էլեկտրոնային փոստարկղի գաղտնաբառի և ապօրինի տիրանալու և դրա միջոցով փոստարկղով փոխանցվող տեղեկատվությանը հասանելիություն ստանալու նպատակով, 2015 թվականի հուլիսի 15-ին, dommoskvy@mail.ru փոստարկղի գաղտնաբառի ապօրինի տիրանալու շուրջ նախնական համաձայնության է եկել boroccoMr@gmail.com*

էլեկտրոնային փոստարկղն օգտագործող անհայտ անձի հետ, ով համակարգչային տեխնիկայի կիրառմամբ ապօրինի տիրացել և գումարի դիմաց 2015 թվականի հուլիսի 15-ին Ա.Ավետիսյանի կողմից օգտագործվող ttigran@inbox.ru էլեկտրոնային փոստարկղին փոխանցել է dommoskvy@mail.ru էլեկտրոնային փոստարկղ մուտք իրականացնելու համար անհրաժեշտ՝ տվյալ էլեկտրոնային փոստարկղի գաղտնաբառը: Ա.Ավետիսյանն ապօրինի տիրանալով համակարգչային տեղեկատվություն հանդիսացող dommoskvy@mail.ru էլեկտրոնային փոստարկղի գաղտնաբառին հնարավորություն է ստացել ապօրինի մուտք իրականացնել նշված փոստարկղ:

Այնուհետև, Ա.Ավետիսյանը, ծրագրավորել է համակարգչային սաբոտաժ իրականացնելու միջոցով խափանել «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» ՍՊ ընկերությունների կողմից օգտագործվող www.vivarobet.am կայքի աշխատանքն ու կազմալուծել ընկերությունների բնականոն գործունեությունը: Համակարգչային սաբոտաժ իրականացնելուն ուղղված իր հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով, Ուկրաինայում գտնվող իր ծանոթ Ա.Բաղդասարյանի օժանդակությամբ կազմակերպել և ղեկավարել է անմիջականորեն համակարգչային հարձակում իրականացնող մի խումբ անձանց կողմից գումարի դիմաց կայքի ուղեփակման ուղղված գործողությունները: Այսպես, Ա.Բաղդասարյանի միջոցով ստացած պատվերի շրջանակներում, 2015 թվականի նոյեմբերի 3-ին, նշված անհայտ անձինք, ժամը 15:00-ի սահմաններից մինչև նոյեմբերի 4-ը՝ ժամը 04:30-ն ընկած ժամանակահատվածում, DDoS տեսակի համակարգչային հարձակման են ենթարկել www.vivarobet.am կայքը, ինչի արդյունքում վրա են հասել Ա.Ավետիսյանի, Ա.Բաղդասարյանի և անմիջականորեն համակարգչային հարձակում իրականացրած անձանց դիտարկողությամբ նախատեսված ծանր հետևանքները, այն է՝ տրևական ժամանակով խափանվել է կայքը, որից օգտվող փաստյակ հազարավոր հաճախորդներ զրկվել են հնարավորությունից օգտվել «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» ՍՊ ընկերությունների կողմից մատուցվող ծառայություններից, ինչի հետևանքով ընկերությունների գործարար համբավին պատճառվել է ծանր վնաս, ինչպես նաև կազմալուծվել է նշված ընկերությունների բնականոն աշխատանքը, որի հետևանքով երկու ընկերությունների 1.284 աշխատակից տրևական ժամանակով մատնվել են պարապուրդի: DDoS տեսակի համակարգչային հարձակումը դադարեցնելու դիմաց Ավթանդիլ Ավետիսյանը «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» ՍՊ ընկերությունների գլխավոր տնօրեն Հ.Համբարձումյանից պահանջել է վճարել 5.000 ԱՄՆ դոլար: Հ.Համբարձումյանն առավել ծանր հետևանքներից խուսափելու նպատակով, համաձայնել է Ա.Ավետիսյանին վճարել նրա պահանջած գումարը, որից 2015 թվականի նոյեմբերի 4-ին, 9-ին և 10-ին Ա.Ավետիսյանն ստացել է ընդամենը՝ 1.912.600 ՀՀ դրամին համարժեք 4.000 ԱՄՆ դոլար, այդ թվում նաև DDoS տեսակի համակարգչային հարձակումներ հետագայում չիրականացնելու համար:

Բացի այդ, Ա.Ավետիսյանը ծրագրավորել է համակարգչային սաբոտաժ իրականացնելու միջոցով խափանել «Ինտերլոտո» ՍՊ ընկերության www.sport.totogaming.am կայքի աշխատանքը և դիտարկողությամբ առաջացնելով ծանր հետևանքներ՝ կազմալուծել ընկերության բնականոն գործունեությունը: Համակարգչային սաբոտաժ իրականացնելուն ուղղված իր հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով, Ուկրաինայում գտնվող իր ծանոթ Ա.Բաղդասարյանի օժանդակությամբ կազմակերպել և ղեկավարել է անմիջականորեն համակարգչային հարձակում իրականացնող մի խումբ անձանց կողմից գումարի դիմաց կայքի ուղեփակման ուղղված գործողությունները: Այսպես, Ա.Բաղդասարյանի միջոցով ստացած պատվերի շրջանակներում, 2015 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 09:25-ից մինչև ժամը 15:30-ն ընկած ժամանակահատվածում, նշված անհայտ անձինք DDoS տեսակի համակարգչային

չային հարձակման են ենթարկել www.sport.totogaming.am կայքը, ինչի արդյունքում վրա են հասել Ա.Ավետիսյանի, Ա.Բաղդասարյանի և անմիջականորեն համակարգչային հարձակում իրականացրած անձանց դիտարկությանը նախատեսված ծանր հետևանքները, այն է՝ տրական ժամանակով խափանվել է կայքը, որից օգտվող փաստյակ հազարավոր հաճախորդներ զրկվել են հնարավորությունից օգտվել ընկերության կողմից մատուցվող ծառայություններից, ինչի հետևանքով ընկերության գործարար համբավին պատճառվել է ծանր վնաս, ինչպես նաև կազմալուծվել է ընկերության բնականոն աշխատանքը, որի հետևանքով ընկերության 419 աշխատակից տրական ժամանակով մատնվել են պարապուրդի»²:

11. Առաջին ատյանի դատարանը, Ա.Ավետիսյանին մեղավոր ճանաչելով առաջադրված մեղադրանքում, արձանագրել է, որ «(...) [Թ]ույլարելի և արժանահավատ ապացույցների համադրման ու գնահատման արդյունքում [Առաջին ատյանի] դատարանը գալիս է այն եզրահանգման, որ (...) [ա]պացուցված է Ա.Ավետիսյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքները կատարելու մեջ»³:

11.1. Առաջին ատյանի դատարանն Ա.Ավետիսյանի նկատմամբ ազատագրված ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով հաշվի է առել. «[Ա]մբաստանյալի անձը, այն որ երիտասարդ է, ամուսնացած է, կատարած արարքի հանրության համար վրանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ նրա գործողությունների վրանգավորության աստիճանը, կատարած հանցագործություններից հետո նրա դրսևորած վարքագիծը, այն, որ զերծ է մնացել նոր հանցագործություններ կատարելուց, նախկինում դատապարտված կամ որևէ այլ կերպ արատավորված չլինելու հանգամանքը, ինչպես նաև այն որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանն ունի առողջական խնդիրներ և նրա մոտ ախտորոշվել է երկկողմանի Թ2Թէ-պնևմոնիա, խրոնիկ ասթմաիդ բրոնխիտ սրացման շրջանում, ծախ նստաբեղի ինֆեկցված լիպոմա և ըստ բժշկական տեղեկանքի Ա.Ավետիսյանին հարկավոր է շարժուն կյանք, խուսափել գիրանալուց, չափից ավելի խոնավությունից, սուր և հիվանդածին օդից, անհրաժեշտ է բժշկական հսկողություն և անհատական խնամողի կարիք, [ազատության մեջ գտնվելով] դրսևորել է պատշաճ վարքագիծ և դատարանի կանչով ներկայացել դատական նիստերին, բացի այդ Հայ-Ռուսական Համալսարանի ռեկտոր Ա.Դարբինյանի կողմից տրված բնութագրի համաձայն բնութագրվում է դրականորեն, ՀՌՀ ուսանողական խորհրդի նախագահի և ՀՌՀ ռեկտորի կողմից ունի ստացած պատվոգրեր, պատասխանավորությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, (...)»⁴:

12. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի իմաստով, ի թիվս այլոց, ծանր հետևանք կարող է դիտարկվել նաև կազմակերպությունների բնականոն գործունեության կազմալուծումը: Այս համատեքստում Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» ՍՊ ընկերությունների բնականոն գործունեությունը մեծապես պայմանավորված է եղել այդ ընկերությունների կողմից օգտագործվող ինտերնետային կայքերի անխափան աշխատանքով, որպիսի պայմաններում այդ կայքերի վրա DDoS տեսակի համակարգչային հարձակումը և դրանց աշխատանքի տրական խափանումը ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի իմաստով պետք է դիտարկվեն որպես ծանր հետևանքներ, քանի դրանց արդյունքում կազմալուծ-

² Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 261-315:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթեր 58-115:

⁴ Տե՛ս նույն տեղում:

վել է «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոյո» ՍՊ ընկերությունների բնականոն գործունեությունը: Ընդ որում՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» ու «Ինտերլոյո» ՍՊ ընկերությունների կողմից օգտագործվող ինտերնետային կայքերի վրա DDoS տեսակի համակարգչային հարձակումը և դիտավորությամբ դրանց աշխատանքի տրևական խափանումն Ա.Ավետիսյանի կողմից կազմակերպելու հանգամանքը հաստատվում է Առաջին աստիճանի դատարանի մեղադրական դատավճռի հիմքում դրված՝ քրեական գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Ինչ վերաբերում է Ա.Ավետիսյանին 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով մեղսագրված արարքները մեկ միասնական դիտավորությամբ կատարված լինելու վերաբերյալ պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկներին, ապա Վերաքննիչ դատարանը դրանք ընդունելի չի համարում՝ նկատի ունենալով, որ Ա.Ավետիսյանի կողմից DDoS տեսակի համակարգչային հարձակումներ են կազմակերպվել փարբեր ինտերնետային կայքերի («www.vivarobet.am» և «www.sport.totogaming.am») վրա, որոնք իրենց հերթին օգտագործվել են փարբեր ընկերությունների կողմից («Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոյո» ՍՊ ընկերություններ): Բացի այդ, սույն քրեական գործով ձեռք չի բերվել փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջություն առ այն, որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանի մոտ առկա է եղել «www.vivarobet.am» և «www.sport.totogaming.am» կայքերի վրա DDoS տեսակի համակարգչային հարձակումներ կազմակերպելու միասնական դիտավորություն և նպատակ: Այլ կերպ ասած՝ քրեական գործում բացակայում են տվյալներ այն մասին, որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանը նախնական մտադրություն է ունեցել կատարելու կոնկրետ հանցանքը մեկից ավելի, որոշակի ժամանակային ընդմիջումներով առանձնացված նույնական արարքներով»⁵:

13. Վկա, «Վիվառո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատակից Գ.Հակոբյանն իր ցուցմունքով, ի թիվս այլնի, հայտնել է, որ «Avtandil» օգտահաշիվն օգտագործողն իրենց մշտական հաճախորդն է: Վերջինից բազմաթիվ դժգոհություններ են ստացել կայքէջի աշխատանքի հետ կապված, և կարգադրել է նրան հրավիրել իրենց ընկերության գրասենյակ: 2015 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածում հանդիպել է նշված օգտահաշվի օգտատեր Ավթանդիլ Ավետիսյանի հետ, որի ընթացքում վերջինս նաև գործնական առաջարկ է արել, ինչի մասին տեղեկացրել է գլխավոր տնօրեն Հ.Համբարձումյանին ու 2015 թվականի նոյեմբերի 3-ին՝ ժամը 17-ի սահմաններում տեղի է ունեցել նրանց հանդիպումը, որից հետո ինքը ճանապարհել է Ա.Ավետիսյանին: Այդ ընթացքում Ա.Ավետիսյանը տեղեկացրել է, որ տվյալ պահին իրենց կայքէջը ենթարկվում է «DDoS» տեսակի համակարգչային հարձակման: Թեև այդ պահին իրենց կայքէջը լուրջ խափանումներով է աշխատել, չի կարևորել վերջինիս ասածը, սակայն հասկանալով, որ իրենք չեն կարողանում լուծել առաջացած խնդիրը, որոշել է Հ.Համբարձումյանին տեղեկացնել Ա.Ավետիսյանի հետ ունեցած հիշյալ զրույցի մասին: Հ.Համբարձումյանի հանձնարարությամբ կապ է հաստատել Ա.Ավետիսյանի հետ ու նրանից տեղեկացել հարձակում իրականացնելու վայրի և շարժառիթների վերաբերյալ, միևնույն ժամանակ վերջինս հայտնել է, որ պատրաստակամ է օգնել, ավելացնելով նաև, որ հարձակումը կատարվում է լուրջ հաքերների կողմից և լավ կլի-նի վճարել նրանց պահանջված գումարը⁶:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 14-րդ, թերթեր 109-133:

⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 48-50:

13.1. Վկա, «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գլխավոր տնօրեն Հ.Համբարձումյանն իր ցուցմունքով, ի թիվս այլնի, հայտնել է, որ 2015 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածում իր կողմից ղեկավարվող ընկերության աշխատակից Գ.Հակոբյանից տեղեկացել է, որ իրենց մշտական հաճախորդներից Ա.Ավետիսյանը գործնական առաջարկով ցանկանում է հանդիպել իր հետ: Հանդիպումից որոշակի ժամանակ անց Գ.Հակոբյանն իրեն հայտնել է, որ ըստ Ա.Ավետիսյանի՝ իրենց կայքէջի վրա իրականացվում է «DDoS» տեսակի համակարգչային հարձակում: Հասկանալով, որ իրենց մասնագետները չեն կարողանում լուծել խնդիրը, Գ.Հակոբյանին կարգադրել է կապնվել Ա.Ավետիսյանի հետ՝ պարզելու թե վերջինս արդյո՞ք կարող է օգնել իրենց: Որոշակի ժամանակ անց Գ.Հակոբյանը տեղեկացրել է, որ Ա.Ավետիսյանին հայտնի է հարձակումը կազմակերպելու վայրը, շարժառիթները և նա պատրաստակամ է օգնելու: Մինչույն ժամանակ, հայտնել է, որ կայքէջի բնականոն աշխատանքը վերականգնելու համար պահանջվել է 1-3 օր⁷:

13.2. Վկա, «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Հ.Վարդանյանն իր ցուցմունքով, ի թիվս այլնի, հայտնել է, որ «DDoS» տեսակի համակարգչային հարձակման հետևանքով կայքէջի բնականոն աշխատանքի վերականգման համար պահանջվել է 1-3 օր⁸:

13.3. Ա.Ավետիսյանի և այլ անձանց միջև կատարված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման ձայնագրառումներով լազերային սկավառակի գննության արձանագրության համաձայն՝ Ա.Ավետիսյանը, ի թիվս այլնի, 2015 թվականի նոյեմբերի 7-ին՝ ժամը 18:02-ին, իր կողմից օգտագործվող 094-08-80-30 հեռախոսահամարից 099-66-99-61 հեռախոսահամարի բաժանորդի հետ ունեցել է հետևյալ բովանդակությամբ հեռախոսազրույց (հատվածներ հեռախոսազրույցից).

«[Ավթանդի]: - Ապե, Դու «Տոփո» Վիխդ ունես:

[Գուլարյան]: - Ապե, էն վախտ հարցրել ես:

[Ավթանդի]: - Ապե, հիմա, որ «Տոփոյի» սայթը պարկցնենք, քո ջոգելով կկարանանք մեր վրա, որ դուրս գան պոկվենք, քո ջոգելով:

[Գուլարյան]: - Մարդ կպցնենք, ընենց անենք մեր վրա դուրս գան:

[Ավթանդի]: - Հա:

[Գուլարյան]: - Չեմ իմանում, դու էն պարտքը տվիր»⁹ :

Ա.Ավետիսյանը 2015 թվականի նոյեմբերի 9-ին՝ ժամը 17:22-ին, իր կողմից օգտագործվող 094-08-80-30 հեռախոսահամարից 380-97-90-43-572 հեռախոսահամարն օգտագործող Արման Բաղդասարյանի հետ ունեցել է հետևյալ բովանդակությամբ հեռախոսազրույց (հատվածներ հեռախոսազրույցից).

[Ավթանդի]: - ապե, էն թեմայով, հիշում ես, որ քեզ զանգել էի:

[Արման]: - Հա:

[Ավթանդի]: - Փողերը գցին, չտվին:

[Արման]: - Ո՞վ Վիվառոն:

[Ավթանդի]: - Հա, ձգձգում են ապե, չեն տալիս էլի:

(...)

[Ավթանդի]: - Ասենք եթե էլի փողը չտան ես իմ ջերից կտամ էլի էտ փողը, եթե բան ա մեկ

⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 54-59 և հատոր 4-րդ, թերթեր 279-283:

⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 49-54:

⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 157-158:

էլ պարկցնենք էլի, Տոյոն ու Գուդվինը:

[Արման]: - Հա, սաղ իրար հետ հա:

[Ավթանդի]: - Հա կամ մեկնումեկն էլի, կամ Տոյոն, Գուդվինը, մեկ ա, տարբերություն չկա: Հիմա կարաս դու իրանց ասես ասենք Տոյոն էլ պարկցնեն:

(...)

[Արման]: - (...) մի հատ դու ինձի գրի էլ բանով, վայբերով կոնկրետ սայթը գրի էլի կամ sms:

[Ավթանդի]: - Ապե, վայբեր չունեն, ցավդ տանեն, Facebook-ով հեսա կգրեն»¹⁰:

14. Ամբաստանյալ Ա.Ավետիսյանը վճռաբեկ բողոքին կից ներկայացրել է «Սլավմեդ» բժշկական կենտրոնի՝ 2020 թվականի հուլիսի 24-ի կազմված՝ իր կնոջ հղիության մեջ գտնվելու և ծննդաբերության ենթադրյալ ժամկետի՝ 2021 թվականի հունվարի 5-ին, վերաբերյալ տեղեկանքը¹¹:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի հանցակազմի ծանրացնող հանգամանքի՝ ծանր հետևանք առաջացնելու հատկանիշի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի միասնականությունն ապահովելու համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Ա.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով ու 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը:

1. «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին պատկանող «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակմանն ուղղված գործողություններն Ա.Ավետիսյանի կողմից կազմակերպելու հիմնավորվածությունը:

Պաշտպանի բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության ու գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարաններն Ա.Ավետիսյանի կողմից «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակմանն ուղղված գործողությունները՝ օգտագործողների համար դրանք անհասանելի դարձնելը կազմակերպելու վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանի կողմից հիշյալ ընկերությունների կայքէջերի ուղեփակմանն ուղղված գործողությունները կազմակերպելը հաստատված, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են վկաներ Հ.Համբարձումյանի, Գ.Հակոբյանի, Տ.Փարսադյանի, Հ.Վարդանյանի, Կ.Գրիգորյանի,

¹⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 174-176:

¹¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 15-րդ, թերթ 65:

Ա.Խաչատրյանի, Մ.Խաչատրյանի ցուցմունքներով, դատահամակարգչատեխնիկական փորձաքննությունների եզրակացություններով, բջջային հեռախոսը, հեռախոսային խոսակցությունների վերահսկման արդյունքները և հեռախոսահամարների մուտքային ու ելքային հեռախոսազանգերի վերծանումները զննելու մասին արձանագրություններով, և իրեղեն ու որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված փաստաթղթերով¹²:

Նշվածի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ Ա.Ավետիսյանի քրեական պատասխանատվության հիմքը հանցանք կատարելն է, ուստի բողոքաբերի՝ սույն որոշման 5-րդ կետում նշված՝ Ա.Բաղդասարյանի՝ ի սկզբանե հանցակցելու մտադրություն չունենալու և մոլորության մեջ գցելով գումար հափշտակելու հավանական մտադրության փաստարկը ողջամիտ չի կարող գնահատվել, ընդ որում, ապացույցների բավարար համակցությամբ՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան, ապացուցված է Ա.Ավետիսյանի՝ Ա.Բաղդասարյանի միջոցով հանցանքների կազմակերպումն ու ղեկավարումը, ինչպես նաև միջնորդավորված՝ Ա.Բաղդասարյանի միջոցով, կատարող(ների)ի հետ կապի մեջ գտնվելը:

Հիշյալ կայքէջերի ուղեփակումները միասնական դիտավորությամբ կատարելու վերաբերյալ բողոքաբերի դիրքորոշման կապակցությամբ հարկ է նաև նշել, որ քրեական գործում առկա է արժանահավատ ապացույցների բավարար համակցություն¹³՝ հանցագործությունների իրական համակցությունը շարունակվող հանցագործությունից սահմանազատելու¹⁴ վերաբերյալ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան եզրահանգում անելու համար: Տվյալ դեպքում, կատարված արարքները թեպետ եղել են նման և ուղղված են եղել միևնույն օբյեկտի դեմ, սակայն գործի փաստական հանգամանքների ամբողջական վերլուծությունից հետևում է, որ Ա.Ավետիսյանը գործել է ոչ թե միասնական և նախնական դիտավորությամբ, այլ յուրաքանչյուր դեպքում կրկին ծագած դիտավորությամբ¹⁵:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկման արդյունքները զննելու մասին արձանագրությամբ արձանագրված փաստական տվյալները, համաձայն որոնց՝ «Vivarobet.am» կայքէջն ուղեփակելուց հետո, այն շահագործող ընկերությունների ներկայացուցչից պահանջվող գումարն ամբողջությամբ չստանալով Ա.Ավետիսյանը հետաքրքրվել է «sport.totogaming.am» կայքէջի ուղեփակման հնարավորությամբ, ընդ որում քննարկելով նաև ուղեփակվող կայքէջի այլ տարբերակ¹⁶, բացառում են համակարգչային սաբոտաժներ կատարելը **նախապես** պլանավորված լինելու և միասնական հանցավոր մտադրության իրականացման ընդհանուր նպատակ ունենալու հանգամանքը: Ուստի, ամբաստանյալի մոտ մեկ միասնական դիտավորության առկայության մասին բողոքաբերի դիրքորոշումը չի բխում տվյալ գործի նյութերից:

16. Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ավետիսյանի կողմից երկու դրվագ համակարգչային սաբոտաժ, այն է՝ «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին պատկանող «www.

¹² Տե՛ս քրեական գործ, հատորներ 1-5-րդ:

¹³ Ապացույցների բավարարության չափանիշների վերաբերյալ մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումը:

¹⁴ Այդ առնչությամբ առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հակոբ Մարտիրոսյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԿԴ1/0006/01/15 որոշման 14-րդ կետը:

¹⁵ Շարունակվող հանցագործությանը բնորոշ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշների առնչությամբ, որոնցով այն տարանջատվում է հանցագործությունների իրական համակցությունից, առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հակոբ Մարտիրոսյանի* գործով վերը հիշատակված որոշման 12-րդ կետը:

¹⁶ Տե՛ս սույն որոշման 13.3-րդ կետը:

vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակումները կազմակերպելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը, հիմնավոր է:

II. Ամբաստանյալ Ա.Ավետիսյանի արարքում համակարգչային սաբոտաժի՝ դիտավորությամբ ծանր հետևանք առաջացնելու ծանրացնող հանգամանքի հատկանիշի առկայության հիմնավորվածությունը:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի համաձայն՝ «1. Համակարգչային տեղեկատվությունը կամ ծրագրերը ոչնչացնելը, ուղեփակելը (մեկուսացնելը) կամ ոչ պիտանի վիճակի բերելը, համակարգչային սարքավորումները շարքից դուրս բերելը կամ համակարգիչը, համակարգչային համակարգը, ցանցը կամ մեքենայական կրիչները վնասելը (նենգադուլը)՝

3. Սույն հոդվածի առաջին (...) մասով նախատեսված արարքները, որոնք դիտավորությամբ առաջացրել են ծանր հետևանքներ»:

Մեջբերված իրավանորմի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցակազմը նյութական է, և համակարգչային սաբոտաժը ենթակա է որակման քրեաիրավական նշված նորմով, եթե այդ արարքը դիտավորությամբ առաջացրել է ծանր հետևանքներ: Հետևաբար, քննարկվող ծանրացնող հանգամանքի առկայության կամ բացակայության հարցը ստուգելիս անհրաժեշտ է ոչ միայն հիմնական հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրող գործողություններից մեկը կատարելու արդյունքում ծանր հետևանքների առաջացումը, այլև ծանր հետևանքների առաջացումն անձի դիտավորության մեջ ընդգրկված լինելը: Այլ կերպ՝ հանցավորը պետք է գիտակցի արարքի ծանր հետևանքներ առաջացնելու փաստը, նախատեսի համակարգչային սաբոտաժի միջոցով ծանր հետևանքներ առաջացնելը և ցանկանա կամ գիտակցաբար թույլ տա դրանք: Հետևաբար, քննարկվող որակյալ հանցակազմը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ: Միևնույն ժամանակ, քննարկվող հանցանքն անձին կարող է մեղսագրվել միայն այն դեպքում, երբ հաստատվում է կատարված արարքի և վրա հասած հետևանքների միջև պատճառական կապի առկայությունը:

18. Սահմանադրական դատարանն իր որոշումներում և Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես կարևոր են համարել ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ օրենքում առկա գնահատողական բնույթ կրող եզրույթները կամ ձևակերպումներն իրենց մեկնաբանությունն ու հստակեցումն են ստանում դատարանի կողմից կոնկրետ գործի հանգամանքների հաշվառմամբ և գնահատվում են դատարանի իրավակիրառ հայեցողության լիազորությունների իրականացման շրջանակներում, որը պետք է լինի հնարավորինս հստակ, որոշակի և հիմնավորված¹⁷:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական օրենսգրքում ամրագրված «ծանր հետևանքներ» եզրույթն անհրաժեշտ է սահմանազատել «հանցագործությամբ պատճառված վնաս» եզրույթից. ծանր հետևանքը յուրաքանչյուր դեպքում հանդիսանում է հանցագործությամբ պատճառված վնաս, սակայն հանցագործությամբ պատճառված վնասը միշտ չէ, որ կարող է գնահատվել որպես ծանր հետևանք, ուստի դատական ակտ կայացնելիս դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է կատարի գործի կոնկրետ հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրություն՝ ծանր հետևանքի առկայության կամ բացակայության փաստը

¹⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ- 947 որոշման 8-րդ կետը, 2020 թվականի նոյեմբերի 24-ի թիվ ՍԴՈ-1561 որոշումը, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հմայակ Դավթյանի գործով 2013 թվականի մայիսի 8-ի ՇԴ/0126/01/12, Վարուժան Բալայանի գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ/0001/01/17 և Արմեն Վարդանյանի գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԿԴ3/0013/01/18 որոշումները:

պատճառաբանված եզրահանգումների տեսքով արձանագրելու համար: Այլ կերպ, այն սահմանափակված է կոնկրետ իրավիճակով և յուրաքանչյուր դեպքում իրավակիրառ պրակտիկան է կոչված որոշակիացնելու այն չափորոշիչները, որոնց դեպքում հանրորեն վտանգավոր արարքի արդյունքում առաջացած հետևանքները կարող են գնահատվել որպես ծանր կամ ոչ ծանր:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածով նախատեսված հանցագործության ծանրացնող հանգամանքը՝ ծանր հետևանքը, կարող է կրել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական բնույթ:

Այդպիսի հետևանք կարող են համարվել, ի թիվս այլնի, արտադրական կամ այլ բնույթի վթարը, աղետը, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացումը, փոփոխությունը, ուղեփակումը (մեկուսացում) կամ պատճենահանումը, տրանսպորտի աշխատանքի կամ արտադրական գործընթացի խաթարումը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների ու ձեռնարկությունների աշխատանքի խաթարումը, հեղինակագրկումը, մարդու իրավունքների և ազատությունների ոտնահարումը, նշված հետևանքներին համարժեք կամ համաբնույթ վտանգավորություն ներկայացնող այլ վնասը:

Նյութական վնասը կարող է արտահայտվել, օրինակ, անձանց առողջությանը վնաս պատճառելով (ֆիզիկական վնաս) կամ տեխնիկային կամ այլ գույքին վնաս պատճառելով (գույքային վնաս): Ընդ որում, նյութական վնասի դեպքում ծանր հետևանք կարող է համարվել առանձնապես խոշոր չափերի գույքային վնասը կամ համարժեք վտանգավորություն ներկայացնող վնասի այլ չափը¹⁸. հիշյալ շեմը չգերազանցող վնասի դեպքում, համակարգչային սաբոտաժի հետևանքով պատճառված նյութական վնասի՝ ծանր հետևանքների առաջացման հարցը գնահատելիս, անհրաժեշտ է գույքային վնասի դրամային արտահայտությունը համարել տուժողի սոցիալական դրությանը:

Գործնականում առանձնակի բարդություն է ներկայացնում կատարվածի արդյունքում ծանր հետևանքներ առաջացնելն արձանագրելն այն դեպքում, երբ այն ոչ նյութական բնույթ է կրում: Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ինքնին համակարգչային սաբոտաժի յուրաքանչյուր դեպքում պատճառվում է որոշակի վնաս, սակայն անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված վնասի առկայությունը դեռևս բավարար չէ համակարգչային սաբոտաժը քննարկվող ծանրացնող հանգամանքով որակելու համար, անհրաժեշտ է որպեսզի առաջացած հետևանքը լինի ծանր: Հետևաբար, ոչ նյութական վնասի դեպքում ծանր հետևանքների առաջացման հարցը գնահատելիս, անհրաժեշտ է հաշվի առնել համակարգչային տեղեկատվության արժեքավորությունը և դրա ծավալը, հասցված վնասի բնույթը, վնասակար հետևանքները վերացնելու համար պահանջված ժամանակի տևողությունը, տուժած օգտագործողների քանակը, հիմնարկների ու ձեռնարկությունների բնականոն գործունեության խափանման աստիճանը, ոտնահարված իրավունքների և ազատությունների բնույթը, դրանց ոտնահարման աստիճանն ու այլ հանգամանքները:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քրեական հետապնդման մարմինը գտել է, որ «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակման արդյունքում առաջացել են Ա.Ավետիսյանի և հանցակիցների դիտավորությամբ ընդգրկված ծանր հետևանքները՝ առաջադրված մեղադրանքում այդպիսիք ձևակերպելով հետևյալ կերպ.

¹⁸ Հարկ է նկատել, որ համապատասխան դիրքորոշումը համահունչ է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումներին:

տևական ժամանակով խափանվել են «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերը, որոնցից օգտվող տասնյակ հազարավոր հաճախորդներ զրկվել են հնարավորությունից օգտվել «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից մատուցվող ծառայություններից, ինչի հետևանքով ընկերությունների գործարար համբավին պատճառվել է ծանր վնաս, ինչպես նաև կազմալուծվել է հիշյալ ընկերությունների բնականոն աշխատանքը, որի հետևանքով այդ կազմակերպությունների՝ համապատասխանաբար 1284 և 419 աշխատակից տևական ժամանակով մատնվել են պարապուրդի¹⁹:

Առաջին ատյանի դատարանը դատաքննությամբ հետազոտված ապացույցների գնահատման արդյունքում ապացուցված է համարել «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակմամբ դրանք շահագործող «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար ծանր հետևանքներ առաջացնելու Ա.Ավետիսյանի դիտավորությունը՝ սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում որպես ծանր հետևանքներ դիտարկելով այն, որ վերոհիշյալ կայքէջերի աշխատանքը տևական ժամանակահատվածով խափանվել է և կազմալուծվել վերոգրյալ կազմակերպությունների բնականոն գործունեությունը²⁰:

Վերաքննիչ դատարանն էլ իր համաձայնությունն է արտահայտել Առաջին ատյանի դատարանի այս դիրքորոշման հետ՝ ընդգծելով, որ քննարկվող հոդվածի իմաստով ծանր հետևանք կարող է դիտարկվել նաև կազմակերպության բնականոն գործունեության կազմալուծումը: Տվյալ դեպքում տուժող ընկերությունների բնականոն գործունեությունը պայմանավորված է եղել ուղեփակված կայքէջերի անխափան աշխատանքով, ուստի դրանց ուղեփակումը և աշխատանքի տևական խափանումը, պետք է դիտարկել որպես ծանր հետևանք, քանի որ դրա արդյունքում խաթարվել է հիշյալ ընկերությունների բնականոն գործունեությունը²¹:

20. Սույն որոշման 18-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով նախորդ կետում վկայակոչված փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի արարքում համակարգչային սաբոտաժի՝ դիտավորությամբ ծանր հետևանքներ առաջացնելու որակյալ հանցակազմի հատկանիշների առկայությունն արձանագրելիս, ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել սույն գործով առանցքային նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Ա.Ավետիսյանին մեղսագրված ծանր հետևանքների արտաքին հատկանիշների դրսևորման հետևյալ ձևերին՝

- «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բնականոն գործունեության խաթարմանը,
- հիշյալ կազմակերպությունների գործարար համբավին ծանր վնաս պատճառված լինելուն²²:

Վերոհիշյալ փաստարկներից առաջինի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գործունեության անընդհատության խափանումը, ըստ Վճռաբեկ դատարանի, ինքնին բավարար չէ նրանց բնականոն գործունեությունը հաստատապես խաթարված համարելու

¹⁹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

²⁰ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը և քրեական գործի հատոր 13-րդ, թերթեր 58-115:

²¹ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

²² Տե՛ս սույն որոշման 19-րդ կետը:

համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, կազմակերպության բնականոն գործունեության բուն էությունը կանխորոշված է գործունեության, հետապնդվող իրավաչափ նպատակների և շահերի իրացման կայուն անհրաժեշտությամբ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ բնականոն գործունեությունը պետք է մեկնաբանել նեղ իմաստով՝ ներառելով մի կողմից պետության, մյուս կողմից աշխատակիցների, հաճախորդների և գործընկերների հանդեպ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը: Ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու հնարավորության բացակայության արդյունքում է խաթարվում կազմակերպության բնականոն գործունեությունը: Այլ խոսքով՝ կազմակերպության գործունեության անընդհատության խափանումը չի հավաստում բնականոն գործունեության խաթարումն այնքան ժամանակ, քանի դեռ չի հանգեցրել ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման անհնարինության: Հակառակ մեկնաբանության պարագայում ստացվում է, որ կազմակերպության գործունեության անընդհատության խափանումը յուրաքանչյուր դեպքում ինքնաբերաբար հանգեցնում է կազմակերպության բնականոն գործունեության խաթարման, ինչն անընդունելի է: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր նման իրավիճակում վարույթն իրականացնող դատավարական սուբյեկտը, ելնելով գործի կոնկրետ փաստական հանգամանքներից, պարտավոր է ողջամտության սահմաններում գնահատել կազմակերպության գործունեության խափանման աստիճանը՝ հաշվի առնելով սույն որոշմամբ վկայակոչված չափանիշները: Եթե կպարզվի, որ հանցավոր գործունեության արդյունքում առաջացել է կազմակերպության ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման անհնարինություն, ապա դա կարող է հիմք հանդիսանալ կազմակերպության բնականոն գործունեությունը խաթարված համարելու:

Տվյալ դեպքում, թեև Ա.Ավետիսյանի կողմից «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակմանն ուղղված գործողությունները կազմակերպելու հետևանքով տուժող ընկերությունները ժամանակավոր զրկվել են ծառայությունները մատուցելու հնարավորությունից, այնուամենայնիվ հիշյալ կայքէջերի ուղեփակումը տևել է՝ համապատասխանաբար մոտ 13 և 6 ժամ²³, մասսակար հետևանքները կարճ ժամանակահատվածում վերացվել են²⁴, իսկ կայքէջերի ուղեփակման հետևանքով հիշյալ ընկերությունների ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման անհնարինության առաջացման մասին վկայող փաստական տվյալներ սույն քրեական գործում առկա չեն: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրանքում ձևակերպված՝ համակարգչային սաբոտաժի հետևանքով տուժող կազմակերպությունների բնականոն գործունեության խափանման աստիճանը բնութագրող փաստական տվյալներն ինքնին բավարար չեն եզրահանգելու, որ Ա.Ավետիսյանի գործողությունների արդյունքում խաթարվել է տուժող կազմակերպությունների բնականոն գործունեությունը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ առաջադրված մեղադրանքում որպես ծանր հետևանքը բնութագրող փաստական տվյալ մատնանշված՝ համակարգչային սաբոտաժի արդյունքում առաջացած՝ «Վիվառո Բեթինգ» ու «Վիվառո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների՝ 1284 և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 419 աշխատակցի պարապորդի, ինչպես նաև նշված ընկերությունների ծառայություններից օգտվելու հնարավորությունից զրկված տասնյակ հազարավոր հաճախորդների մասին հետևությունը, վարույթն իրակա-

²³ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

²⁴ Տե՛ս սույն որոշման 13.1-րդ և 13.2-րդ կետերը:

նացնող մարմինը հիմնավորել է բացառապես հիշյալ ընկերությունների ներկայացուցիչների ցուցմունքներով և դիմումներով հայտնված տվյալներով²⁵: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինն իր այդ հետևությունը պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ չի հիմնավորել:

Վերոգրյալից ելնելով Վճռաբեկ դատարանը չափազանց ընդհանրական է համարում ստորադաս դատարանների կողմից հիմք ընդունված այն մոտեցումը, որ տուժող կազմակերպությունների կողմից շահագործվող հիշյալ կայքէջերի ուղեփակման և դրանց աշխատանքի տևական խափանման արդյունքում խաթարվել է այդ ընկերությունների բնականոն գործունեությունը, իսկ կազմակերպության բնականոն գործունեության խաթարումը որպես ծանր հետևանք չդիտարկելու բողոքաբերի դիրքորոշումը²⁶ չի համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի պահանջներին²⁷:

Անդրադառնալով տուժող կազմակերպությունների գործարար համբավին պատճառված վնասը որպես ծանր հետևանք դիտարկելուն, Վճռաբեկ դատարանը նախ իր անհամաձայնությունն է հայտնում բողոքի հեղինակի այն պնդմանը, թե տուժողի գործարար համբավին պատճառված վնասն առհասարակ չի կարող գնահատվել որպես ծանր հետևանք²⁸: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործարար համբավին պատճառված վնասը կարող է գնահատվել որպես ծանր հետևանք, երբ այն համապատասխանի հեղինակության կորստի հարաբերականորեն բարձր աստիճանի: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, ծառայության մատուցման անընդհատության խափանումը կարող է նաև վնասել շահույթ հետապնդող կազմակերպության հեղինակությանը, ինչը, սակայն ինքնին, գործարարության ոլորտում կազմակերպությանը տրված գնահատականների փոփոխության մասին վկայող այլ հանգամանքների բացակայության պայմաններում, չի կարող ազդել կազմակերպության գործարար հատկանիշների վրա այն աստիճան, որ գործարար համբավին պատճառված վնասը համարվի ծանր հետևանք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունն այս առնչությամբ չի համապատասխանում «մեղադրանքի» վերաբերյալ միջազգային և ներպետական պահանջներին ու Վճռաբեկ դատարանի կողմից *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշմամբ սահմանված չափանիշներին²⁹: Մասնավորապես, մեղադրանքի փաստական նկարագրությունը չի պարունակում այնպիսի փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեին հիմնավորված կերպով եզրահանգելու ծանր հետևանքի դրսևորման այդ ձևի առկայության մասին, այն է՝ մեղադրանքի բովանդակությունից հնարավոր չէ պատկերացում կազմել, թե հիշյալ կազմակերպությունների գործարար հատկանիշներն ինչպիսի փոփոխության են ենթարկվել և ինչպե՞ս է որոշվել, որ նրանց գործարար համբավին պատճառվել է ծանր հետևանք առաջացնող վնաս: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկնել, որ յուրաքանչյուր դեպքում արարքում քննարկվող հանցակազմի առկայությունը հավաստելու համար պետք է փաստել ոչ միայն ծանր հետևանք

²⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 54-59, 68, 95-97, հատոր 2, թերթեր 71-72, 81, հատոր 4, թերթեր 279-283, 297 և հատոր 5, թերթեր 49-54:

²⁶ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²⁷ Հարկ է նշել, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը, որոշակիացնելով համակարգչային սաբոտաժի արդյունքում առաջացած ծանր հետևանքների բնույթը՝ այդպիսին է դիտարկել նաև կազմակերպության գործունեության խաթարումը:

²⁸ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ կետը:

քի առկայությունը, այլև այն, թե տվյալ գործով կոնկրետ ինչում է վերջինս դրսևորվել:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նկատել, որ տուժող կազմակերպությունների գործարար համբավին պատճառված վնասը որպես ծանր հետևանք գնահատելու մասին մեղադրանքի կողմի հետևությունը հաստատող պատշաճ ապացույցների բավարար համակցություն սույն գործով առկա չէ:

Վերոգրյալ պայմաններում փաստելը, որ կայքէջերի ուղեփակման արդյունքում «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գործարար համբավին պատճառվել է ծանր հետևանք առաջացնող վնաս, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, վտանգում է արդար դատաքննության պահանջի պահպանման երաշխիքը:

21. Այսպիսով, սույն որոշման 18-րդ կետում արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով 19-20-րդ կետերում ներկայացված փաստական տվյալներն ու դրանց տրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը, չհերքելով Ա.Ավետիսյանի ոչ իրավաչափ արարքների արդյունքում «Վիվառո Բեթինգ», «Վիվառո Գեյմ» և «Ինտերլոտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին որոշակի վնաս պատճառելու փաստը, միևնույն ժամանակ, արձանագրում է, որ սույն գործով չի հիմնավորվել, որ Ա.Ավետիսյանի՝ հիշյալ ընկերությունների կողմից շահագործվող կայքէջերի ուղեփակմանն ուղղված գործողությունների արդյունքում առաջացել են այնպիսի հետևանքներ, որոնք կարող էին ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի իմաստով գնահատվել որպես ծանր:

22. Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «www.vivarobet.am» ու «www.sport.totogaming.am» կայքէջերի ուղեփակման արդյունքում ծանր հետևանքներ առաջացած լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

III. Ամբաստանյալ Ա. Ավետիսյանի կողմից մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևության հիմնավորվածությունը:

23. Պաշտպանի բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության ու գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարաններն Ա.Ավետիսյանի կողմից համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա. Ավետիսյանի կողմից համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը հաստատված, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են տուժող Ա. Թյությունջյանի ցուցմունքով, դյուրակիր համակարգիչը, էլեկտրոնային փոստարկղի նամակագրությունները, «facebook» սոցիալական կայքի՝ տուժող Ա. Թյությունջյանի անհատական էջի նամակագրությունը, Ա. Թյությունջյանի հեռախոսահամարի ելքային ու մուտքային հեռախոսազանգերի վերձանումները գննելու մասին արձանագրություններով և իրեղեն ու որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված փաստաթղթերով³⁰:

Տուժող Ա.Թյությունջյանի ցուցմունքն անարժանահավատ գնահատելու բողոքաբերի պնդման առնչությամբ հարկ է նկատել նաև, որ հիշյալ ցուցմունքի արժանահավատություն-

³⁰ Տե՛ս քրեական գործ, հատորներ 1-5-րդ:

նր հավաստվում է տուժող Ա.Թյությունջանի՝ «facebook» սոցիալական կայքի անհատական էջի նամակագրության և նրա հեռախոսահամարի մուտքային ու ելքային հեռախոսազանգերի վերծանումների գննությամբ արձանագրված տվյալների համակցությամբ, համաձայն որոնց՝ Ա.Թյությունջանին միջնորդել են հանդիպել ամբաստանյալի ծնող Աշոտ Ավետիսյանի հետ, Աշոտ Ավետիսյանն իր կողմից շահագործվող բջջային հեռախոսահամարից զանգահարել է Ա.Թյությունջանին³¹:

Նշվածի հետ մեկտեղ, բողոքաբերի՝ առգրավված դյուրակիր համակարգիչն անձանց անորոշ շրջանակի կողմից շահագործվելու փաստարկը ևս համոզիչ չի կարող գնահատվել: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ բողոքաբերի կողմից չեն մատնանշվել կոնկրետ փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին այն, մինչդեռ, ըստ գործում առկա փաստական տվյալների, դյուրակիր համակարգիչն առգրավվել է Ա.Ավետիսյանի անձնական խուզարկությամբ³², որում բացված էլեկտրոնային փոստարկղում առկա է եղել «dommoskvy@mail.ru» էլեկտրոնային փոստարկղի վերաբերյալ պատվերը կատարված լինելու մասին հաղորդակցություն³³, իսկ այն առգրավված համակարգչում բացված փոստարկղում սխալմունքի արդյունքում հայտնվելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկը կառուցված է ենթադրության վրա:

Նախնական համաձայնությամբ կատարված լինելու վերաբերյալ չփարատված կասկածի մասին բողոքաբերի դիրքորոշումն անընդունելի գնահատելու Վճռաբեկ դատարանի եզրահանգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու գործառույթը կատարող ավտոմատացված համակարգը ևս մարդու գործողության արդյունք է, ով նպատակ է հետապնդում այդ կերպ կատարել համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ոտնձգող հակաիրավական արարք(ներ), և պայմանավորված վտանգավորության աստիճանով, արարքների որոշ դրսևորման ձևերը քրեական օրենքով նախատեսված են հանցավոր ճանաչվող արարքների շրջանակում:

24. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանի կողմից մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը հիմնավոր է:

25. Հիմք ընդունելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները, Ա.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով մեղավոր ճանաչելով, թույլ են տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը, համաձայն 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 397-րդ հոդվածի, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Միևնույն ժամանակ, սույն որոշման 16-րդ, 22-րդ և 24-րդ կետերում արված եզրահանգումների լույսի ներքո, մի կողմից նկատի ունենալով գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջի ապահովման անհրաժեշտություն³⁴, մյուս կողմից՝ հաշվի առնելով, որ ստորադաս դատարանների կողմից հաստատված փաստական հանգամանքները հնա-

³¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 171-172 և 189:

³² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 45:

³³ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 90-91:

³⁴ Անձի՝ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի առնչությամբ առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լիլիթ Վարդանյանի և Ջարիսե Այվազյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0016/01/14 որոշումը:

րավորություն են տալիս փոփոխելու կայացված դատական ակտերը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով թույլ տրված խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը ստորադաս դատարանների դատական ակտերը փոփոխելն է:

25.1. Ուստի հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 27-ի դատական ակտերը պետք է բեկանել, Ա.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքը վերաորակել նույն օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 1-ին մասով և 38-253-րդ հոդվածի 1-ին մասով:

Միևնույն ժամանակ, Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը վերաորակելու պայմաններում, առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, ուստի հաշվի առնելով վճռաբեկ վերանայման սահմանների³⁵ և քրեական հետապնդումը բացառող՝ վերաբերելի հիմքի³⁶ առնչությամբ ձևավորված նախադեպային իրավունքը, ինչպես նաև այն, որ վերաորակված մեղադրանքով օրենքով սահմանված վաղեմության ժամկետները ենթակա են հաշվարկման 2015 թվականի նոյեմբերի 10-ից՝ յուրաքանչյուր հանցագործության համար ինքնուրույն³⁷, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիշյալ արարքների՝ որպես ոչ մեծ ծանրության հանցագործությունների³⁸ համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը³⁹ լրացել է 2017 թվականի նոյեմբերի 10-ին, իսկ այդ պահի դրությամբ, Ա.Ավետիսյանի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ առկա չի եղել: Հետևաբար, վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 1-ին մասով և 38-253-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

25.2. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանի կողմից կատարված՝ 2003 ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքի վրա, հետադարձության կարգով պետք է տարածել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները:

Մասնավորապես, նշված օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «2. Արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պարտիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Նշված դեպքում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնց

³⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Մխիթար Էլոյանի և այլոց գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը:

³⁶ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Անահիտ Սաղաթելյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10, Սիրաժ Ղամբարյանի և այլոց գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, Հրանտ Մազմանյանի գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14, Ֆարիդա Ավագիմյանի գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱԿԴ2/0016/01/14, Անդրանիկ Գրիգորյանի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԴ/0180/01/15 որոշումները:

³⁷ Մանրամասն տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Սիրաժ Ղամբարյանի և այլոց գործով վերը նշված որոշման 21-րդ կետը և սույն որոշման 10-րդ կետը:

³⁸ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը, 19-րդ հոդվածի 2-րդ մասը և 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

³⁹ Անձի վիճակը վաղաբացնող օրենքին հետադարձ ուժ չտալու օրենսդրական պահանջի համաձայն՝ ամբաստանյալ Ա.Ավետիսյանի նկատմամբ կիրառելի է հանցավոր արարքը կատարելու պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը:

վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտնող եզրափակիչ դատավարական ակտ: (...):»:

Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ պատիժը մեղմացնող օրենսդրությանը հետադարձ ուժ տալու համար վճռորոշ նշանակություն ունի այն հանգամանքը, թե մինչ այդ օրենսդրությունն ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձանց վերաբերյալ առկա է արդյո՞ք օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ, թե ոչ: **Եթե նման ակտ առկա չէ, ապա պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ**, այսինքն տարածվում է մինչ այդ օրենսդրությունն ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձանց վրա:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն՝ «1. Համակարգչում, համակարգչային համակարգում, ցանցում կամ մեքենայական կրիչների վրա պահվող տեղեկատվությունն առանց թույլտվության պատճենահանելը կամ այլ կերպ դրան ապօրինի տիրանալը կամ համակարգչային կապի միջոցների օգտագործմամբ հաղորդվող տեղեկատվությունը որսալը՝

(...)

3. Սույն հոդվածի առաջին (...) մասով նախատեսված արարքները, որոնք՝

(...)

2) կատարվել են մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

(...)

պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով»:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն. «1. Համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող ընդհանուր օգտագործման համար չնախատեսված տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության որսալը կամ դրան տիրանալը, որը կատարվել է այդ տվյալն օգտագործելու կամ այլ անձանց օգտագործման համար հասանելի դարձնելու կամ այլ կերպ իրացնելու նպատակով՝

(...)

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

(...)

6) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ

(...)

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Վճռաբեկ դատարանը նախ և առաջ արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը ներառում է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի պար-

տադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալներ⁴⁰: Միաժամանակ, նախկին և գործող քրեական օրենսգրքերով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ համակարգչային տվյալներին ապօրինի տիրանալու համար նախատեսված պատիժների համեմատական վերլուծության հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր ընդունված քրեական օրենսդրությունը համարվում է պատիժը մեղմացնող, քանի որ նշված արարքի համար որպես պատիժ նախատեսում է ազատազրկում՝ երկուսից հինգ տարի ժամկետով, մինչդեռ հանցանքը կատարելու պահին գործող օրենքով սահմանված էր ազատազրկում՝ չորսից տասը տարի ժամկետով: Հետևաբար, նոր օրենսդրության գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը հանցանք կատարած անձի վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանին 2003 թվականի ապրիլի 18-ի ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքը պետք է որակել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

Պատժի նշանակման համաչափության վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումների⁴¹ լույսի ներքո ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը, վերլուծելով Ա.Ավետիսյանի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև հաշվի առնելով Ա.Ավետիսյանի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունները, այն դիտարկելով ամբաստանյալի անձը բնութագրող այլ հանգամանքների, այն է՝ նախկինում դատապարտված չլինելու, դրական բնութագրվելու, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության⁴², ընտանեկան դրության⁴³ համատեքստում, Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ նրա նկատմամբ այդ հոդվածով պետք է պատիժ նշանակել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Վերոգրյալի հետ մեկտեղ՝ հաշվի առնելով, որ Ա.Ավետիսյանին մեղսագրվող արարքը կատարվել է մինչև 2018 թվականի հոկտեմբերի 21-ն ու Ա.Ավետիսյանի նկատմամբ՝ «էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքը կիրառելու արգելքները բացակայում են, ուստի նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ՝ Ա.Ավետիսյանը նշանակված պատժից ենթակա է ազատման:

26. Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ Ա.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավն անհրաժեշտ է վերացնել և գրավի գումարը վերադարձնել գրավատուին: Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 163-րդ հոդվածի պահանջն առ այն, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է դատավճռով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժող «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցչի քաղաքացիական հայցը պետք է թողնել առանց քննության: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու պայմաններում,

⁴⁰ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁴¹ Տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ *Ռուզաննա Գևորգյանի* գործով 2022 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԱՐԴ/0008/01/20 որոշման 24-րդ կետը և այդ որոշմամբ վկայակոչված վերաբերելի որոշումները:

⁴² Տե՛ս սույն որոշման 11.1-րդ կետը:

⁴³ Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

գույքի վրա դրված կալանքը պետք է վերացնել⁴⁴: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, որը դատարանի կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով: Վերոգրյալով պայմանավորված, Վճռաբեկ դատարանը բողոքաբերի՝ սույն որոշման 5.1-րդ կետում մատնանշված փաստարկին անդրադառնալն առարկայազուրկ է համարում:

Հաշվի առնելով, որ սույն գործով ձևավորված դատական ծախսերն առաջացել են համակարգչային սաբոտաժի դրվագներով, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ դատական ծախսերի հարցն ընդգրկված չէ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում դատարանի կողմից լուծման ենթակա հարցերի շրջանակում, հետևաբար քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում դատական ծախսերը ենթակա չեն բռնագանձման, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 1-ին մասով և 38-253-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու պայմաններում, դատական ծախսերն ամբաստանյալ Ա.Ավետիսյանի վրա չեն կարող դրվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով, 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 27-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-253-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքը վերաորակել նույն օրենսգրքի 38-253-րդ հոդվածի 1-ին մասով ու 38-253-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու պատճառաբանությամբ:

3. Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանի նկատմամբ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով պատիժ նշանակել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ժամկետով:

«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համա-

⁴⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Անդրեասյանի գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0200/01/13 որոշման 20.2-րդ կետը:

ներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանին ազատել պատժից:

4. Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը վերացնել և վճարած գումարը վերադարձնել գրավատուին:

Տուժող «Վիվառո Բեթինգ» և «Վիվառո Գեյմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցչի քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանին պատկանող անշարժ և շարժական գույքի վրա դրված կալանքը վերացնել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված՝ այն Ավթանդիլ Աշոտի Ավետիսյանից բռնագանձման ենթակա չլինելու հիմքով:

5. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով թողնել անփոփոխ:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ
Լիլիթ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության քրեական դատարանի նախագահ
Մնացական ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի նախագահ
Նապոլեոն ՕՀԱՆՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ վարչական դատարանի դատավոր
Արթուր ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ սնանկության դատարանի դատավոր
Արսեն ԲԱԲԱՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Արթուր ԱԴԱՄՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր
Արշակ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

*մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ
և մասնագիտական արդյունավետ գործունեություն:*

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի
նախագահի ժամանակավոր պաշտոնակատար
Մամիկոն ԴՐՄԵՅԱՆԻ ծննդյան 65-ամյակը,

ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
պալատի դատավոր
Ստեփան ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ծննդյան 65-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Ռուզաննա ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ծննդյան 65-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր
Սիմիզար ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ծննդյան 65-ամյակը,

ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Ջոյա ՋԱՔԻՆՅԱՆԻ ծննդյան 65-ամյակը,

*մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ
և վաստակաշատ հանգիստ:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:

Հոդվածը տպագրության է ընդունվում միայն գրավոր կարծիքի կամ երաշխավորության առկայության դեպքում:

«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- հոդվածի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
- հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը, հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
- տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
- հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
- անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
- ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
- հիմնական տառաչափը՝ 12,
- միջտողային հեռավորությունը՝ 1.5,
- հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
- հոդվածը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա մյուս երկու լեզուներով ամփոփում և երեք լեզվով մինչև 10 բանալի բառեր,
- մերժված հոդվածը չի վերադարձվում,
- հոդվածը տրամադրել էլեկտրոնային և տպագիր եղանակով: